



ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ
թողարկողի ֆիրմային անվանումը

Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպա-իրավական ձևը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան փողոց 10, հեռ.(0479) 4-28-58, ֆաքս. (0479) 7-42-14, ինտերնետային կայք www.artsakhhpp.com, էլ.փոստ artsakhhek@mail.ru

գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, ինտերնետային կայք, էլեկտրոնային փոստ)

Արժեթղթերի դասը՝ *հասարակ անվանական բաժնետոմս*

Արժեթղթերի ձևը՝ *ոչ փաստաթղթային*

Արժեթղթերի քանակը՝ *1,400,000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատ*

Արժեթղթերի անվանական արժեքը՝ *1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ*

Ընդհանուր անվանական արժեքը (արժույթը)՝ *1,400,000,000 (մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ*

Տեղաբաշխման ձևը՝ *չերաշխավորված*



«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
տեղաբաշխողի անվանումը

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վ.Սարգսյան 10, հեռ. (374 10) 54-07-28 ֆաքս. (374 10) 54-06-27, ինտերնետային կայք www.armswissbank.am, էլ. փոստ info@armswissbank.am

գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, ինտերնետային կայք, էլեկտրոնային փոստ)








«ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից ազդագրի գրանցումը չի հավաստում ներդրման ապահովությունը, ներկայացված տեղեկատվության ճշտությունը կամ իսկությունը»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	4
Ընդհանուր դրույթներ	4
Ընկերության և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	4
Ընկերությանը և բաժնետոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	6
Ընկերության տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	8
Ընկերության աուդիտն իրականացնող անձի ինքնության մասին համառոտ տեղեկություններ	8
Ընկերության կառավարման մարմինները	9
Առաջարկվող բաժնետոմսերի հիմնական վիճակագրական տվյալները	10
Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը	10
Ամփոփ ֆինանսական տվյալներ	13
ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	16
Ռիսկային գործոններ	16
Հիմնական տեղեկատվություն	17
Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող բաժնետոմսերի հետ	18
Առաջարկի ժամկետը և պայմանները	21
Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	26
Վաճառող բաժնետերերը	27
Թողարկման և առաջարկի ծախսերը	27
Լրացուցիչ տեղեկատվություն	27
ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	28
Անկախ աուդիտորները	28
Ռիսկային գործոններ	28
Տեղեկատվություն ընկերության մասին	30
Բիզնեսի նկարագիրը	34
Հիմնական միջոցները	38
Կապիտալ ռեսուրսները (պասիվները)	39
Հետագոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները	41
Արտոնագրերը և լիցենզիաները	42
Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը	42
Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	44
Վարձատրությունները և պարզևավճարները	60
Կառավարման մարմինների գործունեությունը	60
Աշխատակիցները	61
Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք	61
Փոխկապված անձանց հետ գործարքները	62
Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	62
Լրացուցիչ տեղեկատվություն	63
Էական պայմանագրեր	70
Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	70
Այլ տեղեկատվություն	70
Մասնակցություն այլ անձանց կապիտալում	71
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	72

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողմներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»: Ամփոփաբերքի կազմման համար պատասխանատու անձ է «ԱՐՅԱՆ ՀԷԿ» ԲԲԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) Գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյանը և գլխավոր հաշվապահ Արայիկ Գավթյանը:

<u>Վահրամ Բեգլարյան</u> անուն, ազգանուն	<u>Գլխավոր Տնօրեն,</u> <u>Տնօրենների խորհրդի անդամ</u> պաշտոն	 ստորագրություն	<u>30.09.10թ</u> ամսաթիվ
<u>Սպարտակ Թևոսյան</u> անուն, ազգանուն	<u>Տնօրենների խորհրդի նախագահ</u> պաշտոն	 ստորագրություն	<u>30.09.10թ</u> ամսաթիվ
<u>Կառլեն Պետրոսյան</u> անուն, ազգանուն	<u>Տնօրենների խորհրդի անդամ</u> պաշտոն	 ստորագրություն	<u>30.09.10թ.</u> ամսաթիվ
<u>Միհրան Գալստյան</u> անուն, ազգանուն	<u>Տնօրենների խորհրդի անդամ</u> պաշտոն	 ստորագրություն	<u>30.09.2010թ.</u> ամսաթիվ
<u>Մերուժան Բաբայան</u> անուն, ազգանուն	<u>Տնօրենների խորհրդի անդամ</u> պաշտոն	 ստորագրություն	<u>30.09.2010թ.</u> ամսաթիվ
<u>Արայիկ Գավթյան</u> անուն, ազգանուն	<u>Գլխավոր հաշվապահ</u> անուն, ազգանուն	 ստորագրություն	<u>30.09.10թ.</u> ամսաթիվ
<u>Գևորգ Մաչանյան</u> անուն, ազգանուն	<u>Տեղաբաշխողի գործադիր տնօրեն</u> պաշտոն	 ստորագրություն	<u>30.09.10</u> ամսաթիվ

Ստորագրությունները վավերացնում են՝

<u>Վահրամ Բեգլարյան</u> անուն, ազգանուն	<u>Գլխավոր Տնօրեն</u> պաշտոն	 ստորագրություն	<u>30.09.10թ</u> ամսաթիվ
--	---------------------------------	--	-----------------------------

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ընդհանուր դրույթներ

Սույն ամփոփաթեթը դիտվում է որպես բաժնետոմսերի ազդագրի (այսուհետև՝ Ազդագիր) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող բաժնետոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթեթի կազմման համար պատասխանատու անձը ամփոփաթեթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ամփոփաթեթի կազմման համար պատասխանատու անձ է Ընկերության Գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյանը և գլխավոր հաշվապահ Արայիկ Դավթյանը:

Ընկերության և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Ընկերության անվանումն է՝

	Լրիվ ֆիրմային անվանում	Կրճատ անվանում
հայերեն	«ԱՐՅԱԽ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն	«ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ
ռուսերեն	Открытое Акционерное Общество «АРЦАХ ГЭК»	ОАО «АРЦАХ ГЭК»
անգլերեն	“ARTSAKH HEK” Open Joint Stock Company	“ARTSAKH HEK” OJSC

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (այսուհետև՝ ԼՂՀ), ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան փողոց 10: Կապի միջոցներն են՝ հեռ. (0479) 4-28-58, ֆաքս. (0479) 7-42-14, ինտերնետային հասցե. www.artsakhhep.com, էլ. փոստ. artsakhhek@mail.ru: Ընկերությանն առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել Ընկերության գլխավոր հաշվապահ Արայիկ Դավթյանին (հեռ.՝ (0479) 4-28-58, ֆաքս. (0479) 7-42-14, էլ.փոստ artsakhhek@mail.ru):

Ընկերության կանոնադրական կապիտալը 5,962,074,000 (հինգ միլիարդ ինը հարյուր վաթսուներկու միլիոն յոթանասուչորս հազար) ՀՀ դրամ է, որը կազմված է 5,962,074 (հինգ միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար յոթանասուչորս) հատ հասարակ անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերից: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 ՀՀ դրամ:

Ընկերությունը հիմնադրվել է ԼՂՀ-ի կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի N 484 որոշմամբ (պետական գրանցում է ստացել 2007թ-ի դեկտեմբերի 12-ին «ԱՐՅԱԽ ՀԷԿ» անվանումով և «փակ բաժնետիրական ընկերություն» կազմակերպա-իրավական ձևով), որի համաձայն Ընկերության 100% բաժնետոմսերի սեփականտեր էր ԼՂՀ-ը՝ ի դեմս Կառավարության:

«ԱՐՅԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է «ԱՐՅԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ-ի առանձնացման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան: ԼՂՀ Կառավարության 2008թ. մայիսի 13-ի ««ԱՐՅԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» թիվ 360 որոշման համաձայն «ԱՐՅԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման միջոցով վերակազմակերպվել է «ԱՐՅԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության: 2008թ-ի հունիսի 9-ից Ընկերությունը կրում է «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ ֆիրմային անվանումը և կազմակերպա-իրավական ձևը:

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որն էլ հանդիսանում է Ընկերության շահույթի ստացման միակ աղբյուրը:

Ընկերությունը ԼՂՀ տնտեսության համար ունի ռազմավարական և սոցիալ-տնտեսական նշանակություն: Ընկերության ռազմավարական նպատակը ժամանակակից

սարքավորումներով հագեցած նոր հիդրոէլեկտրակայանների (այսուհետև՝ ՀԷԿ-երի) շահագործման ճանապարհով Ընկերության արտադրական հնարավորությունների ընդլայնումն է, որն ուղղված կլինի ԼՂՀ-ի՝ էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկի ամբողջությամբ բավարարմանը և էլեկտրաէներգիայի արտահանմանը:

Ընկերության գործունեության ռազմավարական ուղղություն է արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալների ընդլայնումը ի հաշիվ նոր արտադրական պոտենցիալի ստեղծման և միավոր էլեկտրաէներգիայի արտադրության համար ջրի տեսակարար ծախսի իջեցման: Մասնավորապես, 2010թ-ին կանխատեսվում է Ընկերության կողմից արտադրված էլեկտրաէներգիայի շուրջ 161.25 մլն ԿՎտ/ժամ ծավալ (ըստ էության, 2010թ-ին Ընկերությունը պատրաստ է բավարարել ԼՂՀ-ի էլեկտրաէներգիայի պահանջարկի ավելի քան 68%-ը): Պահանջարկի մնացած մասը բավարարվում է ՀՀ-ից ներմուծված էլեկտրաէներգիայի հաշվին:

Ներկայումս էլեկտրաէներգիայի արտադրությունն Ընկերությունն իրականացնում է Սարսանգի և Թրդե-1 ՀԷԿ-երի միջոցով:

Ընկերության հիմնական ակտիվը Սարսանգի ՀԷԿ-ն է, որը կառուցվել է 1976թ. ԼՂՀ հիմնական գետի՝ Թարթառի վրա և համարվում է նախկին ԽՍՀՄ լավագույն և սարքավորումներով առավելագույնս հագեցած ՀԷԿ-երից մեկը:

Սարսանգի ՀԷԿ-ը տեղակայված է Սարսանգի ջրամբարի վրա: Վերջինս ունի 500 մլն մ³ արդյունավետ ծավալ: Ամբարտակի բարձրությունը և լայնությունը կազմում են համապատասխանաբար 730մ և 550մ, որը նույնիսկ եվրոպական երկրների շարքում համարվում է ամենաբարձրից մեկը:

2010թ-ի ապրիլին շահագործման է հանձնվել Թրդե-1 ՀԷԿ-ը, և Ընկերությունը այսօր իրականացնում է լայնածավալ ներդրումներ երեք ՀԷԿ-երի՝ Մատաղիս-1, Մատաղիս-2, Թրդե-2, կառուցման ուղղությամբ: «ԼՂՀ ջրային պաշարների յուրացում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2011թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ավարտին հասցնել կառուցվող ՀԷԿ-երի շինարարական աշխատանքները:

Թրդե-1 ՀԷԿ-ի շինարարության ծրագրի արժեքը կազմել է շուրջ 832.5 մլն ՀՀ դրամ, որն իրականացվել է բաժնետոմսերի առաջին տեղաբաշխումից ներգրավված սեփական միջոցների հաշվին:

Ստորև ներկայացվում են Մատաղիս-1, Մատաղիս-2, Թրդե-2 ՀԷԿ-երի շինարարության ծրագրերի նախնական արժեքները և դրանց կատարողականները 30.06.2010թ-ի դրությամբ:

Աղյուսակ 1. ՀԷԿ-երի շինարարության ծրագրերի նախնական արժեքները և դրանց կատարողականները.

<i>Ցուցանիշներ</i>	<i>Թրդե 2</i>	<i>Մատաղիս 1</i>	<i>Մատաղիս 2</i>	<i>Ընդամենը</i>
Ծրագրի նախնական արժեքը, մլն ՀՀ դրամ	2000	2900	2100	7000
Ծրագրի կատարողական, մլն ՀՀ դրամ	850	2500	1300	4650

Աղբյուրը՝ «ԱՐՅԱՆ ՀԷԿ» ԲԲԸ

Նոր ՀԷԿ-երի շինարարության ծրագիրը 30.06.2010թ-ի դրությամբ կատարվել է 66.4%-ով, ընդ որում Մատաղիս-1 ՀԷԿ-ի շինարարության ծրագիրը, որի արժեքը գնահատվում է 2,900,000,000 ՀՀ դրամ, կատարվել է ավելի քան 86%-ով:

Ստորև ներկայացվում են Թրդե 1, Թրդե-2, Մատաղիս-1, և Մատաղիս-2 ՀԷԿ-երի տեխնիկական ցուցանիշները:

Աղյուսակ 2. ՀԷԿ-երի տեխնիկական ցուցանիշները

<i>Բնութագրեր</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Թրդե ՀԷԿ-1</i>	<i>Թրդե ՀԷԿ-2</i>	<i>Մատաղիս ՀԷԿ-1</i>	<i>Մատաղիս ՀԷԿ-2</i>
Գրվածքային հզորություն	ՄՎտ	3	5.9	4.8	3
Էլ. էներգիայի միջին քազմամյա արտադրանքը	մլն ԿՎտ/ժամ	16.5	24.82	29.2	18.2
Հաշվարկային ճնշումը	մ	236.4	355.5	19.5	11.7



Հաշվարկային ելքը	մ ³ /վրկ	2	2	30	30
Տարեկան ջրհոսքի ծավալը	մլն մ ³	33.76	28.54	632.4	632.4
Հիդրոագրեգատների թիվը	հատ	3	2	3	3
Գերիվացիոն խողովակաշարի երկարությունը	կմ	5	5	0.2	0.02
Գերիվացիոն խողովակաշարի տրամագիծը	հստ/մմ	1020/1000	1020	3*1600/3*2520	3*2520

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Նշված ՀԷԿ-երի կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքներն իրականացվում են «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից: Նշված ՀԷԿ-երի շինարարության ավարտից հետո Ընկերությունն ձեռնամուխ կլինի Թրդե-3 ՀԷԿ-ի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստմանն ու շինարարությանը:

Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է ներքին շուկայում: Արտադրված էլեկտրաէներգիան Ընկերությունը ֆիքսված սակագնով վաճառում է ԼՂՀ էլեկտրաէներգիայի շուկայի օպերատոր՝ «Արցախէներգո» ՓԲԸ-ին, իսկ 2010թ-ի հունիսի 15-ից նաև «ԷՅ-Ի-ՋԻ» ՍՊԸ-ին, որոնք ունեն ԼՂՀ տարածքում էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման լիցենզիա: Վաճառքը իրականացվում է համաձայն առքուվաճառքի պայմանագրի՝ գրանցված ԼՂՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից (այսուհետև՝ Հանձնաժողով): Վաճառքի սակագները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

2010թ-ի հուլիսից Սարսանգի ՀԷԿ-ի արտադրանքի համար գործում է 9 դրամ/ԿՎտ/ժամ, իսկ Թրդե-1 ՀԷԿ-ի համար՝ 18 դրամ/ԿՎտ/ժամ սակագինը:

Ընկերությունը էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում մրցակիցներ չունի: ԼՂՀ-ում էլեկտրաէներգիա արտադրող միակ կազմակերպությունը «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ն է:

Ընկերությունը որևէ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերի և միությունների չի անդամակցում:

ԼՂՀ-ում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, հիմնարկներ, ինչպես նաև դուստր ընկերություններ:

Ընկերությանը և բաժնետոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Գոյություն ունեն մի շարք ռիսկային գործոններ, որոնք հատուկ են Ընկերությանը և նրա գործունեության ոլորտին և ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են բացասական ազդեցություն ունենալ թողարկողի և նրա բաժնետոմսերի գնի վրա:

Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթը և դրանցից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից:

Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել Ընկերության գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը:

Ռիսկերի հիմնական տեսակներն են՝

- Քաղաքական ռիսկեր. ԼՂՀ քաղաքական դաշտում ցանկացած բացասական փոփոխություն, հատկապես այնպիսի, որը կարող է ազդեցություն ունենալ ԼՂՀ քաղաքական կայունության վրա կամ կասեցնել ընթացիկ բարեփոխումները, կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև Ընկերության գործունեության և բաժնետոմսերի շուկայական գնի վրա:
- Անցումային շուկաների ռիսկ. ԼՂՀ-ի նման անցումային տնտեսություններով հետաքրքրվող ներդրողները պետք է տեղյակ լինեն, որ այսպիսի շուկաները հակված են ավելի մեծ ռիսկի, քան զարգացման ավելի բարձր մակարդակում գտնվող շուկաները:
- Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկ. ԼՂՀ իրավական դաշտում օրենսդրական բարեփոխումների գործընթացը դեռևս չի ավարտվել: Այս

բարեփոխումների ճանապարհին օրենսդրական համակարգում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հետագայում կարող են դառնալ անորոշության լրացուցիչ գործոն:

- Բնակլիմայական պայմանների ռիսկեր. Ընկերության գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ բնակլիմայական պայմաններն և հատկապես գետերի ջրհոսքի ծավալները էական ազդեցություն ունեն նրա գործունեության վերջնական արդյունքների վրա: Ջրայնության նվազումը կարող է հանգեցնել Ընկերության հասույթի կրճատմանը և, հետևաբար, ֆինանսական այլ ցուցանիշների էական վատթարացմանը:
- Ռիսկեր, որոնք կապված են Ընկերության կողմից արտադրության գործընթացում օգտագործվող սարքավորումների և այլ նյութա-տեխնիկական ռեսուրսների գների բարձրացմամբ:
- Արժուքային ռիսկ. Այս ռիսկի ազդեցությունը մեծանում է միայն օտարերկրյա ընկերություններից սարքավորումների ձեռք բերման շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման և Ընկերության կողմից ստացված բանկային վարկերի (որոնք արտահայտված են արտարժույթով) սպասարկման ժամանակահատվածում:
- Գնաճի ռիսկ. գնաճի մակարդակի աճը կարող է հանգեցնել տոկոսադրույքների մակարդակի աճին՝ դրա հետ կապված ռիսկերով հանդերձ՝ վճարման ենթակա տոկոսագումարների իրական արժեքի աճ, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ինքնարժեքի աճ (էներգակիրների արժեքի, տրանսպորտային ծախսերի, աշխատավարձերի և այլն, մեծացման հետ կապված), ներդրումային ծրագրերի իրացմանն ուղղված միջոցների իրական արժեքի նվազում և այլն:
- Անհատափոխարենի ուժի ի հայտ գալու ռիսկ (ֆորս-մաժոր). Ընկերության գործունեության վրա ուղղակի բացասական ազդեցություն կարող են ունենալ նաև ֆորս-մաժորային ռիսկերը: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները և այլն, որոնք դուրս են Ընկերության վերահսկողությունից:
Ինչ վերաբերում է առաջարկվող բաժնետոմսերում ներդրումների հետ կապված շուկայական ռիսկին, ապա առկա են տոկոսադրույքային, արժույթային և բաժնետոմսերի գների փոփոխության հետ կապված ռիսկային գործոններ:

- Առաջարկվող բաժնետոմսերը, այնպես ինչպես նախկինում Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը գնանշվելու և վաճառվելու են ՀՀ դրամով, հետևաբար, դրամի փոխարժեքի փոփոխությունները կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ բաժնետոմսերի գների կամ նրանց ակնկալվող եկամուտների վրա:
- Տոկոսադրույքների փոփոխության ռիսկ. քանի որ բաժնետոմսերի շուկայական գինը, որպես կանոն, ուղիղ համեմատական կախվածության մեջ է գտնվում Ընկերության կողմից ստացվող շահույթի, այդ թվում՝ բաժնետոմսերի դիմաց ստացվող կամ ակնկալվող շահութաբաժինների մեծությունից և հակադարձ համեմատական կախվածության մեջ՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունից, արդյունքում՝ շուկայում տոկոսադրույքների բարձրացումը կարող է հանգեցնել բաժնետոմսերի գների նվազմանը:
- Ֆոնդային ռիսկ. բաժնետոմսերի շուկայում գների անբարենպաստ փոփոխությունների արդյունքում կորուստների ռիսկ, որը ներառում է բաժնետոմսերի գների փոփոխությունը և շահութաբաժնային վճարումների չափի փոփոխությունը:
- Իրազվելիության ռիսկ. Բաժնետոմսերի ցածր իրացվելիության ռիսկը պայմանավորված է կապիտալի շուկայի թերզարգացվածությամբ, որի արդյունքում բաժնետոմսերը իրացնելու դեպքում ներդրողը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Այս ռիսկի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով Ընկերությունը ձեռնարկելու է անհրաժեշտ միջոցառումներ: Ընկերությունը բաժնետոմսերը ցուցակելու է «ՆԱՍԳԱԸ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ի ցուցակման B մակարդակում (ինչպես նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը) և միաժամանակ, շուկա ստեղծողի միջոցով ապահովելու է ֆոնդային բորսայում բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումների կազմակերպումը (նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի շուկա

- ստեղծող է հանդիսանում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետև նաև՝ Բանկ):
- Ինֆլյացիոն ռիսկ. Այս ռիսկը հիմնականում պայմանավորված է բաժնետոմսերում ներդրումներից ակնկալվող եկամուտների արժեզրկման հետ՝ իրական գնողունակության տեսանկյունից:

Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ նշված գործոնների բացասական ազդեցությունները նվազեցնելու համար: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության վերահսկողությունից դուրս են, այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

Ընկերության տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերության կանխատեսումների համաձայն նոր ՀԷԿ-երի շահագործման պայմաններում Ընկերությունը 2011 թվականի համեմատությամբ 2012թ-ից նախատեսում է արտադրել տարեկան 29.5մլն ԿՎտ/ժամ-ով ավել էլեկտրաէներգիա և արդյունքում բավարարել ԼՂՀ-ի՝ էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկի մոտ 96%-ը: Ստորև ներկայացված է Ընկերության շահույթի կանխատեսումները՝ 2011-2015թթ-երի համար:

Աղյուսակ 3. Ընկերության շահույթի կանխատեսումը 2011-2015թթ-երի համար

	2011	2012	2013	2014	2015
Հասույթ, հազար ՀՀ դրամ	2,275,920	2,806,920	2,806,920	2,806,920	2,806,920
Ինքնարժեք, հազար ՀՀ դրամ	391,556	428,659	463,402	501,439	542,981
Ամորտիզացիա, հազար ՀՀ դրամ	200,000	250,000	250,000	250,000	250,000
Համախառն եկամուտ, հազար ՀՀ դրամ	1,684,364	2,128,261	2,093,518	2,055,481	2,013,939
Վարչական ծախսեր, հազար ՀՀ դրամ	86,369	101,093	118,652	139,612	164,655
Գործառնական շահույթ, հազար ՀՀ դրամ	1,597,995	2,027,168	1,974,866	1,915,869	1,849,284
Ֆինանսական ծախսեր, հազար ՀՀ դրամ	8,000	8,500	9,000	9,500	10,000
Չուտ շահույթ նախքան շահութահարկի գծով ծախսերի նվազեցումը, հազար ՀՀ դրամ	1,589,995	2,018,668	1,965,866	1,906,369	1,839,284
Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսերի նվազեցումից հետո, հազար ՀՀ դրամ	1,510,495	1,917,735	1,867,573	1,811,051	1,747,462
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով	205	260	254	246	237

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Ընկերությունը չի կանխատեսում այնպիսի գործոնների ի հայտ գալու հավանականություն, որոնք կարող են ունենալ էական ազդեցություն Ընկերության ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա:

Ընկերության աուդիտն իրականացնող անձի ինքնության մասին համառոտ տեղեկություններ

Ընկերության ստեղծման պահից մինչև 2008 թվականն ընկած ժամանակահատվածի համար ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Վ.Ս. ԱՌԻԳԻՏ» ՍՊԸ-ն՝ աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ 042 (տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 05.13.2005թ):

Ընկերության 2009 թվականների ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՍՕՍ-ԱՌԻԳԻՏ» ՓԲԸ-ն՝ աուդիտորական ծառայությունների իրականացման

լիցենզիա ԱԾ 020 (տրված ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 31.07.2003թ.): Ընկերության 2010 թվականների ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվելու է դարձյալ «ՍՕՍ-ԱՌԻԴԻՏ» ՓԲԸ-ի կողմից:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի փոփոխության պատճառը պայմանավորված է 2009 թվականի ընթացքում Ընկերության կողմից իրականացրած բանակցությունների արդյունքում «ՍՕՍ-ԱՌԻԴԻՏ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող պայմաններով:

Ընկերության կառավարման մարմինները

Ընկերության կառավարման մարմիններն են Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը (այսուհետև՝ Ժողով), Տնօրենների Խորհուրդը (այսուհետև՝ Խորհուրդ), Գլխավոր Տնօրենը և Վերստուգող հանձնաժողովը, ինչպես նաև Կորպորատիվ քարտուղարը:

Ընկերության Տնօրենների Խորհրդի անդամներն են՝

Սպարտակ Թևոյան՝ Տնօրենների Խորհրդի նախագահ: Ունի 43 տարվա աշխատանքային փորձ: Ներկայումս զբաղեցնում է ԼՂՀ փոխվարչապետի և ԼՂՀ ֆինանսների նախարարի պաշտոնը:

Կառլեն Պետրոսյան՝ Տնօրենների Խորհրդի անդամ: Ունի 29 տարվա աշխատանքային փորձ: Չբաղեցնում է ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետի պաշտոնը:

Վահրամ Բեգլարյան՝ Տնօրենների Խորհրդի անդամ: Ունի 14 տարվա աշխատանքային փորձ, ունի փորձ բանկային համակարգում: 2009 թվականից առ այսօր աշխատում է Ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնում:

Սիհրան Գալստյան՝ Տնօրենների Խորհրդի անդամ: Ունի 6 տարվա աշխատանքային փորձ: 2006 թվականից մինչև օրս աշխատում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

Մերուժան Բաբայան՝ Տնօրենների Խորհրդի անդամ: Ունի 13 տարվա աշխատանքային փորձ, աշխատում է «Քարավան» ՍՊԸ-ում:

Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամներն են՝

Արթուր Պետրոսյան՝ Վերստուգող հանձնաժողովի նախագահ: Ունի 11 տարվա աշխատանքային փորձ, նաև՝ բանկային համակարգում: Չբաղեցնում է ԼՂՀ վարչապետի օգնականի պաշտոնը:

Արթուր Պատվականյան՝ Վերստուգող հանձնաժողովի անդամ: Հանդիսանում է «Արցախբանկ» ՓԲԸ-ի ներքին աուդիտի անդամ:

Արթուր Ներսիսյան՝ Վերստուգող հանձնաժողովի անդամ: Ունի 4 տարվա աշխատանքային փորձ: Աշխատում է որպես ԼՂՀ ֆինանսների նախարարության սոցիալական ոլորտի ծախսերի ֆինանսավորման բաժնի 1-ի կարգի մասնագետ:

Ընկերության կորպորատիվ քարտուղարն է՝ Ինեսա Գրիգորյանը: Ունի 6 տարվա աշխատանքային փորձ: Աշխատում է Ընկերությունում որպես իրավաբան:

Ընկերության գլխավոր հաշվապահն է Արայիկ Դավթյանը: Ունի 6 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

Կառավարման մարմինների միջև ազգակցական կապը բացակայում է: Ընկերության կառավարման մարմինների մոտ կորպորատիվ և անձնական շահերի բախում չկա:

Ընկերության խոշոր բաժնետեր է հանդիսանում ԼՂՀ-ն ի դեմս՝ Կառավարության, որին պատկանում են Ընկերության կողմից թողարկված 5,100,000 հատ սովորական բաժնետոմսեր, որոնք մյուս բաժնետոմսերի հետ միասին պարունակում են հավասար իրավունքներ: ԼՂՀ կառավարության բաժնեմասը Ընկերության կանոնադրական կապիտալում կազմում է 85.5%: ԼՂՀ կառավարությանը պատկանող բաժնետոմսերից բխող իրավունքների և պարտականությունների կատարման համար լիազորված է ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ Կառլեն Պետրոսյանը: Հետևաբար, Կառլեն Պետրոսյանը նույնպես հանդիսանում է խոշոր մասնակից: Ընկերության կանոնադրական կապիտալում 85.5% մասնակցության հիմքով Ընկերությունը գտնվում է ԼՂՀ Կառավարության և ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետի հսկողության ներքո:

Ընկերության Խոշոր բաժնետեր է հանդիսանում է նաև «Վ.Պ.Փ.Բ.» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցեն՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մասունցի Դավիթ 2), որին պատկանում է Ընկերության կողմից թողարկված 360,000 հատ սովորական բաժնետոմսեր: «Վ.Պ.Փ.Բ.» ՓԲԸ-ի բաժնենմասը Ընկերության կանոնադրական կապիտալում կազմում է 6.03%:

Ընկերության խոշոր բաժնետեր է հանդիսանում նաև Վարդան Սիրմաքետը, քանի որ նրան է պատկանում «Վ.Պ.Փ.Բ.» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը: Վարդան Սիրմաքետը հանդիսանում է նաև «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի սեփականատեր:

31.08.2010թ-ի դրությամբ Ընկերությունը ունեւր 95 աշխատակիցներ:

Առաջարկվող բաժնետոմսերի հիմնական վիճակագրական տվյալները

Առաջարկվող բաժնետոմսերը հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր են: Ընկերությունն արդեն ունի նույն դասի 5,962,074 հատ տեղաբաշխված բաժնետոմսեր, որոնք ցուցակված են «ՆԱՍՂԱԶ ՕԷՍԷԶՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում և դրանց շնորհիվ է 00AHEKS10KR3 տարբերակիչ ծածկագիրը:

Տվյալ բաժնետոմսերը թողարկվել են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենսդրությանը համաձայն:

Բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են: Ինչպես նախկինում տեղաբաշխված, այնպես էլ առաջարկվող բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը իրականացվելու է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետև՝ ՀԿԴ) կողմից (ՀՀ, ք. Երևան 0010, Սիեր Սկրոչյանի 5բ):

Առաջարկվող (վաճառվող) բաժնետոմսերի քանակն է՝ 1,400,000 հատ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 ՀՀ դրամ, իսկ սույն առաջարկի շրջանակում վաճառքի (տեղաբաշխման) գինը 1,110 ՀՀ դրամ է:

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

Բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխումից հավաքագրված միջոցները Ընկերության կողմից օգտագործվելու են կառուցվող նոր ՀԷԿ-երի կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման, այդ թվում՝ տվյալ ՀԷԿ-երի կառուցման համար կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման համար Ընկերության կողմից օգտագործված փոխառու միջոցների վերաֆինանսավորման նպատակով:

Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Բաժնետոմսերի առաջարկն ամբողջությամբ իրականացվում է լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի հաշվին՝ Ընկերության կանոնադրությամբ ամրագրված հայտարարված բաժնետոմսերի ծավալի շրջանակում:

Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության նախկինում թողարկված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման միջոցով, իսկ նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերը ենթակա են տեղաբաշխման ազատ բաժանորդագրության միջոցով:

Տեղաբաշխումը կսկսվի Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 33-րդ օրվանից և կտևի 15 աշխատանքային օր (օրերի նշագրմամբ):

Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից կարող են օգտվել 20.08.2010թ. դրությամբ Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք: Նախապատվության իրավունքից օգտվելու համար բաժնետերը պետք է տեղաբաշխումը սկսելու օրվանից առնվազն մեկ օր առաջ ծանուցում ուղղարկի Ընկերությանը, որի օրինակելի ձևը ներկայացված է Ազդագրում: Ծանուցումը ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել Ընկերության գրասենյակ (ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան 10 հասցեում) փոստի կամ այլ կապի միջոցով կամ առձեռն: Մատչելիության նկատառումներից ելնելով՝ նշված ծանուցումը կարող է ներկայացվել նաև Բանկի գրասենյակ (ք. Երևան, Վ.Սարգսյան 10 հասցեում)

Բաժնետոմսերի նախապատվության իրավունքը կիրառվում է համամասնորեն և հասանելիք բաժնետոմսերի քանակը որոշվում է ելնելով Բաժնետերերին պատականող բաժնետոմսերի քանակից: Եթե ծանուցման մեջ նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է Բաժնետիրոջ հասանելիք քանակին, ապա այն ենթակա է բավարարման հասանելիք առավելագույն քանակով, իսկ տարբերությունը կարող է բավարարել ազատ բաժանորդագրության ենթակա բաժնետոմսերի հաշվին:

Բաժնետոմսեր ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք (այսուհետ՝ ներդրողներ) կարող են մասնակցել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը: Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության շրջանակում ձեռք բերվող բաժնետոմսերի քանակի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Տեղաբաշխման ընթացքում Բաժնետոմսերի ձեռք բերման հաստատումը և Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ սահմանված պայմաններն ընդունելու համաձայնություն տալը ներդրողն իրականացնում է բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը սահմանված կարգով լրացնելու և Բանկ ներկայացնելու միջոցով: Բաժանորդագրության հայտը կարելի է ստանալ Ընկերության գրասենյակից, Բանկի գրասենյակից (ք. Երևան, Վ.Սարգսյան 10 հասցեով) կամ համապատասխանաբար www.artsakhhpp.com կամ www.armswissbank.am պաշտոնական կայքերից կամ հեռախոսով կապ հաստատել Բանկի մասնագետների հետ, որոնք կօգնեն ներդրողին ստանալ բաժանորդագրության հայտը:

Ներդրողների կողմից բաժնետոմսերի բաժանորդագրության հայտերը կարող են Բանկ ներկայացվել տեղաբաշխման ընթացքում ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-17:00-ին: Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը Բանկ ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է փոստով և այլ կապի միջոցով, ինչպես նաև առձեռն եղանակով: Ներդրողը կարող է Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը ներկայացնել նաև Ընկերության հասցեով:

Բաժանորդագրության հայտին կից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

- ներդրողի անձնագրի պատճենը (ֆիզիկական անձի դեպքում),
- ներդրողի պետական գրանցման վկայականի պատճենը (իրավաբանական անձի դեպքում)
- բաժանորդագրվող բաժնետոմսերի դիմաց վճարումը հավաստող փաստաթուղթը

Բաժնետոմսերի դիմաց վճարումը ներդրողի կողմից կարող է կատարվել անկանխիկ՝ Բանկում բացված 2500036910046100 բանկային (տարանցիկ) հաշվին: Ֆիզիկական անձ ներդրողը գումարը կարող է մուտքագրել կանխիկ եղանակով՝ հայտին կից ներկայացնելով անձնագրի պատճենը:

Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով Բաժնետերը բաժնետոմսերի դիմաց վճարումը հիմնավորող փաստաթուղթը պետք է Ընկերություն ներկայացնի բաժնետոմսերի ձեռք բերման մասին ծանուցման հետ միասին, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխումը սկսվելու օրվանից առնվազն մեկ օր առաջ:

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության շրջանակում ներդրողը բաժնետոմսերի դիմաց վճարումը հիմնավորող փաստաթուղթը պետք է Բանկ ներկայացնի բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի հետ միասին, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխման ավարտի օրը:

Բաժանորդագրության հայտերը ընդունվելուց հետո ներդրողները 1 աշխատանքային օրվա ընթացքում (աշխատանքային ժամերին) կարող են գրավոր կերպով ամբողջությամբ կամ մասնակի հետկանչել իրենց բաժանորդագրությունները, եթե մինչև այդ հայտերը չեն բավարարվել: Մասնակիորեն հետ կանչվելու դեպքում ներդրողը պետք է ներկայացվի նոր հայտ: Եթե տեղի է ունեցել բաժնետոմսերի գերբաժանորդագրություն, ապա ներկայացված հայտերը բավարարվում են ըստ ներկայացման առաջնահերթության:

Այն դեպքում, երբ տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում ներկայացված բաժանորդագրության հայտերում ձեռքբերվող բաժնետոմսերի ծավալը գերազանցում է չտեղաբաշխված բաժնետոմսերի ծավալին, ապա հայտերը բավարարվում են մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների համամասնության:

Բաժանորդագրության հայտի մերժման, բաժնետիրոջ կողմից հետկանչման, ինչպես նաև գերբաժանորդագրության դեպքում հայտի մասնակի բավարարման ժամանակ Բաժնետոմսերի ձեռք բերման համար փոխանցված դրամական միջոցները Տեղաբաշխողի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում անկանխիկ

եղանակով՝ բաժնետոմսերի բաժանորդագրության հայտում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

Արժեթղթերի հաշիվ չունենալու դեպքում Բանկի աշխատակիցները կօգնեն այդ հաշիվը բացել Կենտրոնական դեպոզիտարիայում կամ մասնագիտացված այլ պահառուների մոտ:

Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ներդրողը կարող է Կենտրոնական դեպոզիտարիայից (եթե ներդրողը հաշիվը բացել է Կենտրոնական դեպոզիտարիայում) կամ այլ պահառուից (եթե ներդրողը հաշիվը բացել է այլ պահառուի մոտ) ստանալ քաղվածք, որում արտացոլված կլինեն իր կողմից ձեռք բերված բաժնետոմսերը:

Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է չերաշխավորված տեղաբաշխման միջոցով՝ լավագույն ջանքերի սկզբունքով: Որպես տեղաբաշխող հանդես է գալիս «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն: Բանկի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Կողմերի միջև կնքված «Բաժնետոմսերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին» պայմանագրով:

Ըստ «Բաժնետոմսերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին» պայմանագրի՝ Բանկը պարտավորվում է Ընկերությանը մատուցել Բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված ծառայությունները՝ չերաշխավորված տեղաբաշխման սկզբունքով:

Նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով Բանկը կազմակերպում է Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն, գործադրում է լավագույն ջանքեր Բաժնետոմսերի պոտենցիալ գնորդներ բացահայտելու և Բաժնետոմսերի տեղաբաշխման նպատակով, Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում Բաժնետոմսերի գնորդներին աջակցում է Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացում և այդ նպատակով տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ամփոփում է տեղաբաշխման արդյունքները, նախապատրաստում է տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին օրենքով սահմանված հաշվետվությունները, ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ ՀԿԳ-ում բաժնետոմսերը Ընկերության թողարկման հաշվից գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու նպատակով, Ընկերության հետ համատեղ կազմակերպում է «ՆԱՍԳԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայում Բաժնետոմսերի ցուցակման ապահովումը և պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) կազմումը և ֆոնդային բորսա ներկայացումը:

Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Ընկերության տնօրենների Խորհրդի 20.08.2010թ-ին ընդունված որոշմամբ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի շրջանառությունը պետք է կազմակերպվի Ընկերության նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի հետ միասնական ընդհանուր եղանակով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Առաջարկվող բաժնետոմսերի մասով հայցվելու է «ՆԱՍԳԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում առևտրին թույլտվություն:

2009 թ-ի հոկտեմբերից Ընկերությունը հանդիսանում է հաշվետու թողարկող, որի բաժնետոմսերը ցուցակվում են «ՆԱՍԳԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի ցուցակման B մակարդակում:

2010 թվականի ապրիլի 3-ին Բանկին շնորհվել է Ընկերության բաժնետոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակ, ըստ որի Բանկը պարտավոր է Ֆոնդային բորսայի առևտրային նստաշրջանի ընթացքում անընդհատ ապահովել Բաժնետոմսերի առքի և վաճառքի գնանշումներ՝ նվազագույնը 6 մլն ՀՀ դրամ անվանական ծավալով (6,000 հատ Բաժնետոմսերի համար):

Սույն ազդագրի միջոցով ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջ պատկանող բաժնետոմսերի վաճառքի առաջարկ չի նախատեսվում: Առաջարկը վերաբերվում է միայն Ընկերության կողմից լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերին:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Աղյուսակ 4. Ֆինանսական հաշվետվությունների մասին ամփոփ հաշվետվություն, հազար ՀՀ դրամ

<i>Ցուցանիշի անվանումը, հազ.դրամ</i>	<i>31.12.2007</i>	<i>31.12.2008</i>	<i>31.12.2009</i>	<i>31.06.2010</i>
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	36,989	386,409	1,073,016	941,743
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(30,154)	(244,722)	(236,212)	(135,306)
Համախառն շահույթ (վնաս)	6,835	141,687	836,804	806,437
Իրացման ծախսեր	0	0	(335)	(174)
Վարչական ծախսեր	(3,370)	(65,951)	(69,862)	(53,699)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	3,465	75,736	766,607	752,564
Գործառնական այլ եկամուտներ	0	0	647	1,912
Գործառնական այլ ծախսեր	0	(11)	(6,203)	(10,572)
Գործառնական շահույթ վնաս	3,465	75,725	761,051	743,904
Ֆինանսական ծախսեր	0	0	0	0
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	0	0	0	0
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	0	(2,325)	(61,555)	(19,618)
Մովորական գործունեությունից շահույթ (վնաս)	3,465	73,400	699,496	724,286
Արտաստվոր դեպքերից շահույթ (վնաս)	0	0	(21,315)	(4,874)
Ձուտ շահույթ նախքան շահութահարկի գծով ծախսերի նվազեցումը	3,465	73,400	678,181	719,412
Շահութահարկի գծով ծախս փոխհատուցում	(235)	(3,670)	(38,327)	0
Ձուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	3,230	69,730	639,854	719,412

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Աղյուսակ 5. Ամփոփ հաշվապահական հաշվեկշիռ, հազար ՀՀ դրամ

<i>Ցուցանիշի անվանումը, հազ.դրամ</i>	<i>31.12.2007</i>	<i>31.12.2008</i>	<i>31.12.2009</i>	<i>30.06.2010</i>
Հիմնական միջոցներ	34,774	5,367,577	5,029,851	5,825,077
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	0	0	2,829,261	3,476,105
Ոչ նյութական ակտիվներ	0	19,974	6,464	8,132
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	0	0	0	0
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	0	0	0	0
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	0	448,006	449,748	572,455
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	34,774	5,835,557	8,315,324	9,881,769
Պաշարներ	1,966	6,023	19,128	18,744
Տրված ընթացիկ կանխավճարներ	6,455	12,028	3,971	754
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	927	188,084	369,091	774,591

Այլ դերհոտորական պարտքեր	0	24,695	134,155	218,657
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	0	0	0	200,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,822	7,922	56,327	275,531
Այլ ընթացիկ ակտիվներ	416	4,398	931	2,014
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	15,586	243,150	583,603	1,490,291
Ընդամենը ակտիվներ	50,360	6,078,707	8,898,927	11,372,060
Կանոնադրական կապիտալի զուտ գումար	36,083	5,100,000	5,962,074	5,962,074
Էմիսիոն եկամուտ	0	0	43,104	43,104
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	0	13,087	0	0
Կուտակված շահույթ	3,230	72,960	656,170	735,730
Պահուստային կապիտալ	0	0	0	43,645
Սեփական կապիտալի այլ տարրեր	0	0	0	0
Ընդամենը սեփական կապիտալ	39,313	5,186,047	6,661,348	6,784,553
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	0	0	1,482,793	3,270,392
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	0	0	0	0
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	0	0	1,482,793	3,270,392
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ		639,179	709,415	777,750
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2,623	6,811	6,633	12,487
Այլ կրեդիտորական պարտքեր	8,424	6,170	38,738	526,878
Ստացված ընթացիկ կանխավճարներ	0	240,500	0	0
Այլ ընթացիկ պարտավորություններ	0	0	0	0
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	11,047	892,660	754,786	1,317,115
Ընդամենը պարտավորություններ	11,047	892,660	2,237,579	4,587,507
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	50,360	6,078,707	8,898,927	11,372,060

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Աղյուսակ 6. Դրամական հոսքերի մասին ամփոփ տվյալներ

<i>Ցուցանիշի անվանումը, հազար դրամ</i>	<i>31.12.2007</i>	<i>31.12.2008</i>	<i>31.12.2009</i>	<i>30.06.2010</i>
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	3	5,822	7,922	56,327
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	5,189	58,469	994,707	528,259
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	0	(662,877)	(2,964,924)	(1,931,524)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	0	607,749	2,023,286	1,626,937
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	5,822	7,922	56,327	275,531

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Աղյուսակ 7. Ամփոփ ֆինանսական գործակիցներ

<i>Ամփոփ ֆինանսական գործակիցներ</i>	<i>31.12.2007</i>	<i>31.12.2008</i>	<i>31.12.2009</i>	<i>30.06.2010</i>
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով	0.0	0.0	0.0	121.0



Մեփական կապիտալի շահութաբերություն	8.2	1.3	9.6	10.6
Ակտիվների շահութաբերություն	6.4	1.1	7.2	6.3
Չուտ շահույթի մարժա	8.7	18.0	59.6	76.4
Կապիտալի համարժեքության գործակից	0.8	0.9	0.8	0.6
Ֆինանսական կախվածության գործակից	0.3	0.2	0.3	0.7
Բացարձակ իրացվելիության գործակից	52.7	0.9	7.5	36.1
Ընթացիկ իրացվելիության գործակից	119.5	26.1	74.6	110.0
Ընդհանուր իրացվելիության գործակից	141.1	27.2	77.3	113.1
Դեբիտորական պարտքերի շրջանառության գործակից	39.9	1.8	2.1	0.6
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	9.1	200.5	173.8	608.3
Կրեդիտորական պարտքերի շրջանառության գործակից	3.3	29.5	23.6	1.9
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	110.6	12.4	15.4	192.1

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Ներդրողները կարող են Ազդագիրը ստանալ Բանկի և Ընկերության գրասենյակներից (համապատասխանաբար ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10 կամ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Առաքելյան 10 հասցեներում) կամ Բանկի և Ընկերության ինտերնետային կայքերից:

ԲԱԺՆԵՏՈՍՄԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռիսկային գործոններ

1. Գոյություն ունեն մի շարք ռիսկային գործոններ, որոնք հատուկ են Ազդագրի միջոցով առաջարկվող բաժնետոմսերում ներդրումներին: Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթը և դրանից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից: Որոշում կայացնելուց առաջ ցանկացած ներդրող պետք է նախապես ծանոթանա տվյալ բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերին:

2. Բաժնետոմսերի շուկայական ռիսկը բաժնետոմսերում ներդրած կապիտալի կորստի կամ ակնկալվող եկամուտների չստացման ռիսկն է, որի դեպքում ներդրումների իրական արժեքը կարող է նվազել որոշակի շուկայական գործոնների փոփոխության պատճառով՝ ֆինանսական գործիքների գների, տոկոսադրույքների, արժույթի փոխարժեքի և այլն: Հետևաբար, բաժնետոմսերում ներդրումների հետ կապված շուկայական ռիսկը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ ռիսկային գործոնները՝

- **Արժուրային ռիսկ.** Առաջարկվող բաժնետոմսերը, այնպես ինչպես նախկինում Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը գնանշվելու և վաճառվելու են ՀՀ դրամով, հետևաբար, դրամի փոխարժեքի փոփոխությունները կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ բաժնետոմսերի գների կամ նրանց ակնկալվող եկամուտների վրա: Արժուրային ռիսկերը դուրս են Ընկերության վերահսկողության դաշտից:
- **Տոկոսադրույքների փոփոխության ռիսկ.** քանի որ բաժնետոմսերի շուկայական գինը, որպես կանոն, ուղիղ համեմատական կախվածության մեջ է գտնվում Ընկերության կողմից ստացվող շահույթի, այդ թվում՝ բաժնետոմսերի դիմաց ստացվող կամ ակնկալվող շահութաբաժինների մեծությունից և հակադարձ համեմատական կախվածության մեջ՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունից, արդյունքում՝ շուկայում տոկոսադրույքների բարձրացումը կարող է հանգեցնել բաժնետոմսերի գների նվազմանը:
- **Ֆոնդային ռիսկ.** որը ենթադրում է բաժնետոմսերի գների կամ շահութաբաժնային վճարումների չափի փոփոխության արդյունքում կորուստների ռիսկ: Ֆոնդային բորսայում բաժնետոմսերի գնի նվազման պատճառ կարող են լինել բազմաթիվ, այդ թվում՝ Ընկերության գործունեության հետ կապված գործոններ, որոնց արդյունքում կարող է նվազել բաժնետոմսերի գրավչությունը: Ինչ վերաբերում է վճարվող շահութաբաժինների չափին, ապա վերջինիս մեծությունը ուղղակիորեն կախված է Ընկերության զուտ շահույթի մեծությունից: Բաժնետոմսերից ակնկալվող եկամուտների չստացման տեսանկյունից հնարավոր են հետևյալ ռիսկային իրավիճակները. 1. Ընկերության շահույթի անբավարարության դեպքում շահաբաժինների վճարման անհնարինություն, 2. շահույթի առկայության և բավարարության դեպքում Ընկերության կողմից շահույթի՝ այլ ուղղություններով օգտագործման նպատակահարմարության մասին որոշման կայացում:

Ընկերության որդեգրած շահաբաժնային քաղաքականության համաձայն՝ տարեկան շահաբաժինների առաջարկվող չափը սահմանվում է Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքներով, բայց, որպես կանոն, չպետք է պակաս լինի Ընկերության զուտ շահույթի 20%-ից:

- **Իրագրվելիության ռիսկ.** Բաժնետոմսերի ցածր իրացվելիության ռիսկը պայմանավորված է կապիտալի շուկայի թերզարգացվածությամբ, որի արդյունքում բաժնետոմսերը իրացնելու դեպքում ներդրողը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Այս ռիսկի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով Ընկերությունը ձեռնարկելու է անհրաժեշտ միջոցառումներ: Ընկերությունը սույն առաջարկի շրջանակում տեղաբաշխվող բաժնետոմսերը ցուցակելու է «ՆԱՍԳԱԲ ՕԷՄԷԶՍ ԱՐՄԵՆԻԱ»-ի ցուցակման B մակարդակում (ինչպես նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը) և միաժամանակ, շուկա ստեղծողի միջոցով ապահովելու է ֆոնդային բորսայում բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումների կազմակերպումը (նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի շուկա ստեղծող է հանդիսանում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն):

- **Ինֆլյացիոն ռիսկ.** Այս ռիսկը հիմնականում պայմանավորված է բաժնետոմսերում ներդրումներից ակնկալվող եկամուտների արժեզրկման հետ՝ իրական գնողունակության տեսանկյունից:

3. Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ նշված գործոնների բացասական ազդեցությունները նվազեցնելու համար: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության հսկողությունից դուրս են, ապա այս ցուցակով և դրանով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

Հիմնական տեղեկատվություն

1. Շրջանառու միջոցների մասին հայտարարություն

Ընկերության կարծիքով Ընկերության շրջանառու միջոցները բավարար են Ընկերության ներկա կարիքների համար, իսկ անբավարության դեպքում Ընկերությունը կարող է օգտվել շրջանառու միջոցների համալրման տարբեր գործիքներից (բանկային վարկ, փոխառություններ և այլն): 2010թ-ի առաջին կիսամյակի վերջի դրությամբ Ընկերության սեփական շրջանառու կապիտալ (ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների տարբերություն) կազմել է 173,176,000 ՀՀ դրամ:

2. Կապիտալիզացիա և պարտավորություններ

ա. Ստորև ներկայացվում է Ընկերության կապիտալիզացիայի կառուցվածքը 30.06.2010թ-ի դրությամբ:

Աղյուսակ 8. Ընկերության կապիտալիզացիայի կառուցվածքը 30.06.2010թ-ի դրությամբ

Կապիտալիզացիա	Գումար, հազ.դրամ	Կառուցվածք, %
Կանոնադրական կապիտալ	5,962,074	87.90%
Կուտակված շահույթ	735,730	10.80%
Սեփական կապիտալ	6,784,553	100%

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

30.06.2010թ-ի դրությամբ Ընկերության սեփական կապիտալի գումարը կազմել է 6,784,553,000 ՀՀ դրամ, որի 87.9%-ը կամ 5,962,074,000 ՀՀ դրամը կազմում է կանոնադրական կապիտալը, իսկ 10.8%-ը կուտակված շահույթը:

բ. Ինչ վերաբերում է Ընկերության պարտավորություններին, ապա 30.06.2010թ-ի դրությամբ դրանք ունեցել են հետևյալ կառուցվածքը՝ պարտավորությունների 80.2%-ը կազմում է երկարաժամկետ պարտավորությունները, իսկ կարճաժամկետ պարտավորությունները՝ 19.2%-ը:

Աղյուսակ 9. Ընկերության պարտավորությունների կառուցվածքը

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Գումար ,հազ. դրամ	Կառուցվածք, %
Երկարաժամկետ պարտավորություններ, որոնք ենթադրում են տոկոսային ծախս	3,270,392	80.8
Կարճաժամկետ պարտավորություններ, որոնք ենթարում են տոկոսային ծախս	777,750	19.2
Արտահաշվեկշռային և պայմանական պարտավորություններ		
ԸՆԴԱՄԵՆԸ	4,048,112	100%

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

30.06.2010թ. դրությամբ Ընկերության երկաժամկետ և կարճաժամկետ պարտավորությունները (որոնք ենթադրում են տոկոսային ծախս) իրենցից ներկայացվում են բանկային վարկեր,

վարկային կազմակերպություններից ստացված վարկեր, ԼՂՀ կառավարությունից ստացված բյուջետային վարկեր և այլ փոխառություններ:

գ. Բանկերից ստացված վարկերը կազմում են 1,940,024,445 ՀՀ դրամ, որից

- 341,666, 667 ՀՀ դրամի վարկերը ապահովված են ԼՂՀ կառավարությանը պատկանող՝ Ընկերության բաժնետոմսերով,

- 1,598,357,778 ՀՀ դրամի վարկերը երաշխավորված են ԼՂՀ կառավարության տրված երաշխավորություններով:

Վարկային կազմակերպություններից ստացված վարկերը կազմում են 1,017,992,352 ՀՀ դրամ, որից՝

-663,750,000 ՀՀ դրամի վարկերը ապահովված են ԼՂՀ կառավարությանը պատկանող՝ Ընկերության բաժնետոմսերով,

-354,242,352 ՀՀ դրամի վարկերը երաշխավորված են ԼՂՀ կառավարության տված երաշխավորություններով:

ԼՂՀ ֆինանսների նախարարությունից ստացված վարկերը կազմում են 300,000,000 ՀՀ դրամի չափով և որոնք առանց գրավի վարկեր են:

Ընկերությունը ունի այլ փոխառություններից ստացված փոխառություններ՝ 790,125,000 ՀՀ դրամ, որոնք առանց գրավի փոխառություններ են:

2.1. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում հավաքագրված միջոցները Ընկերության կողմից օգտագործվելու են կառուցվող նոր ՀԷԿ-երի կառուցման համար կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման, այդ թվում՝ տվյալ ՀԷԿ-երի կառուցման համար կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման համար Ընկերության կողմից օգտագործված փոխառու միջոցների վերաֆինանսավորման նպատակով: Մասնավորապես՝

- Թրդե 2 ՀԷԿ-ի կառուցման համար՝ 355 մլն ՀՀ դրամ,

- Մատաղիս 1 ՀԷԿ-ի համար՝ 235 մլն ՀՀ դրամ,

- Մատաղիս 2 ՀԷԿ-ի համար՝ 235 մլն ՀՀ դրամ,

- Ընկերության կողմից օգտագործված փոխառու միջոցների վերաֆինանսավորման համար՝ 700 մլն դրամ,

- Բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված ծախսեր՝ 29 մլն դրամ:

1. Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող բաժնետոմսերի հետ

ա. Սույն ազդագրի միջոցով առաջարկվող բաժնետոմսերը հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր են: Ընկերությունն արդեն ունի նույն դասի 5,962,074 հատ տեղաբաշխված բաժնետոմսեր, որոնք ցուցակված են «ՆԱՍԴԱԸ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում և դրանց շնորհիվ է 00AHEKS10KR3 տարբերակիչ ծածկագիրը:

բ. Տվյալ բաժնետոմսերը թողարկվել են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի համաձայն:

գ. Բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են: Ինչպես նախկինում տեղաբաշխված, այնպես էլ առաջարկվող բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը իրականացվելու է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետև՝ ՀԿԴ) կողմից (ՀՀ, 0010, Երևան, Սիեր Սկրաշյանի 5բ):

դ. Առաջարկվող (վաճառվող) բաժնետոմսերի քանակն է՝ 1,400,000 (մեկ միլիոն չորս հարյուր) հատ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) դրամ, իսկ սույն առաջարկի շրջանակում վաճառքի (տեղաբաշխման) գինը՝ 1,110 (մեկ հազար հարյուր տասը) դրամ:

ե. Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

զ. Բաժնետոմսերից բխում են մի շարք իրավունքներ՝

1. Շահութաբաժնի ստացման իրավունք - յուրաքանչյուր բաժնետոմս իր սեփականատիրոջը իրավունք է տալիս որոշակի մաս ստանալ Ընկերության զուտ շահույթից՝ իր կողմից կատարված ներդրումների արժեքին համամասնորեն: Ինչպես նախկինում տեղաբաշխված, այնպես էլ տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց

շահութաբաժինների վճարման հարցերի կանոնակարգումը իրականացվում է ԼՂՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և «Շահութաբաժնային քաղաքականության մասին» կանոնակարգով: Վերջինիս համաձայն, տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ժողովի՝ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց: Ընկերությունն իրավունք ունի կատարել շահութաբաժինների վճարման պարտականությունը շահութաբաժինների վճարման ժամանակաշրջանի ընթացքում յուրաքանչյուր օր՝ ներառյալ վերջին օրը:

Տարեկան շահութաբաժինների առաջարկվող չափը՝ որպես Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին առաջարկ, սահմանվում է Խորհրդի կողմից Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքներով, բայց, որպես կանոն, չպետք է պակաս լինի Ընկերության ստացված զուտ շահույթի 20%-ից:

2. Բաժնետոմսերը իրենց սեփականատերերին իրավունք են տալիս մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով: Բաժնետերը կարող է մասնակցել Ժողովին հետևյալ եղանակներով՝

- անձամբ կամ իր կողմից ընտրված ներկայացուցչի միջոցով մասնակցել Ժողովում օրակարգի հարցերի քննարկմանը և դրանց քվեարկությանը (Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողովի գումարման դեպքում)

- հեռակա կարգով քվեարկել անձամբ կամ քվեարկելու իրավունքը լիազորել այլ անձի:

3. Ընկերության գործող բաժնետերերը ունեն լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Նախապատվության իրավունքը կիրառվում է համամասնորեն և հասանելիք բաժնետոմսերի քանակը որոշվում է իրենց պատկանող բաժնետոմսերի քանակից:

4. Բաժնետոմսերը իրենց սեփականատերերին իրավունք են տալիս Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը:

5. Բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն Ընկերությանը ներկայացնել բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում: Սույն ազդագրի միջոցով բաժնետոմսերի տեղաբաշխումը բաժնետերերին չի տալիս բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք:

6. Տեղաբաշխվող բաժնետոմսերը փոխարկելի չեն:

Ընկերության կանոնադրությամբ սահմանվում են Ընկերության բաժնետերերի այլ իրավունքներ և՝

7. Բաժնետերը կարող է ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ գաղտնի փաստաթղթերի)

8. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար բաժնետերը կարող է լիազորել երրորդ անձի,

9. Բաժնետերը կարող է առաջարկություններով հանդես գալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,

10. Բաժնետերը կարող է հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

11. Բաժնետերը կարող է օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը

12. Բաժնետերը կարող է օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Է. Բաժնետոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակումներ չկան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, իսկ բաժնետոմսերի ցուցակման դեպքում շրջանառությունը կկազմակերպվի «Նասդաք ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ում:

ը. Սույն ազդագրի միջոցով բաժնետոմսերի տեղաբաշխման շրջանակում բաժնետոմսերի հանձնելու առաջարկի հիմքեր չեն առաջանում:

թ. Բաժնետոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ հետևյալ դեպքերում՝

- բաժնետոմսերից ստացվող շահութաբաժաններից,

- բաժնետոմսերի վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (իրացված կապիտալի հավելած):

Շահութաբաժինների հարկման իրավական ռեժիմը սահմանափակվում է միայն ԼՂՀ հարկային օրենսդրության շրջանակով, քանի որ շահութաբաժիններ վճարվում է Ընկերության կողմից, ինչը նշանակում է, որ հարկատուների եկամուտները ստացվում են ԼՂՀ աղբյուրներից:

Բաժնետոմսերի իրացված կապիտալի հավելածի համար կիրառվում է ինչպես ԼՂՀ հարկային օրենսդրության այնպես էլ ՀՀ հարկային օրենսդրության պահանջները՝ կախված եկամուտների ստացման աղբյուրից: Հետևաբար, Բաժնետոմսերի իրացված կապիտալի հավելածի հարկային առանձնահատկությունների ներկայացման շրջանակում տրվում են նաև ՀՀ-ում գործող առանձնահատկությունները:

Բաժնետոմսերից ստացվող եկամտի հարկման համար ԼՂՀ-ում սահմանվում են հետևյալ առանձնահատկությունները:

Շահութահարկ. Շահութահարկ են վճարում ԼՂՀ-ում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, բացի ՀՀ-ում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ԼՂՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում՝ վերջիններիս համար հարկվող օբյեկտ է համարվում ԼՂՀ աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 5 տոկոս դրույքաչափով: Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 3 տոկոս դրույքաչափով:

- «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի կողմից բաժնետոմսերից ստացած շահութաբաժինների գումարի չափով, բացառությամբ ոչ ռեզիդենտի հարկվող շահույթի («Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 54 կետ 2): Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ստացված շահութաբաժինները հարկվում են 3% դրույքաչափով:

- Իրավաբանական անձանց համար բաժնետոմսերի իրացված կապիտալի հավելածը հարկվում է շահութահարկի 5% դրույքաչափով (բացառությամբ՝ ֆինանսական կազմակերպությունների համար՝ 20% դրույքաչափով), իսկ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար՝ 3% դրույքաչափով:

- Եթե Բաժնետոմսերի իրացված կապիտալի հավելածը ստացվում է ՀՀ աղբյուրներից (հիմնականում այն դեպքերում, երբ եկամուտ ստացողը գործում է ՀՀ հարկային օրենսդրության շրջանակում), ապա՝ իրավաբանական անձանց համար բաժնետոմսերի իրացված կապիտալի աճից ստացված շահույթը հարկվում է շահութահարկի 20% դրույքաչափով, իսկ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար՝ 10% դրույքաչափով:

Եկամտահարկ. ԼՂՀ-ում եկամտահարկ են վճարում ԼՂՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

- Համաձայն «Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքի՝ 10-րդ հոդվածի՝ հարկվող եկամուտը որոշելիս, հարկատուի համախառն եկամուտը նվազեցվում է՝ բաժնետոմսերի դիմաց ստացված շահութաբաժինների և բաժնետոմսերի օտարումից, այլ արժեթղթերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով: Այսինքն՝ ֆիզիկական անձանց համար բաժնետոմսերից ստացված շահութաբաժինները և իրացված կապիտալի հավելածը չեն հարկվում:

Առաջարկի ժամկետը և պայմանները

1. Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

➤ Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 1,400,000,000 (մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ հաշվարկված անվանական արժեքով կամ 1,554,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր հիսունչորս միլիոն) դրամ՝ հաշվարկված տեղաբաշխման գնով: Առաջարկն ամբողջությամբ իրականացվում է լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի հաշվին՝ Ընկերության կանոնադրությամբ ամրագրված հայտարարված բաժնետոմսերի ծավալի շրջանակում:

➤ Բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսում է բաժնետոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 33-երորդ օրը և տևում է 15 աշխատանքային օր:

➤ Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության նախկինում բողարկված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման միջոցով, իսկ նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերը ենթակա են տեղաբաշխման ազատ բաժանորդագրության միջոցով:

Բաժնետոմսերի նախապատվության իրավունքի կիրառման կամ ազատ բաժանորդագրության շրջանակում ներդրողները կարող են Ազդագիրը ստանալ Բանկի և Ընկերության գործունեության վայրերից (համապատասխանաբար ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10 հասցեում գտնվող Բանկի գրասենյակից կամ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Առաքելյան 10 հասցեում գտնվող Ընկերության գրասենյակից) կամ Բանկի և Ընկերության ինտերնետային կայքերից (համապատասխանաբար www.armswissbank.am կամ www.artsakhpp.com):

➤ Նախապատվության իրավունքի կիրառման գործընթացի նկարագիրը

Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից կարող են օգտվել 20.08.2010թ. դրությամբ Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (այսուհետև՝ Բաժնետերեր):

Ընկերության կողմից Բաժնետերերին բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի մասին ծանուցումը կներկայացվի գրավոր եղանակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում (Հավելված 1-ի ձևով):

Բաժնետերերն իրավունք ունեն ամբողջությամբ կամ մասանակի ծավալով օգտվել բաժնետոմսեր ձեռք բերելու իրենց նախապատվության իրավունքից՝ Ընկերությանը համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով (Հավելված 2-ի ձևով): Վերջինս պետք է Ընկերություն ներկայացվի տեղաբաշխման սկսվելու օրվանից առնվազն մեկ օր առաջ: Ծանուցումը ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է Ընկերության գրասենյակ (հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան փողոց 10) փոստի կամ այլ կապի միջոցով կամ առձեռն:

Ծանուցումը ներկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է Բանկի գրասենյակ (Հասցե ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10):

Ընկերության կողմից կարող է չընդունվել բաժնետիրոջ կողմից ներկայացված ծանուցումը և չբավարարվել նշված ծանուցմամբ նախատեսված գործարքը, եթե ծանուցումը.

- ներկայացված չէ սահմանված ձևին համապատասխան և լրացված է ոչ լիարժեք (այդ թվում՝ բացակայում է բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը),
- թույլ չի տալիս նույնականացնել բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձին,

- ներկայացվել է նախապատվության իրավունքի կիրառման նախատեսված ժամկետի ավարտից հետո:

Ծանուցման շնորհիվ դեպքում Բաժնետերը կարող է ներկայացնել նոր ծանուցում՝ վերացնելով դրանում առկա թերությունները և/կամ բացթողումները (անճշտությունները), իսկ այն անհնար լինելու կամ չիրականացվելու դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար դրամական միջոցները նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են վերադարձման անկանխիկ եղանակով (հայտի մեջ նշված բանկային ռեկվիզիտներով): Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում Բաժնետիրոջ կողմից ներկայացված ծանուցման շնորհիվ և նշված ծանուցման հիման վրա գործարքի չկատարումը չի սահմանափակում Բաժնետիրոջ՝ ազատ բաժանորդագրության միջոցով բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունքը:

Բաժնետոմսերի նախապատվության իրավունքը կիրառվում է համամասնորեն և հասանելի բաժնետոմսերի քանակը որոշվում է՝ ելնելով Բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի քանակից: Եթե նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում Բաժնետիրոջ հասանելի բաժնետոմսերի թիվը կոտորակային է, ապա այն կլորացվում միավորի ճշտությամբ (մինչև 0.5-ը դեպի ներքև, իսկ 0.5 և ավելին դեպի վեր), իսկ եթե մեկից փոքր է ստացվում, ապա նրան տրամադրվում է մեկ բաժնետոմս ձեռք բերելու նախապատվության իրավունք:

Եթե ծանուցման մեջ նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է Բաժնետիրոջը հասանելի քանակից, ապա այն ենթակա է բավարարման հասանելի առավելագույն քանակով, իսկ տարբերությունը կարող է բավարարել ազատ բաժանորդագրության ենթակա բաժնետոմսերի հաշվին:

➤ Ազատ բաժանորդագրության գործընթացի նկարագիրը

Բաժնետոմսեր ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք (այսուհետ՝ ներդրողներ) կարող են մասնակցել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը սույն բաժնով բաժանորդագրության համար նախատեսված ժամկետում: Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության շրջանակում ձեռք բերվող բաժնետոմսերի քանակի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Տեղաբաշխման ընթացքում Բաժնետոմսերի ձեռք բերման հաստատումը և Խորհրդի որոշմամբ սահմանված պայմաններն ընդունելու համաձայնություն տալը ներդրողն իրականացնում է բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը (Հավելված 3-ի ձևով) սահմանված կարգով լրացնելու և Բանկի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 10) ներկայացնելու միջոցով: Ներդրողների կողմից բաժնետոմսերի բաժանորդագրության հայտերը կարող են Բանկ ներկայացվել տեղաբաշխման ընթացքում ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-17:00-ին: Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը Բանկ ներկայացված է համարվում եթե այն ներկայացվել է փոստով և այլ կապի միջոցով, ինչպես նաև առձեռն եղանակով: Ներդրողը կարող է Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը ներկայացնել նաև Ընկերության գրասենյակ (հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան փողոց 10):

Ազատ բաժանորդագրության ընթացքում եթե տեղի է ունեցել բաժնետոմսերի գերբաժանորդագրություն, ապա ներկայացված հայտերը բավարարվում են ըստ ներկայացման առաջնահերթության: Իսկ եթե տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում ներկայացված բաժանորդագրության հայտերում ձեռքբերվող բաժնետոմսերի ծավալը գերազանցում է չտեղաբաշխված (չվաճառված) բաժնետոմսերի ծավալին, ապա հայտերը բավարարվում են մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների կազմված համամասնության: Ընդ որում՝ եթե առաջանում են ոչ ամբողջական բաժնետոմսեր, ապա դրանք ենթակա են կլորացման թվաբանական կլորացման եղանակով: Հայտ ներկայացնող անձը կարող է նախապես հրաժարվել բաժնետոմսերի գերբաժանորդագրության մասնակցությունից՝ այդ մասին համապատասխան նշում կատարելով բաժնետոմսերի բաժանորդագրության հայտում:

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտերը Բանկի կողմից ընդունվելուց հետո ներդրողները 1 աշխատանքային օրվա ընթացքում (աշխատանքային ժամերին) կարող են գրավոր կերպով Բանկից ամբողջությամբ կամ մասնակի հետկանչել իրենց

բաժանորդագրությունները: Երբ ներդրողի կողմից բաժանորդագրությունը հետ է կանչվում մասնակիորեն, ապա նախկինում ներկայացված հայտը համարվում է անվավեր և նրա կողմից պետք է ներկայացվի նոր հայտ:

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի ամբողջությամբ կամ մասնակի հետկանչման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, նշված գումարը Բանկի կողմից ենթակա է վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի ընդունումը Բանկի կողմից մերժվում է, եթե.

- 1) Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը ներկայացված չէ սահմանված ձևին համապատասխան և լրացված է ոչ լիարժեք,
- 2) Բանկ չի ներկայացվել Բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը,
- 3) թույլ չի տալիս նույնականացնել Բաժնետոմսեր ձեռք բերող անձին,
- 4) ներկայացվել է բաժանորդագրության ժամկետի ավարտից հետո:

- Բաժնետոմսերի ձեռք բերման համար վճարումը պետք է կատարվի Բանկում բացված 2500036910046100 բանկային (տարանցիկ) հաշվին Բաժնետոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ դրամական գումարը անկանխիկ եղանակով փոխանցելու միջոցով (որը որոշվում է որպես բաժնետոմսերի ձեռք բերվող քանակի և տեղաբաշխման գնի արտադրյալ): Ֆիզիկական անձինք իրավունք ունեն Բանկի գրասենյակում Բաժնետոմսերի ձեռքբերման գումարները վերը նշված հաշվին մուտքագրել նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրողը Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձնագրի պատճենը:

Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում Բաժնետոմսերի բաժնետոմսերի դիմաց վճարումն հիմնավորող փաստաթուղթը պետք է Ընկերություն ներկայացնի բաժնետոմսերի ձեռք բերման մասին ծանուցման հետ միասին, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխման սկսվելու օրվանից առնվազն մեկ օր առաջ:

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության շրջանակում ներդրողը բաժնետոմսերի դիմաց վճարումը հիմնավորող փաստաթուղթը պետք է Բանկ ներկայացնի բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի հետ միասին, բայց ոչ ուշ, քան տեղաբաշխման ավարտի օրը:

Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում կատարված գործարքները ՀԿԴ-ում գրանցելուց հետո բաժնետոմսեր ձեռք բերող անձինք բաժնետոմսերով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ կարող են ստանալ ՀԿԴ-ից կամ լիցենզավորված այլ պահառուից (որտեղ բացված է տվյալ անձի արժեթղթերի հաշիվը)՝ նրանց ներքին կանոններով սահմանված ժամկետներում գործարքի վերաբերյալ հաշվետվություններ (քաղվածքներ) ստանալու միջոցով: Իսկ մինչև ՀԿԴ-ում գործարքների գրանցումը բաժնետոմսեր ձեռք բերող անձն իր կողմից ձեռք բերվող բաժնետոմսերի քանակի և վճարված գումարների մասին համապատասխան գրավոր հավաստիացում կարող է ստանալ Բանկից՝ համապատասխան հարցում անելու միջոցով: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում կատարված գործարքների գրանցումը ՀԿԴ-ում կկատարվի միայն բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների ամփոփումից և Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով կանոնադրության գրանցումից հետո:

- Ընկերությունը պարտավոր է ինտերնետային կայքում (www.artsakhhpp.com) բաժնետոմսերի հրապարակային առաջարկի, տեղաբաշխման գնի, ժամկետների և կարգի, այդ թվում՝ նախապատվության իրավունքի կիրառման կարգի, նախապատվության իրավունքի կիրառման արդյունքների և բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների մասին, Խորհրդի որոշմամբ սահմանված պահանջվող այլ տեղեկատվություններ բացահայտել: Ընկերությունն իրավունք ունի վերը նշված տեղեկատվությունը, ինչպես նաև տեղաբաշխման ընթացքում տեղաբաշխված բաժնետոմսերի քանակի մասին տեղեկությունները բացահայտել այլ զանգվածային լրատվության միջոցներով,

բուկլետների, ուղեցույցների, վերլուծական նյութերի պատրաստման և գովազդային հոլովակների միջոցով կամ մամուլում տրվող հայտարարությունների միջոցով:

- Ընկերությունը չի նախատեսում բաժնետոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման չեղյալ հայտարարելու կամ հետաձգվելու դեպքեր և հանգամանքեր: Սակայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում Բանկը իր նախաձեռնությամբ կարող է կասեցնել տեղաբաշխման ընթացքը (Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն Կենտրոնական Բանկի համաձայնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով), և կասեցման ժամկետը ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չշարունակվի, ապա Բանկը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները արժեթղթերը ձեռք բերած անձանց:

Միաժամանակ, Կենտրոնական բանկն իր որոշմամբ կարող է կասեցնել տեղաբաշխման ընթացքը, եթե՝

- 1) տեղաբաշխման ընթացքում խախտվել են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի օրենքի և (կամ) հրապարակային առաջարկը կլարգավորող այլ իրավական ակտերի պահանջները,
- 2) տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել Ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները,
- 3) Ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

Տեղաբաշխումը կասեցնելու մասին որոշումը պետք է պարունակի հայտնաբերված խախտումները և բացթողումները վերացնելու հանձնարարական և դրա կատարման ժամկետները, որի կատարումից հետո Կենտրոնական բանկի թույլտվությամբ տեղաբաշխումը կարող է շարունակվել:

Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար վճարված գումարները ներդրողներին ենթակա են վերադարձման տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (բաժնետոմսերի բաժանորդագրության հայտում կամ նախապատվության իրավունքի կիրառման նպատակով ներկայացված ծանուցման մեջ ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

2. Տեղաբաշխման պլանը

ա. Առաջարկն առաջին հերթին ուղղված է Ընկերության գործող բաժնետերերին, որոնք լրացուցիչ թողարկման բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեն՝ իրենց բաժնեմասերին համամասնորեն: Բաժնետոմսերի՝ նախապատվության իրավունքի կիրառման շրջանակներում չտեղաբաշխված մասը ենթակա է ազատ վաճառքի՝ բաց բաժանորդագրության միջոցով, որի շրջանակներում ներդրողների խմբերի հետ կապված սահմանափակումներ չեն նախատեսվում: Բաժնետոմսերի հրապարակային առաջարկն արվում է ԼՂՀ-ում և ՀՀ-ում, սակայն այն չի սահմանափակում օտարերկրյա անձանց մասնակցության հնարավորությունը:

բ. Քանի որ բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է նախապատվության իրավունքի կիրառման միջոցով, ուստի խոշոր բաժնետերերը, որոնք տիրապետում են 5 և ավելի տոկոսի բաժնետոմսերի, իրավունք ունեն իրենց պատկանող բաժնետոմսերի ծավալին համամասնորեն ձեռք բերել Ազդագրի միջոցով առաջարկվող բաժնետոմսեր, որոնց քանակը կարող է գերազանցել առաջարկի ընդհանուր ծավալի 5 տոկոսը, մասնավորապես՝ ԼՂՀ կառավարությունը՝ 85.56%-ի և «ՎՊՓԲ» ՓԲԸ-ն՝ 6.03% չափով:

գ. Բաժնետոմսերի նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում Բաժնետերերի կողմից ներկայացված ծանուցումը ընդունվելու կամ դրա մերժման մասին Բաժնետերը Ընկերության կողմից տեղեկացվում է բանավոր եղանակով (իսկ նրա պահանջով նաև գրավոր եղանակով): Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման ծանուցման չընդունման և այդ ծանուցմամբ նախատեսված

գործարքի մերժման հիմքերը ներկայացված են Ազդագրի «Առաջարկի ժամկետը և պայմանները» բաժնի 1-ին կետի դ) մասում:

Բաժնետոմսերի բաժանորդագրության ընթացքում կարող են ներդրողների ներկայացված հայտերը բավարվել մասնակիորեն՝ Ազդագրի «Առաջարկի ժամկետը և պայմանները» բաժնի 1-ին կետի ե) մասով սահմանված դեպքում:

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի ընդունման կամ դրա մերժման, ինչպես նաև հայտը մասնակիորեն բավարարվելու մասին Բանկի կողմից ներդրողը տեղակացվում է բանավոր եղանակով, իսկ նրա պահանջով նաև գրավոր եղանակով: Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի մերժման հիմքերը ներկայացված են Ազդագրի «Առաջարկի ժամկետը և պայմանները» բաժնի 1-ին կետի ե) մասով:

Նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում բաժնետիրոջ ծանուցման չընդունման և այդ ծանուցմամբ նախատեսված գործարքի մերժման կամ բաժնետոմսերի բաժանորդագրության հայտերի մերժման դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար փոխանցված դրամական միջոցները Բանկի կողմից ենթակա են վերադարձման տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

դ. Սույն ազդագրի միջոցով բաժնետոմսերի տեղաբաշխման շրջանակում Ընկերության աշխատակիցների համար բաժնետոմսերը ձեռք բերելու արտոնյալ պայմաններ չեն նախատեսված: Միաժամանակ, Ազդագրի միջոցով բաժնետոմսերի տեղաբաշխման (այդ թվում՝ բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության) շրջանակում ներդրողների բոլոր խմբերի համար սահմանված են հավասար պայմաններ, բաժնետոմսերի ձեռք բերման հետ կապված սահմանափակումներ չեն նախատեսված:

3. Տեղաբաշխման գինը

ա. Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեղաբաշխման գինը (այդ թվում՝ նախապատվության իրավունքի կիրառմամբ բաժնետոմսերի ձեռք բերման դեպքում), Ընկերության Տնօրենների Խորհուրդը սահմանել է 1110 դրամ:

Բացի տեղաբաշխման գնի վճարումից բաժնետոմսեր ձեռք բերող անձից այլ ծախսեր և հարկեր չեն պահանջվում:

բ. Բաժնետոմսերի տեղաբաշխման գնի սահմանման ժամանակ Ընկերության տնօրենների խորհուրդը հաշվի է առել հաշվեկշռային մեթոդով Ընկերության զուտ ակտիվների արժեքի մեծությունը 1 բաժնետոմսի հաշվով, ինչպես նաև ֆոնդային բորսայում բաժնետոմսերով իրականացված գործարքների գինը:

4. Տեղաբաշխումը

ա. Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է չերաշխավորված տեղաբաշխման միջոցով՝ լավագույն ջանքերի սկզբունքով: Որպես տեղաբաշխող հանդես է գալիս «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, որի հետ հարաբերությունները կարգավորվում են Կողմերի միջև կնքված «Բաժնետոմսերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին» պայմանագրով:

Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 10:

բ. Ըստ «Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխման մասին» պայմանագրի՝ Բանկը պարտավորվում է Ընկերությանը մատուցել Բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված ծառայությունները՝ Ընկերության կողմից բաժնետոմսերի տեղաբաշխման ժամանակացույցի և պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկության մշակում և տրամադրում, Ընկերության տրամադրած տեղեկատվության հիման վրա Ազդագրի մշակում և համազործակցություն Ընկերության հետ ՀՀ ԿԲ-ում Ազդագրի գրանցման ուղղությամբ, աջակցություն Ընկերությանը բաժնետոմսերի տեղաբաշխման հետ կապված մարքեթինգային աշխատանքներում, աջակցություն Ընկերությանը բաժնետերերի կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման, բաժնետերերի կողմից Բաժնետոմսերի ձեռք բերման արդյունքների ամփոփման և այլ հարցերում, նախապատվության իրավունքի

կիրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերի տեղաբաշխման նպատակով ազատ բաժանորդագրության կազմակերպում՝ չերաշխավորված տեղաբաշխման սկզբունքով:

Բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով Բանկը կազմակերպում է Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն, գործադրում է լավագույն ջանքեր Բաժնետոմսերի պոտենցիալ գնորդներ բացահայտելու և Բաժնետոմսերի տեղաբաշխման առնչությամբ, Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում Բաժնետոմսերի գնորդներին աջակցում է Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացում և այդ նպատակով տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո ամփոփում է տեղաբաշխման արդյունքները, նախապատրաստում է տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին օրենքով սահմանված հաշվետվությունները, ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ ՀԿԳ-ում բաժնետոմսերը Ընկերության թողարկման հաշվից գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու կապակցությամբ, Ընկերության հետ համատեղ կազմակերպում է «ՆԱՍԳԱԶ ՕԷՄԷԲՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայում Բաժնետոմսերի ցուցակման ապահովումը և պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/ փաստաթղթերի) կազմումը և ֆոնդային բորսա ներկայացումը:

Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխման հետ կապված ծառայությունների դիմաց Ընկերությունը Բանկին վճարում է Բաժնետոմսերի տեղաբաշխման ընդհանուր ծավալի (հավաքագրված ընդհանուր գումարի) 1,5 (մեկ ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով գումար: Այդ գումարն ԱԱՀ-ով չի հարկվում համաձայն ՀՀ օրենսդրության:

զ. Բաժնետոմսերի դիմաց վճարումը կատարվում է Բաժնետոմսերի տեղաբաշխման նպատակով Բանկում Ընկերության անունով բացված 2500036910046100 բանկային (տարանցիկ) հաշվին գումարը փոխանցելու կամ կանխիկ մուտքագրելու միջոցով: Բաժնետոմսերի դիմաց վճարումը կարող է կատարվել ցանկացած բանկում վերը նշված հաշվին փոխանցելու միջոցով: Ֆիզիկական անձինք կարող են նաև Բանկի գրասենյակում վճարումը կատարել կանխիկ եղանակով:

դ. Արժեթղթերի հաշիվ կարելի է բացել, ՀԿԳ-ում և ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորված ցանկացած այլ մասնագիտացված պահառուի մոտ:

Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

ա. Ընկերության Խորհրդի 20.08.2010թ-ին ընդունված որոշման համաձայն՝ Ընկերությունը նախատեսում է տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի շրջանառությունը կազմակերպել «ՆԱՍԳԱԶ ՕԷՄԷԲՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում (բաժնետոմսերի առևտրին թույլտվություն ստանալու համար սահմանված պահանջների բավարարման արդյունքում)՝ Ընկերության նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի հետ միասնական ընդհանուր եղանակով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Առաջարկվող բաժնետոմսերի մասով հայցվելու է առևտրին թույլտվություն:

բ. 2009 թ-ի հոկտեմբերից Ընկերությունը հանդիսանում է հաշվետու թողարկող, որի բաժնետոմսերը ցուցակվում են «ՆԱՍԳԱԶ ՕԷՄԷԲՍ ԱՐՄԵՆԻԱ»-ի ցուցակման B մակարդակում:

գ. 2010 թվականի ապրիլի 3-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին շնորհվել է Ընկերության բաժնետոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակ, ըստ որի Բանկը ունի հետևյալ պարտավորությունները.

- Բաժնետոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակ ձեռք բերելու պահից Ֆոնդային բորսայի առևտրային մատաշրջանի ընթացքում անընդհատ ապահովել Բաժնետոմսերի առքի և վաճառքի գնանշումներ՝ նվազագույնը 6 մլն ՀՀ դրամ անվանական ծավալով (6,000 հատ Բաժնետոմսերի համար): Բանկն ազատվում է պարտադիր գնանշում կատարելու պարտավորությունից, եթե նրա կողմից տվյալ առևտրային մատաշրջանի ընթացքում կատարվել է Բաժնետոմսերի 6 մլն ՀՀ դրամ անվանական արժեքից (6,000 հատ Բաժնետոմսերից) ավելի ծավալով գործարք (գործարքներ),

- յուրաքանչյուր ամսվա համար Ընկերությանը տրամադրել Բաժնետոմսերով կատարված գործարքների ծավալների և գների վերաբերյալ տեղեկատվություն,
- Կողմերի միջև կնքված «Բաժնետոմսերի պարտադիր գնանշումներ կազմակերպելու մասին» պայմանագրով սահմանված դեպքերում Խոշոր բաժնետիրոջը ներկայացնել անհրաժեշտ իրացվելիության ապահովման մասին ծանուցում պայմանագրով սահմանված կարգով:
- Պայմանագիրը գործում է 6 ամիս ժամկետով, սակայն պայմանագրի լուծման մասին կողմերից որևէ մեկի կողմից առաջարկություն չներկայացնելու դեպքում պայմանագիրը պարբերաբար երկարաձգված է համարվում հերթական 6 ամսով:
- Բաժնետոմսերի շուկա ստեղծողի գործառույթի իրականացման շրջանակում Խոշոր բաժնետերը (ԼՂՀ Կառավարությունը) համաձայն «Բաժնետոմսերի պարտադիր գնանշումներ կազմակերպելու մասին» պայմանագրի Բանկին պարտավոր է ապահովել անհրաժեշտ իրացվելիությամբ:
- Բանկի կողմից կատարվող երկկողմանի պարտադիր գնանշումները պետք է նպատակատուղված լինեն նրա Ֆոնդային բորսայում Բաժնետոմսերի իրացվելիության ապահովմանը, ինչպես նաև Բաժնետոմսերի կայուն և հիմնավորված գների ձևավորմանը՝ հաշվի առնելով շուկայում ձևավորված իրավիճակը (Բաժնետոմսերի նկատմամբ առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը): Կողմերը համաձայնությամբ շուկայի հավասարակշիռ իրավիճակում նախատեսվում է (երբ բացակայում է պահանջարկի կամ առաջարկի էական գերակշռություն միմյանց նկատմամբ կամ չի գրանցվել տոկոսադրույքների կամ ՀՀ դրամի փոխարժեքի էական փոփոխություն և այլ էական դեպքեր) երկկողմանի գնանշումները պահպանել կայուն մակարդակներում:

Վաճառող բաժնետերերը

1. Սույն ազդագրի միջոցով ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի վաճառքի առաջարկ չի նախատեսվում: Առաջարկը վերաբերում է միայն Ընկերության կողմից լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերին:

Թողարկման և առաջարկի ծախսերը

1. Առաջարկի արդյունքում Ընկերության կողմից ակնկալվող համախառն եկամուտը կազմում է 1,554,000,000 ՀՀ դրամ:

2. Առաջարկի հետ կապված առկա են հետևյալ ծախսերը՝

- Բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման ծառայությունների դիմաց կատարվող ծախսերը կազմելու են բաժնետոմսերի թողարկման ծավալի 1.5%:
- Բաժնետոմսերի տեղաբաշխման հետևանքով տուրքերի և վճարների հետ կապված ծախսեր,
 - «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ Ազդագրի պետական գրանցման ծախսերը Ազդագրի գրանցման համար՝ բազային տուրքի 50-պատիկի չափով (50,000 ՀՀ դրամ),
 - ՀԿԴ-ում բաժնետոմսերի փոխանցման համար ծախսերը կազմում է 200,000 ՀՀ դրամ:
- Մարքեթինգային, ներկայացուցչական և այլ ծախսեր՝ մինչև 5.5 մլն ՀՀ դրամ:

Լրացուցիչ տեղեկատվություն

1. Ներկայացվող տեղեկատվության հետ կապված՝ որևէ խորհրդատու ներգրավված չի եղել:
2. Բանկը Ընկերությանը աջակցել է Ազդագրի կազմման հետ կապված աշխատանքներում՝ համաձայն Կողմերի միջև կնքված «Բաժնետոմսերի չերաշխավորված եղանակով տեղաբաշխման մասին» պայմանագրի:
3. Ներկայացված տեղեկատվության համար աղբյուր է հանդիսանում Ընկերությունը:

ԲԱԺՆԵՏՈՍՄԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորները

ա. Ընկերության ստեղծման պահից մինչև 2008 թվականն ընկած ժամանակահատվածի համար ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Վ.Ս. ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն՝ աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ 042 (տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 05.13.2005թ.):

«Վ.Ս. ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի գտնվելու վայրն է ՀՀ ք.Երևան, Գ.Նժդեհի 48/1:

«Վ.Ս. ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն չի անդամակցում ոչ մի մասնագիտացված միության:

բ. Ընկերության 2009 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ն՝ աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ 020 (տրված ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 31.07.2003թ.): 27.04.2010թ.-ին կայացած Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովում որպես 2010թ-ի ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձ վերահաստատել է «ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ն:

«ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի գտնվելու վայրն է՝ ՀՀ ք.Երևան Տիգրանյան 38/55:

«ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ն չի անդամակցում որևէ մասնագիտացված միության:

գ. Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի փոփոխության պատճառը պայմանավորված է 2009 թվականի ընթացքում Ընկերության կողմից իրականացրած բանակցությունների արդյունքում «ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող պայմաններով: 20.08.2010թ. Ընկերության Տնօրենների խորհուրդը հաստատել է Ընկերության կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար իրականացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին կանոնակարգ»-ը, համաձայն որի Ընկերության ֆինանսա-տնտեսական դրության աուդիտն իրականացնող կազմակերպության ընտրությունն իրականացվելու է մրցութային կարգով:

Ռիսկային գործոններ

ա. Գոյություն ունեն մի շարք ռիսկային գործոններ, որոնք հատուկ են Ընկերությանը և նրա գործունեության ոլորտին, և ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են բացասական ազդեցություն ունենալ թողարկողի և նրա բաժնետոմսերի գնի վրա:

բ. Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթը և դրանից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից: Ներդրողները պետք է հասկանան նաև, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել թողարկողի գործունեության հետ կապված բոլոր ռիսկերը:

գ. Ընկերությունը ներկայացրել է այն ռիսկերը, որոնք նա համարում է էական, սակայն Ընկերությունը ապագայում կարող է առնչվել նաև այլ ռիսկերի հետ: Լրացուցիչ ռիսկերը և անորոշությունները, ներառյալ նրանք, որոնց մասին Ընկերությունը ներկայումս տեղյակ չի կամ կարծում է, որ դրանք էական չեն, նույնպես կարող են հանգեցնել Ընկերության եկամուտների նվազմանը, ծախսերի ավելացմանը, ինչն իր հերթին կարող է հանգեցնել բաժնետոմսերի գների նվազմանը: Ռիսկերի հիմնական տեսակներն են՝

- Քաղաքական ռիսկեր. ԼՂՀ-ն անցումային երկիր է, որտեղ քաղաքական և տնտեսական գործընթացները դեռևս գտնվում են անցումային փուլում: ԼՂՀ քաղաքական դաշտում, այդ թվում՝ ԼՂՀ-ի անկախության ճանաչման գործընթացում ցանկացած բացասական փոփոխություն, հատկապես այնպիսի, որը կարող է ազդեցություն ունենալ ԼՂՀ քաղաքական կայունության վրա կամ կասեցնել ընթացիկ բարեփոխումները, կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև Ընկերության գործունեության և բաժնետոմսերի շուկայական գնի վրա:

- Անցումային շուկաների ռիսկ. ԼՂՀ-ի նման անցումային տնտեսություններով հետաքրքրվող ներդրողները պետք է տեղյակ լինեն, որ այսպիսի շուկաները հակված են ավելի

մեծ ռիսկի, քան զարգացման ավելի բարձր մակարդակում գտնվող շուկաները: Ներդրողները պետք է գիտակցեն նաև, որ ԼՂՀ տնտեսությունը, ինչպես և մյուս անցումային տնտեսությունները, հակված են կարուկ փոփոխությունների և որ Ազդագրում նշված տեղեկությունները կարող են շատ արագ հնանալ: Նախքան ներդրումային որոշում կայացնելը, ներդրողները պետք է նախապես խորհրդակցեն իրենց իրավախորհրդատուների և ֆինանսական խորհրդատուների հետ, որպեսզի կարողանան պատշաճորեն գնահատել առաջարկվող արժեթղթերում ներդրումների ռիսկայնության աստիճանը և դրա համապատասխանությունը իրենց ներդրումային հնարավորություններին:

- Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկ. ԼՂՀ իրավական դաշտում օրենսդրական բարեփոխումների գործընթացը դեռևս չի ավարտվել: Այս բարեփոխումների ճանապարհին օրենսդրական համակարգում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հետագայում կարող են դառնալ անորոշության լրացուցիչ գործոն: ԼՂՀ օրենսդրական դաշտին վերաբերող ցանկացած անորոշություն կարող է հանգեցնել երկրում տնտեսական իրավիճակի վատթարացման և, հետևաբար, ազդել Ընկերության գործունեության վրա: Միաժամանակ, 1990-ականների սկզբին ընդունված մի շարք օրենքներ վերանայման և լրացումների կարիք ունեն, իսկ որոշները առհասարակ պետք է փոխարինվեն նորերով: Ամեն դեպքում, ԼՂՀ օրենսդրական դաշտի բարեփոխումները դեռևս չեն ավարտվել և անորոշ է, թե որքանով այս գործընթացը կարող է աջակցել երկրում տնտեսական գործունեության զարգացմանը:

- Բնակլիմայական պայմանների ռիսկեր. Ընկերության գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ բնակլիմայական պայմաններն և հատկապես գետերի ջրհոսքի ծավալները էական ազդեցություն ունեն նրա գործունեության վերջնական արդյունքների վրա: Ջրայնության նվազումը կարող է հանգեցնել Ընկերության հասույթի կրճատմանը և հետևաբար, ֆինանսական այլ ցուցանիշների էական վատթարացմանը: Այս տեսանկյունից առկա է գիտականորեն հիմնավորված կարծիք, որ գետի ջրհոսքի ծավալներն ուղղակիորեն կապված են արևի ակտիվության պարբերաշրջանների հետ¹: Այսպես, գետի ջրհոսքի նախկին ցուցանիշների վերլուծությունը և դրանց համադրությունը ցիկլային երևույթների հետ հնարավորություն են տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել ապագա ջրհոսքի կանխատեսումներ: 2010թ-ից սկսվել է արևի ակտիվության անկման ժամանակաշրջանը, որը ըստ գիտնականների գնահատականների կարող է տևել 11 տարի. արևի ակտիվության անկման պարբերաշրջանները ուղեկցվում են ջրի մակարդակի բարձրացմամբ:

- Ռիսկեր, որոնք կապված են Ընկերության կողմից արտադրության գործընթացում օգտագործվող սարքավորումների և այլ նյութա-տեխնիկական ռեսուրսների գների բարձրացմամբ. այս ռիսկերը հիմնականում պայմանավորված են երկրի տնտեսությունում գնաճային երևույթների հետ և կարող են նվազագույնի հասցվել Ընկերության հավասարակշռված ֆինանսական քաղաքականության և գործառնական գործունեության արդյունավետության բարձրացման պարագայում:

- Արժույթային ռիսկ. Ընկերության ֆինանսական դրության, իրացվելիության, ֆինանսավորման աղբյուրների, գործունեության արդյունքների վրա այս ռիսկի ազդեցությունը էական չէ, քանի որ Ընկերությունը իրացնում է էլեկտրաէներգիան ԼՂՀ ներքին շուկայում, իսկ երկրի ներքին պահանջարկը չբավարարելու դեպքում՝ ներմուծում Հայաստանի Հանրապետությունից, և համապատասխանաբար բոլոր հաշվարկները թե մատակարարների, թե սպառողների հետ իրականացվում են ՀՀ ազգային արժույթով՝ ՀՀ դրամով, որը ԼՂՀ պաշտոնական վճարամիջոցն է: Այս ռիսկի ազդեցությունը մեծանում է միայն օտարերկրյա ընկերություններից սարքավորումների ձեռք բերման շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարման և Ընկերության կողմից ստացված բանկային վարկերի (արտարժույթով արտահայտված) սպասարկման ժամանակահատվածում:

- Գնաճի ռիսկ. գնաճի մակարդակը ուղղակիորեն կախված է երկրի քաղաքական և տնտեսական իրավիճակից: Հետճգնաժամային վերականգնման փուլում երկրի տնտեսությունը

¹ ,, Временные закономерности изменчивости речного стока в условиях криолитозоны,, О.А.Поморцев (www.lib.tsu.ru), ,,Гетерохронность периодов повышенного увлажнения гумидной и аридной зон,, В.Н.Абросов (www.kulichki.ru)

դեռևս բնութագրվում է գնաճի բարձր մակարդակով: Գնաճի մակարդակի աճը կարող է հանգեցնել տոկոսադրույքների մակարդակի աճին՝ դրա հետ կապված ռիսկերով հանդերձ՝ վճարման ենթակա տոկոսագումարների իրական արժեքի աճ, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ինքնարժեքի աճ՝ էներգակիրների արժեքի, տրանսպորտային ծախսերի, աշխատավարձերի և այլն, մեծացման հետ կապված; ներդրումային ծրագրերի իրացմանն ուղղված միջոցների իրական արժեքի նվազում և այլն: Ընկերության համար այս ռիսկի էական բացասական ազդեցությունը պայմանավորված է նրանով, որ էլեկտրաէներգիայի սակագները առաջիկա 5 տարիների կտրվածքով հաստատված են և կարող են վերանայվել միայն Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում ընդունելուց դեպքում:

- Անհատափառելի ուժի ի հայտ գալու ռիսկ (ֆորս-մաժոր). Ընկերության գործունեության վրա ուղղակի բացասական ազդեցություն կարող են ունենալ նաև ֆորս-մաժորային ռիսկերը: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները և այլն, որոնք դուրս են Ընկերության հսկողությունից:

դ. Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ նշված գործոնների բացասական ազդեցությունները նվազեցնելու համար: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության հսկողությունից դուրս են, այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

Տեղեկատվություն ընկերության մասին

1. Պատմությունը և զարգացումը

ա. Ընկերության ֆիրմային անվանումն է՝
հայերեն

լրիվ՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն

կրճատ՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ռուսերեն

լրիվ՝ Открытое Акционерное Общество «АРЦАХ ГЭК»

կրճատ՝ ОАО «АРЦАХ ГЭК»

անգլերեն

լրիվ՝ “ARTSAKH HEK” Open Joint Stock Company

կրճատ՝ “ARTSAKH HEK” OJSC

բ. Ընկերությունը հիմնադրվել է ԼՂՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի N 484 որոշմամբ (պետական գրանցում է ստացել 2007թ-ի դեկտեմբերի 12-ին «ԱՐՅԱԽ ՀԷԿ» անվանումով և «փակ բաժնետիրական ընկերություն» կազմակերպա-իրավական ձևով), որի համաձայն Ընկերության 100% բաժնետոմսերի սեփականտեր էր ԼՂՀ-ը՝ ի դեմս Կառավարության:

«ԱՐՅԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է «ԱՐՅԱԽ ԷՆԵՐԳ-Ո» ՓԲԸ-ի (գրանցված՝ ԼՂՀ-ի արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 28.02.2005թ., գրանցման համար՝ 443.120.20892, վկայական՝ 001350) առանձնացման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռի համապատասխան:

ԼՂՀ Կառավարության 2008թ. մայիսի 13-ի ««ԱՐՅԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» թիվ 360 որոշման համաձայն «ԱՐՅԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված՝ ԼՂՀ-ի արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 12.12.2007թ., գրանցման համար՝ 443.120.11328, վկայական՝ 02 Ա 001980) վերակազմավորման միջոցով վերակազմակերպվել է «ԱՐՅԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության: 2008թ.-ի հունիսի 9-ից ընկերությունը կրում է «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ ֆիրմային անվանումը և կազմակերպա-իրավական ձևը:

գ. Ընկերությունը առաջին գրանցումը ստացել է ԼՂՀ արդարադատության նախարարության

ռեգիստրի բաժնի կողմից 2007թ-ի դեկտեմբերի 12-ին (գրանցման համարը՝ 443.120.11328, վկայական՝ 02 Ա 001980): Պետական գրանցման պահից մինչև օրս Ընկերությունը փաստացի գործունեություն է իրականացնում:

դ. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն են՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան փողոց, թիվ 10: Կապի միջոցներն են՝ հեռ. (0479) 4-28-58, ֆաքս. (0479) 7-42-14, էլ. փոստ. artsakhhek@mail.ru:

ե. Ընկերության հիմնադրվել և փաստացի գործունեություն է ծավալում ԼՂՀ-ում:

զ. ԼՂՀ-ի էներգետիկայի ոլորտի կարգավորումը կատարվում է 4 հիմնական օրենքներով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Այդ օրենքներն են՝

- «Էներգետիկայի մասին» ԼՂՀ օրենքը,
- «Էներգախնայողության և վերականգնվող էլեկտրաէներգիայի մասին» ԼՂՀ օրենքը,
- «Էներգետիկայի և էլեկտրաէներգիայի սպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ԼՂՀ օրենքը
- «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» ԼՂՀ օրենքը,

է. Հիմնական օրենքը, որը սահմանում է ԼՂՀ էներգետիկայի ոլորտի գործունեության և կարգավորման հիմնական սկզբունքները, «Էներգետիկայի մասին» ԼՂՀ օրենքն է: Այս օրենքը կարգավորում է ԼՂՀ-ում պետական մարմինների, էներգետիկայի ոլորտի ինստիտուտների և էլեկտրաէներգիայի, ջերմային և բնական գազի սպառողների միջև հարաբերությունները:

ը. ԼՂՀ էներգետիկայի ոլորտի կարգավորումն իրականացվում է ԼՂՀ-ի Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը, որը գործում է «Էներգետիկայի մասին» ԼՂՀ օրենքով իրեն տրված իրավասությունների շրջանակներում և անկախ է այդ իրավասություններն իրականացնելիս:

թ. Որպես էլեկտրաէներգիա իրացնող օպերատորներ հանդես են գալիս «ԱՐՅԱԽ ԷՆԵՐԳ-Ո» ՓԲԸ-ն, իսկ 2010թ-ի հունիսից նաև՝ «ԷՅ-Ի-ՋԻ» ՍՊԸ-ն:

ժ. Ընկերության բիզնեսի զարգացման մեջ կարևոր իրադարձություն էր 2010թ-ի ապրիլին Թրդե-1 ՀԷԿ-ի բացումը և շահագործումը, որի շինարարության ծախսերը ֆինանսավորվել են հիմնականում բաժնետոմսերի առաջին հրապարակային տեղաբաշխումից հավաքագրված միջոցների հաշվին: Սոս ապագայում Ընկերությունը նախատեսում է շահագործման հանձնել 3 նոր ՀԷԿ-եր:

2. Ներդրումները

ա. Ստորև ներկայացվում են 01.01.2009-31.08.2010թթ ժամանակահատվածում Ընկերության կողմից կատարված ներդրումները:

Աղյուսակ 10_ 01.01.2009-31.08.2010թթ ժամանակահատվածում Ընկերության կողմից կատարված ներդրումները.

<i>Մեկնում</i>	<i>Ներդրումների ծավալները</i>
Շենք, շինություններ	1,414,737,474.98
Կառուցվածքներ	2,027,044,984.45
Փոխանցող հարմարանքներ	6,310,773.92
Մեքենասարքավորումներ	1,199,895,972.72
Տրանսպորտային միջոցներ	15,340,547.00
Արտադրական, տնտեսական գույք	2,560,599.00

Լիցենզիաներ	4,000,000.00
Բանաձևեր, մոդելներ և նախագծեր	28,951,999.67
Հող և հողատարածք	3,996,400.00
Այլ հիմնական միջոցներ	570,780.00
Ընդամենը	4,703,346,531.74

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

բ. 2010թ-ի ապրիլին շահագործման է հանձնվել Թրդե-1 ՀԷԿ-ը, և Ընկերությունը այսօր իրականացնում է լայնածավալ ներդրումներ երեք փոքր ՀԷԿ-երի՝ Մատաղիս-1, Մատաղիս-2, Թրդե-2, կառուցման ուղղությամբ: «ԼՂՀ ջրային պաշարների յուրացում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2011թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ավարտին հասցնել կառուցվող ՀԷԿ-երի շինարարական աշխատանքները:

գ. Թրդե-1 ՀԷԿ-ի շինարարության ծրագրի արժեքը կազմել է շուրջ 832.5 մլն ՀՀ դրամ, որն իրականացվել է բաժնետոմսերի առաջին տեղաբաշխումից ներգրավված սեփական միջոցների հաշվին:

դ. Աղյուսակ 11-ում ներկայացվում է Մատաղիս-1, Մատաղիս-2, Թրդե-2 ՀԷԿ-երի շինարարության ծրագրերի նախնական արժեքները և դրանց կատարողականները 30.06.2010թ-ի դրությամբ:

Աղյուսակ 11. Ընկերության շինարարության նախնական արժեքները և դրանց կատարողականները 30.06.2010թ-ի դրությամբ.

Ցուցանիշներ	Թրդե 2	Մատաղիս 1	Մատաղիս 2	Ընդամենը
Ծրագրի նախնական արժեքը, մլն ՀՀ դրամ	2000	2900	2100	7000
Ծրագրի կատարողական, մլն ՀՀ դրամ	850	2500	1300	4650

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ե. Աղյուսակում 11-ում ընդգրկված ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ նոր ՀԷԿ-երի շինարարության ծրագիրը 30.06.2010թ-ի դրությամբ կատարվել է 66.4%-ով, ընդ որում Մատաղիս-1 ՀԷԿ-ի շինարարության ծրագիրը, որի արժեքը գնահատվում է 2,900,000,000 ՀՀ դրամ, կատարվել է 86%-ով:

զ. Աղյուսակ 12-ում ներկայացվում են արդեն կառուցված և նախատեսվող ՀԷԿ-երի տեխնիկական ցուցանիշները:

Աղյուսակ 12. ՀԷԿ-երի տեխնիկական և էներգետիկ բնութագրերը.

Բնութագրեր	Չափման միավոր	Թրդե	Թրդե	Մատաղիս	Մատաղիս
		ՀԷԿ-1	ՀԷԿ-2	ՀԷԿ-1	ՀԷԿ-2
Դրվածքային հզորություն	ՄՎտ	3	5.9	4.8	3
Էլ. էներգիայի միջին բազմամյա արտադրանքը	մլն ԿՎտ/ժամ	16.5	24.82	29.2	18.2
Հաշվարկային ճնշումը	մ	236.4	355.5	19.5	11.7
Հաշվարկային ելքը	մ ³ /վրկ	2	2	30	30
Տարեկան ջրհոսքի ծավալը	մլն մ ³	33.76	28.54	632.4	632.4
Հիդրոագրեգատների թիվը	հատ	3	2	3	3
Դերիվացիոն խողովակաշարի երկարությունը	կմ	5	5	0.2	0.02



Դերիվացիոն խողովակաշարի տրամագիծը	հատ/մմ	1020/1000	1020	3*1600/3*2520	3*2520
--	--------	-----------	------	---------------	--------

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Կառուցվող ՀԷԿ-երի նախագծա-նախահաշվային աշխատանքներն իրականացվում են «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից: Նշված ՀԷԿ-երի շինարարության ավարտից հետո Ընկերությունն ձեռնամուխ կլինի Թրդե-3 ՀԷԿ-ի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատրաստմանն ու շինարարությանը:

Քանի որ Մատաղիս-1, Մատաղիս-2 և Թրդե-2 ՀԷԿ-երի կառուցման աշխատանքներն արդեն իսկ սկսվել են Ընկերության կողմից սեփական և փոխառու միջոցներով, նախնական հաշվարկների համաձայն շինարարական աշխատանքները կավարտվեն, և ՀԷԿ-երը կգործարկվեն համապատասխանաբար Թրդե ՀԷԿ-2-ը 2010թ. տարեվերջին, Մատաղիս ՀԷԿ 1-ը 2011թ. հունիսին ու Մատաղիս ՀԷԿ-2-ը՝ 2011թ. օգոստոսին:

Է. Բացի կառուցվող ՀԷԿ-երի շինարարությունից նախատեսվում են նաև մեծածավալ ներդրումներ իրականացնել Սարսանգի ՀԷԿ-ի աշխատանքի հուսալիության և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ը. Ստորև ներկայացվում են առաջիկա տարիներին իրականացվելիք աշխատանքները և կանխատեսվող արժեքները.

Աղյուսակ 14. Սարսանգի ՀԷԿ-ի վրա կատարվող կապիտալ ներդրումների արժեքը (մլն դրամ).

h/h	Աշխատանքի անվանումը	Մտաւոլոր արժեքը մլն.դրամ	Ծանոթություն
1.	Սարսանգի ՀԷԿ-ի 10/35/110 ԿՎ ենթակայանի վերակառուցման ու երկրորդ տրանսֆորմատորի տեղադրման ՆՆՖ-ի կազմում	10.0	
2.	Սարսանգի ՀԷԿ-ի 10/35/110 ԿՎ ենթակայանի վերակառուցումը	400.0	
3.	Սարսանգի ՀԷԿ-ի հիդրոագրեգատների էլեկտրահիդրավիկական կարգավորիչի ձեռք բերում և տեղադրում	200.0	1 ագրեգատի համար 1 ամիս աշխատանք 1 ագրեգատի համար 180,000 եվրո, 2004թ. գներ
4.	Սարսանգի ՀԷԿ-ի հիդրոագրեգատների ավոտմատ գրգռման կարգավորիչի ձեռք բերում և տեղադրում	275.0	1 ագրեգատի համար 2 ամիս աշխատանք 1 ագրեգատի համար 249,000 եվրո, 2004թ գներ
5.	Սարսանգի ՀԷԿ-ում էներգետիկական յուղերի և բարձր արման փորձարկման լաբորատորիաների կառուցում, համապատասխան սարքավորումներով ապահովում	6.0	
6.	Սարսանգի ՀԷԿ-ի ջրի, էլ.էներգիայի հաշվեկշռի հաշվառումի ծրագրավորում	10.0	
7.	Սարսանգի ՀԷԿ-ի վթարային ջրհոսքի հանգույցի պահուստային էլ.սնուցման աշխատանքների կատարում	10.0	
8.	Սարսանգի ՀԷԿ-ի ամբարտակի ֆիլտրացիոն ջրատարի ավերի և հունի մաքրում	10.0	
9.	Սկավառակային փականների, շենքի ներքին լուսավորության, ջեռուցման ցանցերի և լուսամուտների, դռների նորոգում, սարքավորումների ներկրում	9.0	
10.	ԸՆԴԱՄԵՆԸ	930.0	

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

թ. Ընկերությունը վերը նշված ներդրումները նախատեսում է ֆինանսավորել Ազդագրի միջոցով առաջարկվող բաժնետոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցների, Ընկերության շահույթի և բանկային վարկերի ու այլ փոխառությունների հաշվին:


Քիզմեսի նկարագիրը

1. Հիմնական գործունեությունը

ա. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որն էլ հանդիսանում է շահույթի ստացման միակ աղբյուրը: Էլեկտրաէներգիայի արտադրությունն Ընկերությունն իրականացնում է Սարսանգի և Թրդե-1 հիդրոէլեկտրակայանների միջոցով:

բ. Ընկերության հիմնական ակտիվը Սարսանգի հիդրոէլեկտրակայանն է, որը կառուցվել է 1976թ. ԼՂՀ հիմնական գետի՝ Թարքառի վրա և համարվում է նախկին ԽՍՀՄ լավագույն և սարքավորումներով առավելագույնս հագեցած ՀԷԿ-երից մեկը: Սարսանգի ՀԷԿ-ը հագեցած է երկու հիդրոտուրբիններով՝ յուրաքանչյուրը 25 ՄՎտ դրվածքային հզորությամբ և վայրկյանում 33.2 մ³ ջրի օգտագործման ծավալներով: Տուրբինները կապիտալ վերանորոգվում են յուրաքանչյուր 7 տարին մեկ, բացի դրանից ամեն 3 տարին մեկ կատարվում են պարտադիր վերականգնողական աշխատանքներ:

գ. Սարսանգի ՀԷԿ-ը տեղակայված է Սարսանգի ջրամբարի վրա: Վերջինս ունի 500 մլն. մ³ արդյունավետ ծավալ: Ամբարտակի բարձրությունը և լայնությունը կազմում են համապատասխանաբար 730մ և 550մ, որը նույնիսկ եվրոպական երկրների շարքում համարվում է ամենաբարձրերից մեկը: Սարսանգի ՀԷԿ-ն ունի էլեկտրաէներգիայի արտադրության ավելի քան երեսունամյա փորձ, սակայն ջրի հոսքի, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրության վերաբերյալ ամբողջական տվյալները առկա են միայն 1994թ-ից սկսած, որոնք ներկայացված են ստորև բերված գծապատկեր:



Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

դ. Գծապատկերի տվյալների վերլուցությունը ցույց է տալիս, որ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները տարիների ընթացքում փոփոխվում են ջրի հոսքի փոփոխությունների հետ միասին: Բացի այդ, էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները փոփոխվում են նաև ըստ ամիսների: Չնայած գարնանը ջրի հոսք ավելանում է,

Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները դրա հետ մեկտեղ չեն ավելանում: Սա բացատրվում է ՀԷԿ-ի շահագործման համապատասխան քաղաքականությամբ, որը համապատասխանում է ԼՂՀ էլեկտրաէներգիայի պահանջարկի կառուցվածքին: Էլեկտրաէներգիայի պահանջարկը աճում է հատկապես ուշ աշնանը և ձմռանը՝ նվազելով տաք եղանակներին: Այդ իսկ պատճառով, պահանջարկի փոփոխություններին համապատասխանելու համար, Սարսանգի ՀԷԿ-ը կուտակում է ջուրը Սարսանգի ջրամբարում՝ սահմանափակելով էլեկտրաէներգիայի արտադրությունը գարնանը և սկսում է օգտագործել այն ուշ աշնանը և ձմռանը, երբ ջրի հոսքը նվազում է, իսկ պահանջարկը՝ աճում:

ե. Սարսանգի ՀԷԿ-ի կողմից վերջին տարիներին արտադրած էլեկտրաէներգիայի ծավալները եղել են միջինում տարեկան 90-140 մլն ԿՎտ/ժամ, բացառությամբ 2010թ-ի տվյալների: Այն կանխատեսվում է շուրջ 161.25 մլն ԿՎտ/ժամ էլեկտրաէներգիա, իսկ ԼՂՀ էլեկտրաէներգիայի սպառումը՝ 235 մլն ԿՎտ/ժամ: Ըստ էության 2010թ-ին Ընկերությունը պատրաստ է բավարարել ԼՂՀ-ի էլեկտրաէներգիայի պահանջարկի ավելի քան 68%-ը): Պահանջարկի մնացած մասը բավարարվում է ՀՀ-ից ներմուծված էլեկտրաէներգիայի հաշվին:

զ. Սկսած 2009թ.-ից՝ Սարսանգի ՀԷԿ-ի էլեկտրաէներգիայի արտադրության հաշվարկներում առաջնահերթ է ընդունված 1 մլն ԿՎտ/ժամ էլեկտրաէներգիայի արտադրության համար ջրի տեսակարար ծախսի իջեցումը, այսինքն՝ ՀԷԿ-ի աշխատանքը ջրավազանի ջրի վերին մակարդակի բարձր նիշերով, ինչը հնարավորություն է տալիս ջրի նույն քանակի օգտագործման դեպքում ապահովել էլեկտրաէներգիայի ավելի շատ արտադրանք: Ստորև ներկայացվում են 2008-2010թթ-երին Սարսանգի ՀԷԿ-ի կողմից էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները՝ ըստ ամիսների:

Աղյուսակ 15. 2008-2010թթ-երին Սարսանգի ՀԷԿ-ի կողմից էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները՝ ըստ ամիսների:

Ամիսներ	2008թ		2009		2010 (կանխատեսում)	
	Էլ.էներգիայի արտադրանք մլն ԿՎտ/ժամ	1 մլն ԿՎտ/ժամ արտադրանքի համար ջրի տեսակարար ծախս մլն մ3	Էլ.էներգիայի արտադրանք մլն ԿՎտ/ժամ	1 մլն ԿՎտ/ժամ արտադրանքի համար ջրի տեսակարար ծախս մլն մ3	Էլ.էներգիայի արտադրանք մլն ԿՎտ/ժամ	1 մլն ԿՎտ/ժամ արտադրանքի համար ջրի տեսակարար ծախս մլն մ3
Հունվար	10.8	5.42	11.8	5.03	16.05	4.44
Փետրվար	11.2	6.15	7.2	4.89	14.6	4.8
Մարտ	10.2	7.4	8.7	5.58	15.19	4.77
Ապրիլ	2.8	7.39	3.2	5.39	15.34	4.82
Մայիս	5.3	6.16	5.4	4.88	25.89	4.41
Հունիս	5.9	5.08	11.3	4.37	17.18	4.27
Հուլիս	3	4.43	6.4	4.09	9.78	4.26
Օգոստոս	5.4	4.15	10.4	4.16	4.22	4.15
Սեպտեմբեր	3.9	4.26	9.5	3.98	6	4.05
Հոկտեմբեր	6.9	4.38	22.2	3.94	12	4.1
Նոյեմբեր	16.7	4.53	10.3	4.14	12	4.15
Դեկտեմբեր	14.9	4.85	12.9	4.3	13	4.23
Ընդամենը	97	5.32	119.3	4.4	161.25	4.41

Աղբյուրը՝ «ԱՐՅԱՆ ՀԷԿ» ԲԲԸ

է. Սարսանգի ՀԷԿ-ի, հետևաբար նաև Ընկերության գործունեության արդյունավետության գրավականներից մեկը հանդիսանում է Սարսանգի ջրամբարի առկայությունը, որը հնարավորություն է ընձեռում ցածր պահանջարկի և էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների կրճատման ժամանակ կուտակել հոսող ջուրը ջրամբարում և հետագայում օգտագործել՝ կտրուկ ավելացնելով էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները՝ նույնիսկ գետի ջրի բնական հոսքի նվազման դեպքում: Սարսանգի ջրամբարը հնարավորություն է տալիս արդյունավետ կառավարել գետի ջրի բնական հոսքը՝ նվազեցնելով բնակլիմայական

պայմանների ազդեցության ռիսկը որոշակի կարճաժամկետ ժամանակահատվածում:

ը. Ինչ վերաբերում է 1 մլն ԿՎտ/ժամ էլեկտրաէներգիայի արտադրության համար ջրի տեսակարար ծախսի նվազեցմանը, ապա 2009 և 2010թթ-երին 2008 թ-ի համեմատ նկատվել են զգալի արդյունքներ: 2009թ-ին 2008թ-ի համեմատությամբ 1 մլն ԿՎտ/ժամ արտադրանքի համար ջրի տեսակարար ծախսը նվազել է 17.3%-ով, իսկ 2010թ-ին 2009թ-ի համեմատ ջրի տեսակարար ծախսը գրեթե ամփոփոխ է մնացել:

թ. Բնակլիմայական պայմանների նկարագիրը՝ որպես Ընկերության հիմնական գործունեության վրա ազդող կարևորագույն գործոն: ԼՂՀ-ն բնորոշվում է լեռնային արագահոս գետերի առկայությամբ, որոնք ունեն հիդրոէներգետիկ բավականին մեծ պոտենցիալ: Թարթառ գետը հանդիսանում է երկրի ամենախոշոր գետը, որի ընդհանուր երկարությունը հասնում է 200կմ, իսկ ջրհավաք մակերեսը՝ ավելի քան 2650 կմ²: Թարթառ գետի և նրա վտակների աղբյուրները գտնվում են երկրի լեռնահամակարգի ամենաբարձր կետերում՝ ԼՂՀ սահմաններից դուրս: Այն հոսում է Մարտակերտի շրջանով, ընդունում է Թրղի վտակը և հոսում դեպի Ադրբեջանի հանրապետություն: Ռելիեֆը տիպիկ լեռնային է, խիստ կտրատված, որը պայմանավորված է երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններով և ֆիզիկա-աշխարհագրական պայմանների բնույթով: Թարթառ գետը ԼՂՀ-ի համար ունի խիստ մեծ էներգետիկ պոտենցիալ: Այն պատկանում է լեռնային տիպի գետերին, որն ունի ջրի հոսքի սեզոնային տատանումներ: Թարթառն ունի խառը սնուցման համակարգ. սնուցման հիմնական աղբյուրը հանդիսանում են հալոցքային և անձրևային ջրերը, իսկ ստորգետնյա ջրային աղբյուրներն ունեն երկրորդական նշանակություն: Կլիմայական պայմանների տեսանկյունից՝ Մարասնգի և Մատաղիսի ջրամբարները ներառող հատվածը բնութագրվում է մեղմ կլիմայական պայմաններով: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է +13.8°C, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -31°C, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ +35°C: Ոչ սառնամանիքային շրջանի միջին տևողությունն է 252 օր, առավելագույնը՝ 285 օր, նվազագույնը՝ 235 օր:

ժ. Ընկերությունը չի զբաղվում բնական ռեսուրսների արդյունահանմամբ կամ վերամշակմամբ:

ժա. Ընկերությունը չի նախատեսում նոր ապրանքատեսակների արտադրություն:

2. Հիմնական շուկաները

ա. Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է ներքին շուկայում: Արտադրված էլեկտրաէներգիան Ընկերությունը ֆիքսված սակագնով վաճառում է «Արցախէներգո» ՓԲԸ-ին, որն ունի ԼՂՀ տարածքում էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման լիցենզիա: Վաճառքը իրականացվում է համաձայն առքուվաճառքի համապատասխան պայմանագրի, որը գրանցված են ԼՂՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից: Վաճառքի գները որոշվում են Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների հիման վրա:

բ. Ընկերությունը 2010թ-ի հունիսի 15-ին Էլեկտրաէներգիայի առքուվաճառքի պայմանագիր է կնքել «ԷՅ-Ի-ՋԻ» ՍՊԸ-ի հետ: Վերջինիս հետ համագործակցությունը ունի ռազմավարական նշանակություն՝ Ընկերության կողմից արտադրված էլեկտրաէներգիայի արտահանման ուղղությամբ:

գ. Ընկերության ստեղծման պահից մինչև 2008թ-ի ապրիլ ընկած ժամանակահատվածը արտադրված էլեկտրաէներգիան վաճառվում էր «Արցախէներգո» ՓԲԸ-ին 3 դրամ/ԿՎտ/ժամ (առանց ԱԱՀ) ֆիքսված սակագնով: ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի՝ 2008թ-ի ապրիլի 20-ի որոշման համաձայն Ընկերության համար սահմանվել է 3.5 դրամ/ԿՎտ/ժամ սակագին: Ընկերության դիմումի հիման վրա Հանձնաժողովը վերանայել է գործող սակագները և 2008թ-ի հոկտեմբերի 1-ի թիվ 51Ա որոշմամբ սահմանել է նոր սակագին՝ 9 դրամ/ԿՎտ/ժամ, որը սկսել է գործել 2008թ. նոյեմբերի 1-ից: 2010թ-ի հուլիսից սակագները վերանայվել են և սահմանվել է Մարասնգի ՀԷԿ-

ի արտադրանքի համար 9 դրամ/ԿՎտ/ժամ, իսկ Թրդե-1 ՀԷԿ-ի համար՝ 18 դրամ/ԿՎտ/ժամ սակագին:

դ. ԼՂՀ էներգետիկայի համակարգը կազմված է երկու հիմնական ոլորտներից՝ գազի և էլեկտրաէներգիայի ոլորտներից: Էլեկտրաէներգիան դեռևս մնում է էներգիայի հիմնական աղբյուրը ԼՂՀ բնակչության և տնտեսության (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն և ծառայություններ) համար:

Աղյուսակ 16-ում ներկայացվում են ԼՂՀ էլեկտրաէներգիայի հաշվեկշիռը 2005-2010թթ-ի առաջին կիսամյակի համար:

Աղյուսակ 16. ԼՂՀ էլեկտրաէներգիայի հաշվեկշիռը, մլն ԿՎտ/ժամ

	2005	2006	2007	2008	2009	2010
Արտադրություն	112.1	69.1	90.4	97.1	119.3	161.25
Ներմուծում	115.7	154	145.2	132.7	134.7	98.0
Արտահանում	-17.7	-3.4	-10.1	- 5.7	- 25.5	-24.25
Ընդամենը սպառված էլ.էներգիա	210.1	219.7	225.5	224.1	228.5	235

Աղբյուրը՝ ԼՂՀ Ազգային Վիճակագրական ծառայություն, «Արցախէներգ» ՓԲԸ

ե. Վերջին 5 տարիներին էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառումը աճել է, սակայն այն դրսևորվել է աճի նվազող տեմպով, մասնավորապես՝ 2006թ.-ին 2005թ-ի համեմատությամբ էլեկտրաէներգիայի սպառումը աճել է 4.6%-ով, 2007թ-ին 2006թ-ի համեմատությամբ՝ 2.6%, իսկ 2009թ-ին 2008թ-ի համեմատությամբ՝ 1.97%-ով: Չնայած դրան՝ նշված տարիների ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները կտրուկ տատանվել են և մշտապես պահանջարկի մի մասը բավարարվել է էլեկտրաէներգիայի ներմուծման ճանապարհով: Հատկանշական է, որ 2009 թվականին արտադրության ճավալները գերանցել են 2005 թվականի ծավալները՝ շուրջ 6.5-ով, ինչը վերջին 5 տարիների ընթացքում ամենաբարձր ցուցանիշն է եղել: Միաժամանակ, Ընկերության կանխատեսումներով 2010 թվականին նախատեսվում է արտադրել շուրջ 161.25 մլն ԿՎտ/ժամ էլեկտրաէներգիա, ինչը 35%-գերազանցում է 2009թ-ի ցուցանիշը:

զ. Էլեկտրաէներգիայի պահանջարկի կառուցվածքում ամենախոշոր սպառողները արդյունաբերությունն ու բնակչությունն են՝ կազմելով 2010 թվականի առաջին կիսամյակի պահանջարկի համապատասխանաբար 35.7% և 34.2%-ը: Ինչ վերաբերում է բաշխման կորուստներին, ապա, դրանց նվազեցմանն ուղղված է ԼՂՀ էլեկտրաէներգիայի բաշխման ցանցերի վերակառուցում և վերազինում» ծրագիրը, համաձայն որի նախատեսվում է բաշխման կորուստները նվազեցնել մինչև 12%: Աղյուսակ 17-ում ներկայացվում են ԼՂՀ-ում էլեկտրաէներգիայի սպառման կառուցվածքը՝ 2008-2010թթ.-ների համար:

Աղյուսակ 17. ԼՂՀ-ում էլեկտրաէներգիայի սպառման կառուցվածքը՝ 2008-2010թթ.-ների համար

ԼՂՀ էլեկտրաէներգիայի սպառման կառուցվածքը, մլն ԿՎտ/ժամ						
	2008		2009		2010 I կիսամյակ	
	մլն ԿՎտ/ժամ	%	մլն ԿՎտ/ժամ	%	մլն ԿՎտ/ժամ	%
Բնակչություն	72,517	32.4	75,756	33.2	41,679	34.2
Արդյունաբերություն	78,816	35.2	82,117	35.9	43,407	35.7
Պաշտպանության նախարարություն	27,621	12.3	28,024	12.3	15,154	12.4
Կորուստներ	45,188	20.2	42,613	18.6	21,482	17.6
Ընդամենը	224,142	100.0	228,510	100.0	121,722	100.0

Աղբյուրը՝ ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն

ԼՂՀ-ում բնակչության մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառումը 2009թ. կազմել է 1,758 կՎտ/ժամ, ինչը 2008թ-ի համեմատ աճել էր 1.97%-ով:

է. Ընկերությունը էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում մրցակիցներ չունի և ԼՂՀ-ում էլեկտրաէներգիա արտադրող միակ կազմակերպությունն է:

ը. Ապագայում նոր մրցակիցների ի հայտ գալու վերաբերյալ տեղեկություններ հայտնի չեն:

թ. Ընկերությունը որևէ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերի և միությունների չի անդամակցում:

ժ. ԼՂՀ-ում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ: ԼՂՀ-ում և նրանից դուրս Ընկերությունը չունի դուստր ընկերություններ:

Հիմնական միջոցները

1. Աղյուսակում 18-ում ներկայացված է Ընկերության տրամադրության տակ գտնվող հիմնական միջոցների կազմ ու կառուցվածքը (30.06.2010թ-ի դրությամբ).

Աղյուսակ 18. Հիմնական միջոցների կազմ ու կառուցվածքը՝ 30.06.2010թ-ի դրությամբ, հազար դրամ

Հիմնական միջոցներ	Նկարագիրը	Մնացորդը
Օ ենքեր	հաշվեկշռային արժեք	2,582,512
	արժեք	3,669,073
	կուտակված մաշվածություն	1,086,561
Կառուցվածքներ	հաշվեկշռային արժեք	118,379
	արժեք	119,923
	կուտակված մաշվածություն	1,544
Փոխանցող հարմարանքներ	հաշվեկշռային արժեք	6,549
	արժեք	8,981
	կուտակված մաշվածություն	2,432
Մեքենաներ և սարքավորումներ	հաշվեկշռային արժեք	3,083,957
	արժեք	4,392,862
	կուտակված մաշվածություն	1,308,905
Տրանսպորտային միջոցներ	հաշվեկշռային արժեք	23,711
	արժեք	37,108
	կուտակված մաշվածություն	13,397
Արտադրական և տնտեսական գույք, գործիքներ	հաշվեկշռային արժեք	5,747
	արժեք	10,699
	կուտակված մաշվածություն	4,952
Բազմամյա տնկարկներ	հաշվեկշռային արժեք	1,031
	արժեք	1,820
	կուտակված մաշվածություն	789
Այլ հիմնական միջոցներ	հաշվեկշռային արժեք	391
	արժեք	558
	կուտակված մաշվածություն	167
Հողամասեր	հաշվեկշռային արժեք	2,800
	արժեք	2,800
	կուտակված մաշվածություն	0
Ընդամենը	հաշվեկշռային արժեք	5,825,077
	արժեք	8,243,824
	կուտակված մաշվածություն	2,418,747

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

2. Ընկերությունը պլանավորվող հիմնական միջոցները հիմնականում սահմանափակվում են կառուցվող ՀԷԿ-երի կառուցման շրջանակում կատարվող կապիտալ ներդրումներով:

Կապիտալ ռեսուրսները (սպասիվները)

1. Աղյուսակ 19.-ում ներկայացվում է Ընկերության սեփական կապիտալի կազմը 31.12.2008, 31.12.2009, 30.06.2010 դրությամբ:

Աղյուսակ 19. Ընկերության սեփական կապիտալի կառուցվածքը 2008-2010թթ.-երի համար, հազար դրամ

	31.12.2008	31.12. 2009	30.06.2010
Սեփական կապիտալ	5,100,000	5,962,074	5,962,074
Էմիսիոն եկամուտ	0	43,104	43,104
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	13,087	13,087	0
Կուտակված շահույթ	72,960	730,401	735,730
Պահուստային կապիտալ	0	0	43,645
Սեփական կապիտալի այլ տարրեր	0	0	0
Ընդամենը սեփական կապիտալ	5,186,047	6,748,666	6,784,553

Աղբյուրը՝ «ԱՐՅԱՆ ՀԷԿ» ԲԲԸ

2009թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության սեփական կապիտալը գերազանցում է նախորդ տարեվերջի նույն ցուցանիշը 1,562,619,000 ՀՀ դրամով: Նման փոփոխությունը պայմանավորված է բաժնետոմսերի հրապարակային առաջարկի իրականացմամբ, որի արդյունքում Ընկերության կանոնադրական կապիտալը ավելացավ 862,074,000 ՀՀ դրամով և ձևավորվեց 43,104,000 ՀՀ դրամի չափով էմիսիոն եկամուտ: Սեփական կապիտալի աճի մյուս աղբյուրը կուտակված շահույթն էր, ինչի հաշվին սեփական կապիտալը ավելացել է 657,441,000 ՀՀ դրամով:

2010թ-ի առաջին կիսամյակի վերջի դրությամբ Ընկերությունը արդեն ունեցել է 735,730,000 ՀՀ դրամի շահույթ, ինչը գերազանցում է 2009թ-ի տարեվերջի ցուցանիշը: Ընկերությունը համալրել է պահուստային կապիտալը 43,645,000 ՀՀ դրամով:

2. Աղյուսակ 20.-ում ներկայացված է Ընկերության պարտավորությունների կազմը 31.12.2008, 31.12.2009, 30.06.2010 դրությամբ:

Աղյուսակ 20. Ընկերության պարտավորությունների կառուցվածքը 2008-2010թթ.-երի համար, հազար դրամ

	31.12.2008	31.12.2009	30.06.2010
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	0	1,470,930	3,270,392
Հետաձգված հարկային պարտավորություններ	0	0	0
Ակտիվների վերաբերող շնորհներ	0	0	0
Ոչ ընթացիկ պահուստներ	0	0	0
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	0	0	0
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	0	1,470,930	3,270,392
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	509,179	320,349	238,875



Կարճաժամկետ փոխառություններ	130,000	283,493	538,875
Կրեդիտորական պարտքեր գումարների գծով	6,811	6,633	12,487
Ստացված ընթացիկ կանխավճարներ	240,500	56,500	0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	5,319	1,124	2,996
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	759	1,838	1,992
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	0	67	10,174
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)	0	0	511,612
Այլ կրեդիտորական պարտքեր	92	134	104
Եկամուտներին վերաբերող շնորհներ	0	0	0
Ընթացիկ պահուստներ	0	0	0
Այլ ընթացիկ պարտավորություններ	0	0	0
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	892,660	670,138	1,317,115
Ընդամենը պարտավորություններ	892,660	2,141,068	4,587,507

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

2009թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտավորությունները գերազանցում են նախորդ տարեվերջի նույն ցուցանիշը 1,248,408,000 ՀՀ դրամով: Նման փոփոխությունը պայմանավորված է առավելապես երկարաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների ներգրավմամբ, որոնց մեծությունը 2009թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,470,930,000 ՀՀ դրամ: Ինչ վերաբերում է ընթացիկ պարտավորություններին, ապա վերջիններս նվազել են. 2009թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացիկ պարտավորությունների մեծությունը կազմել է 670,138,000 ՀՀ դրամ, ինչը նախորդ տարեվերջի ցուցանիշից փոքր է 222,522,000 ՀՀ դրամով: 30.06.2010թ. վերջի դրությամբ Ընկերության պարտավորությունները կազմել են 4,587,507,000 ՀՀ դրամ, ինչը 2009թ-ի դեկտեմբերի 31-ի ցուցանիշը գերազանցում է 2,446,439,000 ՀՀ դրամով. դա պայմանավորված է թե ընթացիկ, թե ոչ ընթացիկ պարտավորությունների աճով: Երկարաժամկետ բանկային վարկերն ու փոխառությունները նախորդ տարեվերջի ցուցանիշը գերազանցում են 1,799,462,000 ՀՀ դրամով, իսկ ընթացիկ պարտավորությունները՝ 646,977,000 ՀՀ դրամով:

Վարկերի ներգրավման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀԷԿ-երի շինարարության աշխատանքների անընդհատության ապահովմամբ:

3. Աղյուսակ 21.-ում ներկայացվում են Ընկերության դրամական հոսքերը պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար:

Աղյուսակ 21. Ընկերության դրամական հոսքերը 2008-2010թթ.-երի համար, հազար դրամ

Դրամական հոսքերը	31.12.2008	31.12.2009	30.06.2010
Գործառնական գործունեություն			
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից մուտքեր	276,494	1,107,627	724,603
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	248,663	219,826	2,261
Ընդամենը ԳԳ մուտքեր	525,157	1,327,453	726,864
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով	42,383	22,969	15,248
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	293,472	157,868	59,654
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	80,152	95,841	50,665
Վճարումներ բյուջե	33,822	33,014	59,976
Վճարումներ սոց.ապ.հիմնադրամ	13,672	15,955	10,725

Գործառնական այլ գործունեությունից ելքեր	3,187	7,097	2,337
Ընդամենը ԳԳ ելքեր	466,688	332,744	198,605
Ներդրումային գործունեություն			
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր	10,200	0	0
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից մուտքեր	0	363	0
Շահաբաժինների և տոկոսների ստացումից մուտքեր	16	0	231
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր	0	56	0
Ընդամենը ՆԳ մուտքեր	10,216	419	231
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	673,093	2,562,336	1,731,755
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից և փոխառությունների տրամադրումից			200,000
Ներդրումային այլ գործունեությունից ելքեր	0	403,007	0
Ընդամենը՝ ՆԳ ելքեր	673,093	2,965,343	1,931,755
Ֆինանսական գործունեություն			
Մեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից մուտքեր	0	887,074	0
Մտացված վարկերից և փոխառություններից մուտքեր	638,229	2,540,673	2,537,204
Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր	0	2,191,580	1,735,393
Ընդամենը՝ ՖԳ մուտքեր	638,229	5,619,327	4,272,597
Մտացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր	0	1,149,621	820,634
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	0	132,368	84,595
Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր	30,480	2,314,052	1,740,431
Ընդամենը՝ ՖԳ ելքեր	30,480	3,596,041	2,645,660

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Ընկերության դրամական մուտքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում ֆինանսական գործունեությունից մուտքերին, մասամբորայես՝ ստացված վարկերից ու փոխառություններից, ինչպես նաև ֆինանսական այլ գործունեությունից:

2010թ-ի առաջին կիսամյակի վերջի դրությամբ համախառն դրամական մուտքերի 14.5%-ը բաժին է ընկնում գործառնական գործունեությունից մուտքերին, ֆինանսական գործունեությունից մուտքերը կազմում են 85.4%-ը, իսկ մնացած չնչին մասը բաժին է ընկնում ներդրումային գործունեությունից մուտքերին:

4. Ընկերության կողմից փոխառություններ ներգրավելը պայմանավորված է նրանով, որ Թղթրե 2, Մատաղիս 1 և Մատաղիս 2 ՀԷԿ-երի կառուցման համար պահանջվում է ծախսերի ավելի մեծ ծավալ, քան սույն առաջարկի միջոցով բաժնետոմսերի վաճառքից ստացված դրամական միջոցները:

5. Գոյություն չունեն կապիտալ ռեսուրսների օգտագործման այնպիսի սահմանափակումներ, որոնք կարող են էապես ազդել Ընկերության գործունեության վրա:

Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները

1. Ընկերությունը և խոշոր բաժնետերը Ընկերության հետագա զարգացումը տեսնում են արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալների ընդլայնման մեջ, որը հիմնականում հնարավոր է նոր արտադրական միավորների՝ ՀԷԿ-երի կառուցման հաշվին: Ըստ այդմ, Ընկերության համար կարևոր նշանակություն ունի նոր ՀԷԿ-երի կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքների կազմակերպումը: Մասնավորապես՝ «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի և «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի միջև կնքված պայմանագրերի համաձայն կազմվել են ՀԷԿ-երի բանվորական նախագծերը: «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կատարած հաշվարկների համաձայն նոր ՀԷԿ-երի կառուցման նախնական արժեքն է 7 մլրդ ՀՀ դրամ: Հետազոտական և

զարգացման աշխատանքների շրջանակում մատուցած ծառայությունների համար «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ին վճարվել է 40,706 հազար ՀՀ դրամի գումար:

Արտոնագրերը և լիցենզիաները

1. Ընկերությունը ունի ԼՂՀ-ում էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության հետևյալ լիցենզիաները՝

- Սարսանգի ՀԷԿ-ում էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա (Լիցենզիա N0001)՝ տրված 2008թ-ի մարտի 20-ին ԼՂՀ-ի հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:
- Թրդի-1 ՓՀԷԿ-ում էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա (Լիցենզիա N0004)՝ տրված 2010թ-ի հունիսի 11-ին ԼՂՀ-ի հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:

Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

1. Ներկայացված կանխատեսումները հիմնված են Ընկերության ղեկավարության կողմից կատարված կանխատեսումների հիման վրա:

2002-2009թթ. Թարթառ գետի փաստացի ջրհոսքի ծավալների և նախորդ տարիներին կատարված չափումների համադրման արդյունքում Ընկերությունը կազմել է 2011-2015թթ համար սպասվելիք ջրհոսքի միջին տարեկան ծավալները Թարթառ, Թրդե գետերի, ինչպես նաև Սարսանգի ՀԷԿ-Մատաղիս հատվածում կողային փոքր գետերի համար: Ելնելով ստացված տվյալներից, ինչպես նաև այն հանգամանքից, որ Մատաղիս ՓՀԷԿ-երի թողարկումից հետո Սարսանգի ՀԷԿ-ը աշխատելու է ընդամենը մեկ ագրեգատով, քանի որ Մատաղիս 1 և 2 կայանները նախատեսված են ընդամենը 30 մ3/վրկ ջրհոսքի համար, 2011-2015թթ Ընկերության բոլոր կայաններում էլեկտրաէներգիայի սպասվելիք արտադրանքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 22. Հասույթի կանխատեսումը 2011-2015թթ-երի համար

	Սարսանգ	Թրդե-1	Թրդե-2	Մատաղիս-1	Մատաղիս-2	Ընդամենը
Արտադրանք, մլն ԿՎտ/ժամ						
2011	140.74	15.78	20.29	14.55	5.45	196.81
2012	140.74	15.78	22.21	29.04	18.54	226.31
2013	140.74	15.78	22.21	29.04	18.54	226.31
2014	140.74	15.78	22.21	29.04	18.54	226.31
2015	140.74	15.78	22.21	29.04	18.54	226.31
Սակագներ, ՀՀ դրամ						
2011	9	18	18	18	18	-
2012	9	18	18	18	18	-
2013	9	18	18	18	18	-
2014	9	18	18	18	18	-
2015	9	18	18	18	18	-
Հասույթ, մլն ՀՀ դրամ						
2011	1266.66	284.04	365.22	261.9	98.1	2275.92
2012	1266.66	284.04	399.78	522.72	333.72	2806.92
2013	1266.66	284.04	399.78	522.72	333.72	2806.92
2014	1266.66	284.04	399.78	522.72	333.72	2806.92
2015	1266.66	284.04	399.78	522.72	333.72	2806.92

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Ընկերությունը 2011 թվականի համեմատությամբ 2012թ-ից նախատեսում է արտադրել տարեկան 29.5մլն ԿՎտ/ժամ-ով ավել էլեկտրաէներգիա և արդյունքում բավարարել ԼՂՀ-ի՝

Էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկի մոտ 96%-ը: Ընկերության կողմից կատարված ծախսերը ներկայացվում են աղյուսակ 23-ում և ներառում են արտադրված էլեկտրաէներգիայի ինքնեռաժեքը, վարչական ծախսերը, կապիտալ ծախսերը և այլ ծախսեր:

Աղյուսակ 23. Էլեկտրաէներգիայի ինքնարժեքը 2011-2015թթ.-ների համար

Ինքնարժեք, հազար ՀՀ դրամ	2011	2012	2013	2014	2015
ՀԷԿ-երի աշխատողների թվաքանակ	150	150	150	150	150
Աշխատավարձի աճ %	10%	10%	10%	10%	10%
Աշխատավարձ	244,610	269,071	295,978	325,576	358,134
Մոց. վճար	36,692	40,361	44,397	48,836	53,720
Տեղական հարկեր	500	650	650	650	650
Ավտոճանապարհային հարկ	9,104	11,227	11,227	11,227	11,227
Անվտանգություն	53,500	56,200	59,000	62,000	65,100
Էլ. էներգիայի ծախս	19,000	22,000	22,000	22,000	22,000
Նյութական ծախսեր	28,000	29,000	30,000	31,000	32,000
Ընդամենը ինքնարժեք	391,406	428,509	463,252	501,289	542,831

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Ինքնարժեքի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում աշխատողների աշխատավարձերին ուղղվող ծախսումները: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկման ժամանակ կատարվել է աշխատավարձերի վերանայում, ինչի արդյունքում դրանք նախատեսվում է բարձրացնել տարեկան 10%-ով:

Ինքնարժեքի հաջորդ տարրերն են էլեկտրաէներգիայի և նյութերի սպառումը: Ծախսվող էլեկտրաէներգիայի հաշվարկման համար հիմք են ծառայել էլեկտրաէներգիայի սպառման սակագնի կանխատեսվող արժեքները, ինչպես նաև Սարսանգի ՀԷԿ-ի կողմից կատարվող համապատասխան ծախսումները՝ նոր ՀԷԿ-երի համար ճշգրտումներով: Ինքնարժեքի մեջ են ներառվել նաև տեղական տուրքերն ու ճանապարհային հարկը (ԼԳՀ հատուկ հարկ՝ համախառն հասույթի 0.4%-ի չափով):

Աղյուսակ 24. Վարչական ծախսերը 2011-2015թթ-երի համար

Վարչական ծախսումների կանխատեսումներ, հազար դրամ	2011	2012	2013	2014	2015
Աշխատավարձ	70,869	85,043	102,052	122,462	146,955
Տրանսպորտ	1,000	1,050	1,100	1,150	1,200
Ֆինանսական ծախսեր	8,000	8,500	9,000	9,500	10,000
Կապ	2,600	2,700	2,800	2,900	3,000
Անվտանգություն	5,200	5,400	5,600	5,800	6,000
Գրասենյակային	2,200	2,300	2,400	2,500	2,600
Վարձակալական	4,500	4,600	4,700	4,800	4,900
Ընդամենը	94,369	109,593	127,652	149,112	174,655

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Վարչական ծախսերի կանխատեսման համար հիմք են հանդիսացել Սարսանգի ՀԷԿ-ի վարչական ծախսերի կառուցվածքը՝ ճշգրտված կառուցվող ՀԷԿ-երի չափերի և առանձնահատկությունների հիման վրա:

Աղյուսակ 25. Կանխատեսվող շահույթի հաշվարկը 2011-2015թթ-երի համար


	2011	2012	2013	2014	2015
Հասույթ, հազար ՀՀ դրամ	2,275,920	2,806,920	2,806,920	2,806,920	2,806,920
Ինքնարժեք, հազար ՀՀ դրամ	391,556	428,659	463,402	501,439	542,981
Ամորտիզացիա, հազար ՀՀ դրամ	200,000	250,000	250,000	250,000	250,000
Համախառն եկամուտ, հազար ՀՀ դրամ	1,684,364	2,128,261	2,093,518	2,055,481	2,013,939
Վարչական ծախսեր, հազար ՀՀ դրամ	86,369	101,093	118,652	139,612	164,655
Գործառնական շահույթ, հազար ՀՀ դրամ	1,597,995	2,027,168	1,974,866	1,915,869	1,849,284
Ֆինանսական ծախսեր, հազար ՀՀ դրամ	8,000	8,500	9,000	9,500	10,000
Չուտ շահույթ նախքան շահութահարկի գծով ծախսերի նվազեցումը, հազար ՀՀ դրամ	1,589,995	2,018,668	1,965,866	1,906,369	1,839,284
Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսերի նվազեցումից հետո, հազար ՀՀ դրամ	1,510,495	1,917,735	1,867,573	1,811,051	1,747,462
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով	205	260	254	246	237

Աղբյուրը՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

2. Ընկերության զուտ շահույթի և, առհասարակ, ֆինանսական հոսքերի կանխատեսումներում Ընկերության ղեկավարությունը հիմնվել է էլեկտրաէներգիայի գործող սակագների վրա, ինչպես նաև հաշվի չի առել 2010-2015թթ-երի ընթացքում նոր ՀԷԿ-երի, մասնավորապես՝ Թղրե 3 ՀԷԿ-ի գործարկման արդյունքում լրացուցիչ ֆինանսական հոսքերի ազդեցությունը Ընկերության կանխատեսվող ցուցանիշների վրա:

Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

1. Ընկերության կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը.



2. Ընկերության կառավարման մարմիններն են Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը (այսուհետև՝ Ժողով), Տնօրենների Խորհուրդը (այսուհետև՝ Խորհուրդ), Գլխավոր Տնօրենը և Վերստուգող հանձնաժողովը: Սույն մասում որպես կառավարման մարմնի օղակ ներկայացված է նաև Ընկերության կորպորատիվ քարտուղարի մասին տեղեկությունները: Կառավարման մարմինների իրավասություններն ու պարտականությունները սահմանվում են Ընկերության Կանոնադրությամբ, ինչպես նաև առանձին կանոնակարգերով՝ «Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին», «Տնօրենների Խորհրդի մասին», «Գլխավոր Տնօրենի մասին», «Վերստուգող հանձնաժողովի մասին», «Կորպորատիվ քարտուղարի մասին»:

Բաժնետերերի ընդհանուր ժողով

Բաժնետերերի ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ժողովները գումարվում են համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով, Ստեփանակերտ քաղաքում, իսկ Խորհրդի որոշմամբ կարող է սահմանվել Ժողովի գումարման այլ վայր:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան Ժողով: Ընկերության կանոնադրության համաձայն՝ Ընկերության տարեկան Ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից երկու ամիս հետո՝ չորս ամսվա ընթացքում: Ժողովները գումարվում են Խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ և գրավոր որոշմամբ: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև Գլխավոր Տնօրենի, Վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտը իրականացնող անձի կամ Ընկերության՝ առնվազն 10% ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Ժողովի գումարման մասին ծանուցման ձևը սահմանվում է ժողովի գումարման մասին որոշմամբ և կարող է իրականացվել պատվիրված նամակներ ուղղարկելու, ծանուցումն անձամբ հանձնելու, էլեկտրոնային փոստով առաքելու կամ Ընկերության ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով: Ընկերությունը պարտավոր է Ժողովի գումարման մասին Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 30 օր առաջ:

Ժողովն իրավունք ունի Ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների առնվազն երեք քառորդով ընդունել որոշումներ հետևյալ հարցերի վերաբերյալ՝

- ա) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատումը,
- բ) Ընկերության վերակազմակերպումը,
- գ) Ընկերության լուծարումը,
- դ) Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
- ե) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
- զ) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը,
- է) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը: Սույն կետի «գ» և «զ» ենթակետերով սահմանված դեպքերում կողմ քվեարկված ձայների քանակը չպետք է պակաս լինի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից:

Ժողովն իրավունք ունի Ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասությամբ ընդունել որոշումներ հետևյալ հարցերի վերաբերյալ՝

- ա) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- բ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- գ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը և հաշվիչ հանձնաժողովի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- դ) Ընկերության աուդիտը իրականացնող անձի հաստատումը,
- ե) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,

- զ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- է) Ժողովի վարման կարգի հաստատումը,
- ը) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան) և բաժանումը,
- թ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը, որի ծավալը գերազանցում է Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 25 տոկոսը,
- ժ) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
- ժա) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք) նախատեսված դեպքերում,
- ժբ) գործարքների կնքման մասին, որում առկա է շահագրգռվածություն, որոշման ընդունումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում,
- ժգ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,
- ժդ) Ընկերության մարմինների գործունեությունը կարգավորող կանոնակարգերի հաստատումը, մասնավորապես՝
 - Ժողովի մասին կանոնակարգը,
 - Խորհրդի մասին կանոնակարգը,
 - Վերստուգող հանձնաժողովի մասին կանոնակարգը,
 - Հաշվիչ հանձնաժողովի մասին կանոնակարգը:
- ժե) Խորհրդի անդամներին իրենց պարտականությունների կատարման հետ կապված պարգևավճարների և/կամ ծախսերի փոխհատուցման սահմանում և դրանց չափերի որոշում,
- ժզ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամներին իրենց (իր) պարտականությունների կատարման հետ կապված պարգևավճարների և/կամ ծախսերի փոխհատուցման սահմանում և դրանց չափերի որոշում,
- ժէ) բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով նախաձեռնող անձի կամ մարմնի կողմից տվյալ ժողովի նախապատրաստման և անցկացման հետ կապված ծախսերի փոխհատուցման որոշում:

Տնօրենների Խորհուրդ

Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ ի շահ բոլոր բաժնետերերի:

Խորհրդի անդամներն ընտրվում են Ժողովի կողմից և նրանց լիազորությունների ժամկետը սահմանվում է մինչև հաջորդ տարեկան Ժողովի գումարումը: Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը: Խորհրդի անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք:

Խորհուրդը ընտրվում է կոնուլյատիվ (գումարային) քվեարկությամբ՝ բաղկացած առնվազն 5 (հինգ) անդամից:

- Ընկերության գործունեության ղեկավարումն իրականացնելիս Խորհուրդը.

- ա) որոշում է Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները և սահմանում է Ընկերության երկարաժամկետ ռազմավարությունը,
- բ) հաստատում է ամենամյա ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը (այդ թվում նաև՝ ֆինանսատնտեսական գործունեության պլանը),

- զ) հաստատում է Ընկերության հաստիքացուցակը և վարչակազմակերպական կառուցվածքը,
 - ը) ընդունում է այլ կազմակերպություններում մասնակցություն ունեալու կամ այն դադարեցնելու մասին որոշումներ, եթե այդ որոշումներն իրենից խոշոր գործարք չեն ներկայացնում,
 - ե) նախնական հաստատում է Ընկերության տարեկան հաշվետվությունները,
 - զ) սահմանում է Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափը,
 - է) ընդունում է որոշումներ Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործման մասին,
 - ը) ստեղծում է Ընկերության առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ, դադարեցնում է դրանց գործունեությունը, հաստատում է դրանց կանոնադրությունները,
 - թ) ստեղծում է Խորհրդին կից հանձնաժողովներ և սահմանում է նրանց խնդիրները և գործառույթները,
 - ժա) ընդունում է որոշում Ընկերության վերստուգող հանձնաժողովի կողմից Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում անցկացնելու մասին,
 - ժբ) հավանության է արժանացնում Խորհրդի անդամներին վճարվող պարգևավճարների չափի սահմանման հիմնական չափանիշները,
 - ժբ) հաստատում է Ընկերության սոցիալական ծրագրերը,
 - ժգ) որոշում է Ընկերության գույքի շուկայական արժեքը,
 - ժդ) սահմանում է Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափը և վճարման կարգը,
 - ժզ) սահմանում է Ընկերությունում պարտադիր պահպանվող փաստաթղթերի ցանկը,
 - ժդ) Ընկերության կողմից հողինգային ընկերություններում, առևտրային կազմակերպություններում այլ միություններում մասնակցությունը:
- Խորհուրդը ձևավորում է Ընկերության գործադիր մարմինը, այդ թվում՝ նշանակում է Ընկերության Գլխավոր տնօրենին և ընդունում է նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում:
 - Խորհուրդը լուծում է Ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված հարցերը, այդ թվում՝
 - ա) ընդունում է Ժողովի գումարման մասին որոշումը,
 - բ) հաստատում է Ժողովի օրակարգը,
 - գ) հաստատում է Ժողովին մանակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը,
 - դ) ընդունում է Ժողովի նախապատրաստման և անցկացման հետ կապված այլ հարցերի վերաբերյալ որոշումներ:
 - Խորհուրդն օժտված է Ընկերության բաժնետոմսերի և այլ ներդրումային արժեթղթերի տեղաբաշխման և ձեռքբերման (հետ գնման) հետ կապված իրավասություններով, այդ թվում՝ որոշումներ է ընդունում հետևյալ հարցերի վերաբերյալ՝
 - ա) Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացում, որի ծավալը չի գերազանցում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 25 տոկոսը,
 - բ) տեղաբաշխել պարտատոմսեր և այլ ներդրումային արժեթղթեր, այն ծավալով, որը չի սահմանափակվում գործող օրենսդրությամբ,
 - գ) հաստատում է արժեթղթերի թողարկման մասին որոշումը, արժեթղթերի ազդագիրը և կատարում է դրանցում փոփոխություններ և լրացումներ,
 - դ) Օրենքով սահմանված դեպքերում սահմանում է արժեթղթերի տեղաբաշխման և ձեռքբերման (հետ գնման) գները,
 - ե) ձեռք բերել Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը մինչև Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակի 10 տոկոսի չափով,
 - զ) Օրենքով սահմանված դեպքերում ձեռք բերել Ընկերության տեղաբաշխված պարտատոմսերը և այլ արժեթղթերը,
 - է) հաստատում է մարման նպատակով բաժնետոմսերի ձեռք բերման արդյունքների հաշվետվությունը և բաժնետոմսերի մարման արդյունքների հաշվետվությունը:

- Խորհուրդը ընդունում է որոշումներ հետևյալ գործարքների (կամ մի քանի փոխկապակցված գործարքների) կնքման, փոփոխման և լուծման վերաբերյալ՝
 - ա) Ընկերության ոչ ստանդարտ գործառնություններ (որոնք նախատեսված չեն ֆինանսատնտեսական պլանով) կամ այն գործարքները, որոնք կհանգեցնեն կամ կարող են հանգեցնել Ընկերության ֆինանսատնտեսական պլանի ճշգրտմանը,
 - բ) Ընկերության հաշվեկշռում հաշվառվող Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի տնօրինման հետ կապված գործարքները,
 - գ) այլ կազմակերպությունների բաժնետոմսերով (բաժնեմասերով, փայերով) կատարվող գործարքները,
 - դ) ռազմավարական գործընկերոջ հետ համագործակցության, այդ թվում՝ ցանկացած նախագծում և գործարքում համատեղ մասնակցության վերաբերյալ պայմանագրի, հուշագրի կամ այլ համաձայնագրի կնքումը,
 - ե) տասը միլիոն ՀՀ դրամ և ավելի ծավալի Ընկերության անհատույց գործարքները (այդ թվում՝ բարեգործություն, նվիրատվություն) կամ Ընկերության ոչ առևտրային կազմակերպություններում անդամակցելու նպատակով անդամավճարները (և այլ ծախսերը):
- Խորհուրդը Ժողովին տալիս է առաջարկություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝
 - ա) Ընկերության ֆինանսական տարվա արդյունքներով շահույթի և վնասների բաշխման կարգի վերաբերյալ,
 - բ) վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և դրա վճարման կարգի վերաբերյալ,
 - գ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամներին վճարվող պարգևավճարների և փոխհատուցումների չափերի վերաբերյալ:
- Խորհուրդը նշանակում է Կորպորատիվ քարտուղարին և Խորհրդի քարտուղարին:
- Խորհուրդն Խորհրդի անդամներից ընտրում է Խորհրդի նախագահին՝ Խորհրդի բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ՝ հաշվի չառնելով Խորհրդից դուրս եկած անդամների ձայները: Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերընտրել Խորհրդի նախագահ:
- Խորհուրդն ընդունում է որոշումներ այլ հարցերի վերաբերյալ, որոնք համաձայն Օրենքի կամ Ընկերության կանոնադրության պատկանում են Խորհրդի իրավասությանը: Խորհրդին պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության Գլխավոր տնօրենի լուծմանը:

Գլխավոր տնօրենը

Գլխավոր տնօրենն իրականացնում է միանձնյա գործադիր մարմնի լիազորությունները և գործում է Ընկերության կանոնադրության և Խորհրդի կողմից հաստատված Գլխավոր տնօրենի մասին կանոնակարգի հիման վրա:

Գլխավոր տնօրենը հաշվետու է Ժողովին և Խորհրդին:

Գլխավոր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից 3 (երեք) տարի ժամկետով:

Գլխավոր տնօրենը՝

- ա) Ընկերության անունից գործում է առանց լիազորագրի,
- բ) ներկայացնում է Ընկերության շահերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և արտասահմանում,
- գ) Ընկերության անունից կնքում է գործարքներ՝ Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում,
- դ) իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ և տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- ե) Ընկերության շահերը ներկայացնելու համար տալիս է լիազորագրեր,
- զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ,
- է) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- ը) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,
- թ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարապահական պատասխանատվության միջոցներ:

Գլխավոր տնօրենը ապահովում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:

Գլխավոր տնօրենի իրավասություններին պատկանում են հետևյալ հարցերը՝

- ա) Ժողովի և Խորհրդի որոշումներին համապատասխան Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը,
- բ) տարեկան հաշվետվությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների, այդ թվում՝ շահույթի (վնասի) բաշխման և շահութաբաժինների վճարման հաշվետվությունների կազմման ղեկավարումը՝ Խորհրդին ներկայացնելու համար,
- գ) գործարքների (կամ մի քանի փոխկապակցված գործարքների) կնքման, փոփոխման և լուծման վերաբերյալ որոշումների ընդունումը (այդ թվում՝ բնականոն գործունեության ընթացքում կատարվող գործարքների), բացառությամբ այն գործարքների, որոնք կնքելու որոշումն ընդունելն Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ վերապահված է Ժողովին կամ Խորհրդին,
- դ) Ընկերության առևտրային գաղտնիք կազմող կամ ծառայողական տեղեկությունների ցանկի սահմանումը,
- ե) ներքին հսկողության գործընթացի կազմակերպումը և իրականացումը,
- զ) Ընկերության անունից բոլոր փաստաթղթերի ստորագրումը, բացառությամբ այն փաստաթղթերի որոնց ստորագրման իրավասությունը Ընկերության կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով վերապահված է Ընկերության պաշտոնատար այլ անձանց,
- է) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության պլանների մշակումը՝ Խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար,
- ը) Ընկերության Ժողովի և Խորհրդի իրավասությանը չվերապահված Ընկերության ներքին փաստաթղթերի հաստատումը,
- թ) Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ Ընկերության Ժողովի և Խորհրդի իրավասությանը չվերապահված այլ հարցերը:

Գլխավոր տնօրենը պարտավոր է Խորհրդին տեղեկացնել ցանկացած իրադարձության մասին, որն առաջացրել է կամ կարող է առաջացնել.

- ա) Ընկերության կողմից հաստատված զարգացման ռազմավարության փոփոխություն,
- բ) Ընկերության ֆինանսատնտեսական պլանի կամ ամենամյա ծախսերի նախահաշվի փոփոխություն,
- գ) Ընկերության արտադրական ցուցանիշների էական փոփոխություն,
- դ) կազմակերպչական էական փոփոխություններ,
- ե) Ժողովի կամ Խորհրդի որոշումներից էական շեղումներ:

Գլխավոր տնօրենը պարտավոր է մասնակցել Խորհրդի նիստերին և Խորհրդի անդամների հարցումներին ներկայացնել Ընկերության գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ տեղեկություններ:

Վերստուգող հանձնաժողովը

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացնում է Ընկերության վերստուգող հանձնաժողովը:

Ընկերության վերստուգող հանձնաժողովը բաղկացած է 3 (երեք) անդամից, որոնք ընտրվում են Ընկերության Ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

Այն դեպքում, երբ Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների թիվը նվազում է երեքից Խորհուրդը պարտավոր է գումարել արտահերթ Ժողով՝ վերստուգող հանձնաժողովի ընտրության համար: Վերստուգող հանձնաժողովի մնացած անդամներն իրականացնում են իրենց գործառնությունները մինչև Վերստուգող հանձնաժողովի նոր կազմի ընտրությունը:

Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել ինչպես Ընկերության բաժնետերերը, այնպես էլ բաժնետերերի կողմից առաջադրված ցանկացած գործունակ ֆիզիկական անձ: Ընկերության Վերստուգող հանձնաժողովի անդամը չի կարող միաժամանակ լինել Խորհրդի անդամ, ինչպես նաև Ընկերության կառավարման մարմիններում զբաղեցնել այլ պաշտոն:

Վերստուգող հանձնաժողովի իրավասությունների մեջ մտնում են.

- ա) Ընկերության ֆինանսական հաշվետվությունների, հաշվապահական փաստաթղթերի, գույքագրման ակտերի (եզրակացությունների) ստուգումը, ինչպես նաև վերը նշված փաստաթղթերի համեմատությունը հաշվապահական հաշվառման առաջնային տվյալների հետ,
- բ) հաշվապահական, հարկային, կառավարչական և վիճակագրական հաշվառման վարման ճշգրտության և ամբողջականության վերլուծությունը,

- գ) Խորհրդի կողմից հաստատված ֆինանսատնտեսական պլանների կատարման համապատասխանության ստուգումը,
- դ) Ընկերության Ժողովի կողմից հաստատման ենթակա հաշվետու ֆինանսական տարվա համար Ընկերության շահույթի բաշխման կարգի համապատասխանության ստուգումը,
- ե) մատակարարներին, պետական բյուջե և արտաբյուջետային հիմնադրամների վճարումների, շահութաբաժինների, պարտատոմսերի տոկոսների և այլ պարտավորությունների մարման ուղղությամբ հաշվարկների և վճարումների ժամանակին կատարման և համապատասխանության ստուգումը,
- զ) տարեկան հաշվետվություններում, տարեկան ֆինանսական հաշվետվություններում, հարկային, վիճակագրության և այլ պետական մարմիններին ներկայացվող փաստաթղթերում արտացոլված տեղեկությունների արժանահավատության հաստատումը,
- է) Գլխավոր տնօրենի կողմից կրված պայմանագրերի համապատասխանության ստուգումը,
- ը) Խորհրդի, Գլխավոր տնօրենի կողմից ընդունված որոշումների՝ Ընկերության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխանության ստուգումը,
- թ) Ժողովի կողմից ընդունված որոշումների՝ Օրենքին և Ընկերության կանոնադրությանը համապատասխանության վերլուծությունը:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է Ընկերության տարեկան գործունեության արդյունքներով, ինչպես նաև Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախաձեռնությամբ, Ժողովի և Խորհրդի որոշմամբ կամ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետերերի (բաժնետիրոջ) պահանջով:

Ընկերության վերստուգող հանձնաժողովն իրավունք ունի պահանջել Ընկերության արտահերթ Ժողովի կամ Խորհրդի նիստի գումարում:

Կորպորատիվ քարտուղարը

Կորպորատիվ քարտուղարը նշանակվում է Խորհրդի կողմից:

Կորպորատիվ քարտուղարն ապահովում է Ժողովի նախապատրաստումն ու անցկացումը, Խորհրդի, Խորհրդի հանձնաժողովների աշխատանքը, իրականացնում է Ընկերության վերաբերյալ տեղեկությունների պահպանումը և բացահայտումը, կազմակերպում է Ընկերության և Բաժնետերերի, կառավարման այլ մարմինների և Ընկերության պաշտոնատար անձանց միջև օպերատիվ համագործակցություն, ինչպես նաև իրականացնում է այլ գործառնություններ Կորպորատիվ քարտուղարի մասին կանոնակարգին համապատասխան:

3. Կառավարման մարմինների իրավունքներին, պարտականություններին, կազմավորման և գործունեության իրականացման կարգի և այլ սկզբունքային հարցերի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ Ընկերության կանոնադրության, ինչպես նաև Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կարգավորող ներքին կանոնակարգերից:

4. Ստորև ներկայացվում են կառավարման մարմինների անդամների վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, զբաղեցրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները, նրանցից յուրաքանչյուրի ծավալած գործունեությունը Ընկերության կազմից դուրս և այլն:

Խորհրդի նախագահն է Սպարտակ Թևոսյանը:

Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ	
Տնօրենների Խորհուրդ	
Անուն, ազգանուն	Սպարտակ Ապետնակի Թևոսյան
Բնակության վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Գազարինի փողոց 19, բն. 3
Զբաղեցրած պաշտոնը	Խորհրդի նախագահ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Որպես՝ 1. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ՝ 20.08.2010թ.-ից մինչօրս

<p>Իրավասություններն ու պարտականությունները</p>	<p>2. Ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ 27.04.2010թ.-ից մինչև 20.08.2010թ.</p> <p>Խորհրդի նախագահի իրավասությունները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ և «Տնօրենների խորհրդի մասին» կանոնակարգով:</p> <p>Խորհրդի նախագահը.</p> <p>ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը, ապահովում է նիստերի ընթացքում արձանագրության վարումը,</p> <p>բ) պատասխանատու է Խորհրդի նիստերի օրակարգերի ձևավորման համար,</p> <p>գ) Խորհրդի նիստերը կազմակերպում է այնպես, որ քննարկումները կրեն բաց, բազմակողմանի բնույթ և նպաստեն համաձայնեցված որոշումների ընդունմանը,</p> <p>դ) կազմակերպում է օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առավել արդյունավետ որոշումների մշակումը և անհրաժեշտության դեպքում այդ հարցերի ազատ քննարկում,</p> <p>ե) ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ, որոնք կապահովեն Խորհրդի անդամներին օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների ժամանակին տրամադրումը,</p> <p>զ) Խորհրդի նիստերում խրախուսում է Խորհրդի անդամներին՝ օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ իրենց կարծիքն ազատ արտահայտելու համար,</p> <p>է) նախաձեռնում է Խորհրդի նիստում քննարկվող հարցի վերաբերյալ որոշման նախագծի կազմումը,</p> <p>ը) ապահովում է Խորհրդի անդամին Խորհրդի նիստում արտահայտել քննարկվող հարցի վերաբերյալ իր տեսակետը և նպաստել Ընկերության շահերից բխող համաձայնեցված որոշման կայացմանը,</p> <p>թ) ապահովում է մշտական կապեր Ընկերության այլ մարմինների և պաշտոնատար անձանց հետ ոչ միայն Խորհրդի կողմից որոշումների ընդունման համար ժամանակին, առավել ամբողջական և արժանահավատ տեղեկություններ ստանալու նպատակով, այլ նաև այդ մարմինների և պաշտոնատար անձանց միջև կամ երրորդ անձանց հետ արդյունավետ փոխարարություններ ձևավորելու նպատակով,</p> <p>ժ) ապահովում է Խորհրդին կից հանձնաժողովների արդյունավետ աշխատանքները և ելնելով Խորհրդի անդամի մասնագիտական և անձնական որակներից՝ առաջարկություններ է ներկայացնում Խորհրդի անդամներին ընդգրկվել այս կամ այն հանձնաժողովում:</p> <p>ժա) նախագահում է Ժողովում և իրականացնում է Ընկերության ներքին իրավական ակտերով այլ լիազորություններ:</p>
<p>Ճավայած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս</p>	<p>Ներկայումս զբաղեցնում է ԼՂՀ փոխվարչապետի և ԼՂՀ ֆինանսների նախարարի պաշտոնը:</p>
<p>Մասնագիտությունը</p>	<p>ֆինանսներ և վարկ</p>
<p>Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները</p>	<p>2002 թ.-ից-2007թ. զբաղեցրել է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի պաշտոնը:</p>
<p>Նախորդ 5 տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները</p>	<p>2007թ.- մինչև օրս զբաղեցնում է ԼՂՀ ֆինանսների նախարարի պաշտոնը: 2009թ.-ից մինչև օրս զբաղեցնում է ԼՂՀ փոխվարչապետի պաշտոնը:</p>
<p>Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի</p> <p>Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել</p> <p>Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել</p>	

Խորհրդի անդամ Է Կառլեն Պետրոսյանը

Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ

Տնօրենների Խորհուրդ	
Անուն, ազգանուն	Կառլեն Ռուբենի Պետրոսյան
Բնակության վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մ. Մաշտոցի փողոց, տուն 54
Զբաղեցրած պաշտոնը	Խորհրդի անդամ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	27.04.2010թ.-ից մինչև օրս
Իրավասություններն ու պարտականությունները	<p>Խորհրդի անդամի իրավասությունները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ և «Տնօրենների խորհրդի մասին» կանոնակարգով:</p> <p>Խորհրդի անդամն իրավունք ունի.</p> <ul style="list-style-type: none"> ա) Ընկերության պաշտոնատար անձանցից և աշխատակիցներից պահաջել Ընկերության գործունեությանը վերաբերվող ցանկացած տեղեկատվություն (փաստաթղթեր և նյութեր), բ) իր պարտականությունների իրականացման համար ստանալ պարգևատրում և/կամ Խորհրդի անդամի գործառնությունների իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցում՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված դեպքում և չափով, գ) ծանոթանալ Խորհրդի և Ընկերության այլ կոլեգիալ մարմնի նիստերի արձանագրություններին և ստանալ դրանց պատճենները, դ) պահանջել Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի և ընդունված որոշումների վերաբերյալ իր հատուկ կարծիքի ներառումը Խորհրդի նիստի արձանագրության մեջ, ե) մասնակցել Ընկերության կոլեգիալ գործադիր մարմինների նիստերին: Խորհրդի անդամը պարտավոր է. <ul style="list-style-type: none"> ա) գործել Խորհրդի նպատակներից և խնդիրներից բխող իր իրավունքների սահմաններում, բ) գործել խելամտորեն և բարեխղճորեն՝ ելնել Ընկերության շահերից, այսինքն՝ ցուցաբերել հոգատարություն և շրջահայացություն, որոնք կարելի է սպասել լավագույն ղեկավարից, և իր պարտականությունների պատշաճ կատարման նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ գ) չիրապարակել Ընկերության գործունեության մասին իրեն հայտնի դարձած գաղտնի տեղեկությունները, դ) անհետաձգելի հարցերի լուծման համար նախաձեռնել Խորհրդի նիստի գումարում, ե) ներկա գտնվել Խորհրդի նիստերին, զ) մասնակցել Խորհրդի կողմից որոշումների ընդունմանը՝ օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ քվեարկելու միջոցով, է) ընդունել հիմնավորված որոշումներ, որի համար պարտավոր է ուսումնասիրել բոլոր անհրաժեշտ տեղեկությունները (նյութերը), ընդունվող որոշմանն առնչվող տեղեկությունների քննություն անցկացնել և իրազեկել Խորհրդի մյուս անդամներին, ը) որոշումների ընդունման ժամանակ գնահատել ռիսկերը և բացասական հետևանքները, թ) ժամանակին հաղորդել Ընկերությանն իր հետ փոխկապված անձանց և նրանց կազմում տեղի ունեցած փոփոխությունների մասին, ժ) Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն իրավաբանական անձանց մասին, որտեղ նա ինքնուրույն կամ իր փոխկապակցված անձանց հետ համատեղ տիրապետում է քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 10 և ավելի տոկոսին, ժա) Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նա զբաղեցնում է պաշտոններ, ժբ) Խորհրդին, Ընկերության վերստուգող հանձնաժողովին և աուդիտորին տեղեկություններ տրամադրել այն գործարքների մասին, որոնցում նա կարող է ճանաչվել որպես շահագրգիռ անձ.

	<p>ժգ) ձեռնպահ մնալ այն որոշումների ընդունման ժամանակ անցկացվող քվեարկություններից, որոնցում նա ունի անձնական շահագրգռվածություն,</p> <p>ժդ) Խորհրդի քարտուղարի միջոցով Խորհրդին անմիջապես բացահայտել իր շահագրգռվածության փաստի և դրա առաջացման հիմքերի մասին,</p> <p>ժե) գրավոր ծանուցել Խորհրդին Ընկերության արժեթղթերով (բաժնետոմսերով) գործարքներ կատարելու իր մտադրությունների մասին, ինչպես նաև բացահայտել այդ արժեթղթերով կատարված գործարքների մասին տեղեկություններ,</p> <p>ժզ) մասնակցել Խորհրդի կողմից առաջարկվող ծրագրերի և նախագծերի փորձաքննության անցկացմանը,</p> <p>ժէ) Խորհրդի հանձնարարությամբ պատրաստել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության բարելավման առաջարկներ,</p> <p>ժը) Խորհրդի անդամներին իրազեկել իրեն հայտնի դարձած Ընկերության աշխատակիցների, այդ թվում՝ պաշտոնատար անձանց կողմից օրենսդրության, Ընկերության կանոնադրության և ներքին այլ իրավական ակտերի պահանջների խախտումների փաստերի մասին,</p> <p>ժթ) պատրաստել իր իրավասությանը պատկանող հարցեր և ներկայացնել Խորհրդի քննարկմանը,</p> <p>ի) ձևավորել իր կաժիքը Ընկերության տարեկան հաշվետվությունների, այդ թվում՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ,</p> <p>իա) ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել ժողովի մասնակիցների հարցերին:</p>
Ճավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս	ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ:
Մասնագիտությունը	ինժիներ-մեխանիկ
Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	<p>2006-2007թթ և 2009 թ-ին զբաղեցրել է ԼՂՀ Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարի պաշտոնը</p> <p>2007-2008թթ զբաղեցրել է ԼՂՀ վարչապետի վերահսկողական ծառայության պետի պաշտոնը:</p> <p>2008-2009թթ զբաղեցրել է ԼՂՀ Վերահսկիչ պալատի Խորհրդի անդամի պաշտոնը:</p> <p>2009թ. հունիսից ԼՂՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ:</p>
Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի	
Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել	
Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել	

Խորհրդի անդամ է Վահրամ Բեգլարյանը

<i>Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ</i>	
Տնօրենների Խորհուրդ	
Անուն, ազգանուն	Վահրամ Վլադիմիրի Բեգլարյան
Բնակության վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Վաղարշյան փողոց 1, բն. 40
Զբաղեցրած պաշտոնը	Խորհրդի անդամ, Գլխավոր տնօրեն
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	27.04.2010թ.-ից մինչև օրս
Իրավասություններն ու պարտականությունները	Խորհրդի անդամի իրավություններն ու պարտականությունները մանրամասն ներկայացված են Խորհրդի անդամ Վառչեն Պետրոսյանի իրավասություններ և պարտականություններ բաժնում: Գլխավոր տնօրենի իրավասություններն ու պարտականություններն ներկայացված են «Կառավարման մարմինները և կառավարման

Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս Մասնագիտությունը	մարմինների անդամները» բաժնի 2-րդ կետի Գ-խավոր տնօրենի վերաբերյալ մասում մասում: - ֆինանսներ և վարկ
Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	2008 թվականին նշանակվել է «Տեխնոշին» ՍՊԸ-ի տնօրեն: 2009 թվականից առ այսօր աշխատում է Ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնում:
Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի	
Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել	
Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել	

Խորհրդի անդամ է Միհրան Գալստյանը

<i>Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ</i>	
Տնօրենների Խորհուրդ	
Անուն, ազգանուն	Միհրան Մամվելի Գալստյան
Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Լյուքսեմբուրգ 1-ին նրբանցք, 6 շենք, բն. 9
Զբաղեցրած պաշտոնը	Խորհրդի անդամ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	27.04.2010թ.-ից մինչևօրս
Իրավասություններն ու պարտականությունները	Խորհրդի անդամի իրավություններն ու պարտականությունները մանրամասն ներկայացված են Խորհրդի անդամ Կառլեն Պետրոսյանի իրավասություններ և պարտականություններ բաժնում: «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ավագ իրավախորհրդատու
Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս Մասնագիտությունը	Իրավաբան
Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	2004-2006թթ. աշխատել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայում, որպես իրավաբան-խորհրդատու, ծարագրերի կողողինատոր: 2006թ.-ից մինչևօրս աշխատում է Բանկում, որպես ավագ իրավախորհրդատու:
Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի	
Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել	
Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել	

Խորհրդի անդամ է Մերուժան Բաբայանը

<i>Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ</i>	
Տնօրենների Խորհուրդ	
Անուն, ազգանուն	Մերուժան Բաբայան
Բնակության վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Հեքիմյան Յա, բն. 64
Զբաղեցրած պաշտոնը	Խորհրդի անդամ
Պաշտոնավարման	27.04.2010թ.-ից մինչևօրս

սկիզբը և ավարտը Իրավասություններն ու պարտականությունները	Խորհրդի անդամի իրավություններն ու պարտականությունները մանրամասն ներկայացված են Խորհրդի անդամ Կառլեն Պետրոսյանի իրավասություններ և պարտականություններ բաժնում:
Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս Մասնագիտությունը	«Զարավան» ՍՊԸ-ի պահեստապետ և գանձապահ Տնտեսագետ
Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	2000թ. մինչ օրս աշխատում է «Զարավան» ՍՊԸ-ում որպես պահեստապետ և գանձապահ:
Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի	
Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել	
Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել	

Վերստուգող հանձնաժողովի նախագահն է Արուստուր Պետրոսյանը

<i>Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ</i>	
Վերստուգող հանձնաժողով	
Անուն, ազգանուն	Արթուր Շահենի Պետրոսյան
Բնակության վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մաշտոցի փողոց 4, բն. 46
Զբաղեցրած պաշտոնը Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	Վերստուգող հանձնաժողովի նախագահ 27.04.2010թ.-ից մինչևօրս
Իրավասություններն ու պարտականությունները	<p>Վերստուգող հանձնաժողովի նախագահը.</p> <ul style="list-style-type: none"> - ձևավորում է վերստուգող հանձնաժողով նիստի օրակարգը, - գումարում և անցկացնում է վերստուգող հանձնաժողով նիստը, - կազմակերպում է ընթացիկ աշխատանքները, - Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում, Ընկերության տնօրենների խորհրդի նիստերին և գլխավոր տնօրենին ներկայացնում է Վերստուգող հանձնաժողովը, - ստորագրում է Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) փաստաթղթերը, - ստուգումների ընթացքում Ընկերության մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներից պահանջել ստուգման իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ (նյութեր, փաստաթղթեր), - պահանջել Ընկերության տնօրենների խորհրդի անդամներից, գլխավոր տնօրենից, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, պաշտոնատար այլ անձանցից, նյութական պատասխանատվություն կրող անձանցից, աշխատակիցներից ստուգումների ընթացքում առաջացող հարցերի վերաբերյալ բանավոր և գրավոր բացատրություններ - ստուգման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական տեղեկությունները չբացահայտել և պահպանել առևտրային գաղտնիքը - կատարել Ընկերության պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների արձանագրում, - ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել բաժնետերերի հարցերին, - Վերստուգող հանձնաժողովի գործառնություններից բխող այլ իրավունքներ և պարտականություններ:
Ծավալած գործունեությունը՝	ԼՂՀ վարչապետի օգնական

Ընկերության կազմից դուրս Մասնագիտությունը	Տնտեսագետ-իրավաբան
Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	2004-2007 թ. աշխատել է «Ղարաբաղ Գոլդ» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան, 2007թ. մինչև օրս աշխատում է ԼՂՀ վարչապետի 1-ին օգնականի պաշտոնում
Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի	
Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել	
Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել	

Վերստուգող հանձնաժողովի անդամ է Արթուր Պատվականյանը

Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ

Վերստուգող հանձնաժողով	
Անուն, ազգանուն	Արթուր Էդուարդի Պատվականյան
Բնակության վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Բաղրամյան փողոց 62, բն. 21
Զբաղեցրած պաշտոնը Պաշտոնավարման սկիզբը և ավարտը Իրավասություններն ու պարտականությունները	<p>Վերստուգող հանձնաժողովի անդամ 27.04.2010թ.-ից մինչև օրս</p> <p>Վերստուգող հանձնաժողովի գործառույթներն իրականացնելու համար Վերստուգող հանձնաժողովի անդամն լիազորված է հետևյալ իրավասություններով և պարտականություններով՝</p> <ul style="list-style-type: none"> - ստուգումների ընթացքում Ընկերության մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներից պահանջել ստուգման իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ (նյութեր, փաստաթղթեր), - պահանջել Ընկերության տնօրենների խորհրդի անդամներից, գլխավոր տնօրենից, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, պաշտոնատար այլ անձանցից, նյութական պատասխանատվություն կրող անձանցից, աշխատակիցներից ստուգումների ընթացքում առաջացող հարցերի վերաբերյալ բանավոր և գրավոր բացատրություններ - ստուգման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական տեղեկությունները չբացահայտել և պահպանել առևտրային գաղտնիքը - կատարել Ընկերության պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների արձանագրում, - ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել բաժնետերերի հարցերին, - Վերստուգող հանձնաժողովի գործառույթներից բխող այլ իրավունքներ և պարտականություններ: <p>«Արցախ Բանկ» ՓԲԸ-ի ներքին աուդիտի անդամ</p>
Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս Մասնագիտությունը	Տնտեսագետ
Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	2004 թվականից աշխատում է «Արցախ Բանկ» ՓԲԸ-ում, մինչև 2008թ. զբաղեցրել է փոքր և միջին բիզնեսի վարկավորման բաժնի պետի պաշտոնը, իսկ 2008թ-ից մինչ օրս՝ ներքին աուդիտի անդամի պաշտոնը:
Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի	
Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել	
Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից	

պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել

Վերստուգող հանձնաժողովի անդամ է Արթուր Ներսիսյանը

<i>Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ</i>	
Վերստուգող հանձնաժողով	
Անուն, ազգանուն	Արթուր Անդրանիկի Ներսիսյան
Բնակության վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Մամիկոնյան փողոց 19, բն.17
Զբաղեցրած պաշտոնը Պաշտոնավարման սկիզբը և ավարտը Իրավասություններն ու պարտականությունները	<p>Վերստուգող հանձնաժողովի անդամ 27.04.2010թ.-ից մինչև օրս</p> <p>Վերստուգող հանձնաժողովի գործառույթներն իրականացնելու համար Վերստուգող հանձնաժողովի անդամը լիազորված է հետևյալ իրավասություններով և պարտականություններով`</p> <ul style="list-style-type: none"> - ստուգումների ընթացքում Ընկերության կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներից պահանջել ստուգման իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ (նյութեր, փաստաթղթեր), - պահանջել Ընկերության տնօրենների խորհրդի անդամներից, գլխավոր տնօրենից, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, պաշտոնատար այլ անձանցից, նյութական պատասխանատվություն կրող անձանցից, աշխատակիցներից ստուգումների ընթացքում առաջացող հարցերի վերաբերյալ բանավոր և գրավոր բացատրություններ - ստուգման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական տեղեկությունները չբացահայտել և պահպանել առևտրային գաղտնիքը - կատարել Ընկերության պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների արձանագրում, - ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին և պատասխանել բաժնետերերի հարցերին, - Վերստուգող հանձնաժողովի գործառույթներից բխող այլ իրավունքներ և պարտականություններ:
Ծավալած գործունեությունը` Ընկերության կազմից դուրս Մասնագիտությունը	ԼՂՀ Ֆինանսների նախարարության 1-ին կարգի մասնագետ
Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպու- թյուններում զբաղեցրած պաշտոնները	Ֆինանսներ և վարկ
Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի	2008թ.-ից աշխատում է ԼՂՀ Ֆինանսների նախարարությունում, որպես ի 1-ին կարգի մասնագետ:
Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել	
Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել	

Կորպորատիվ քարտուղարն է Ինեսա Գրիգորյանը

<i>Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ</i>	
Կորպորատիվ քարտուղար	
Անուն, ազգանուն	Ինեսա Էդուարդի Գրիգորյան
Բնակության վայրը	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների փողոց 21, բն. 50
Զբաղեցրած պաշտոնը Պաշտոնավարման	Կորպորատիվ քարտուղար 20.08.2010թ.-ից մինչև օրս

**սկիզբը և ավարտը
Իրավասություններն ու
պարտականությունները**

- Կորպորատիվ քարտուղարն ապահովում է.
- Ընկերության Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմումը,
- շահաբաժին ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմումը,
- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված դեպքերում, բաժնետոմսերի հետ գնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմումը,
- լրացուցիչ բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեցող անձանց ցուցակի կազմումը,
- Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին տրամադրման ենթակա տեղեկությունների (նյութերի) նախապատրաստումը և դրանց բաժնետերերին հասու դարձնելը,
- Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակից քաղվածքի և տեղեկանքի տրամադրումը,
- Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում ընդգրկված բաժնետերերին քվեաթերթիկների ուղարկումը,
- լրացված քվեաթերթիկների հավաքումը և փոխանցումը հաշվիչ հանձնաժողովին,
- Ժողովի քվեարկության արդյունքների և ընդունված որոշումների մասին տեղեկացումը բաժնետերերին,
- Խորհրդի նիստերի նախապատրաստումը և անցկացումը համաձայն օրենսդրության, Ընկերության կանոնադրության և այլ ներքին իրավական ակտի պահանջների,
- Խորհրդի նիստի նախապատրաստման և անցկացման հետ կապված բոլոր կազմակերպչական հարցերի որոշումը,
- Խորհրդի բոլոր անդամներին Խորհրդի նիստի անցկացման մասին ծանուցումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրանց քվեարկելու համար քվեաթերթիկների ուղարկումը (հանձնումը), լրացված քվեաթերթիկների հավաքումը և փոխանցումը Խորհրդի նախագահին,
- Կորպորատիվ քարտուղարն իրականացնում է հետևյալ փաստաթղթերի պահպանությունը՝ Ընկերության կանոնադրությունը, Ընկերության կանոնադրության փոփոխություններ և լրացումները, Ընկերության հիմնադրման և պետական գրանցման հետ կապված փաստաթղթերը, Ընկերության մարմինների վերաբերյալ կանոնակարգեր, որոնք հաստատված են Ժողովի որոշմամբ, Խորհրդի որոշմամբ հաստատված փաստաթղթեր, Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հիմնադիր փաստաթղթերը, Ժողովի, Խորհրդի նիստեր արձանագրությունները, Խորհրդին կից գործող հանձնաժողովների արձանագրություններն ու գրավոր կարծիքները, Ընկերության վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, քվեաթերթիկները, Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի լիազորված ներկայացուցիչների լիազորությունները հավաստող փաստաթղթերը (փաստաթղթերի պատճենները), Ընկերության հետ փոխկապակցված անձանց ցուցակը, Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը, շահաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը, ինչպես նաև օրենսդրության պահանջներին համապատասխան բաժնետերերի իրավունքների իրականացման համար Ընկերության կողմից կազմված այլ ցուցակներ, Անկախ գնահատողների հաշվետվությունները, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգող), Ընկերության ատլիտորի, ֆինանսական վերահսկողության պետական մարմինների եզրակացությունները, Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, Արժեթղթերի ազդագրերը, Ներդրումային արժեթղթերի թողարկման (լրացուցիչ թողարկման), արժեթղթերի թողարկման (լրացուցիչ թողարկման) արդյունքների միջանկյալ և վերջնական հաշվետվությունները, այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են այնպիսի տեղեկություններ, որոնք օրենսդրությամբ

	<p>ենթակա են հրապարակման կամ այլ կերպ բացահայտման:</p> <ul style="list-style-type: none"> - Կորպորատիվ քարտուղարն Ընկերության և նրա բաժնետերերի միջև համագործակցության պահովման ուղղությամբ իրականացնում է հետևյալ գործառույթները. - հաշվառում է բաժնետերերից ստացված նամակները, պահանջները և այլ դիմումները, - տալիս է նախնական գնահատական բաժնետերերից ստացված նամակներին, պահանջներին և այլ դիմումներին, անհրաժեշտության դեպքում ապահովում է դրանց իրավական փորձաքննությունը և Ընկերության իրավասու մարմնին հասցեագրումը, - իր իրավասությունների շրջանակներում ապահովում է Ընկերությունում բաժնետերերի դիմումների և բաժնետերերի իրավունքների խախտման հետ կապված շահերի բախումների դեպքերի ուսումնասիրությունը, - ապահովում է բաժնետերերին իրենց իրավունքների հետ կապված խորհրդատվության տրամադրում, - ապահովում է արժեթղթերի գծով շահաբաժիններ և այլ եկամուտներ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի եկամուտների վճարման կազմակերպչական վերահսկողությունը: <p>Ընկերության կանոնադրությամբ և «Կորպորատիվ քարտուղարի մասին» կանոնակարգով սահմանված այլ իրավասություններ և պարտականություններ:</p>
<p>Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս Մասնագիտությունը</p>	<p>Իրավաբան</p>
<p>Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները</p>	<p>2005-2009թ. աշխատել է ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարությունում, որպես 1 կարգի մասնագետ: 2009թ-ին աշխատել է ԼՂՀ գյուղ. նախարարությունում՝ որպես իրավախորհրդատու: 2010թ-ի մարտից հոկտեմբեր ամսիներին աշխատում է Ընկերությունում՝ որպես իրավաբան:</p>
<p>Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի</p>	
<p>Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել</p>	
<p>Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել</p>	

Գլխավոր հաշվապահն է Արայիկ Դավթյանը

Տեղեկատվություն կառավարման մարմիններում ընդգրկված անձանց վերաբերյալ	
Գլխավոր հաշվապահ	
Անուն, ազգանուն	Արայիկ Յաշայի Դավթյան
Բնակության վայրը	ԼՂՀ ք. Ստեփանակերտ Ալ. Մանուկյան փողոց շենք 120 բն.69
Զբաղեցրած պաշտոնը	Գլխավոր հաշվապահ
Պաշտոնավարման սկիզբը և ավարտը	01.11.07թ-ից մինչօրս
Իրավասություններն ու պարտականությունները	<p>Գլխավոր հաշվապահը գտնվում է Ընկերության գլխավոր տնօրենի ենթակայության տակ և պատասխանատու է՝</p> <ul style="list-style-type: none"> - Ընկերությունում հաշվապահական հաշվառում պատշաճ վարելու համար, - ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար, - ԼՂՀ օրենսդրական դաշտին համապատասխան հաշվապահական փաստաթղթերի ձևակերպման համար,

Ծավալած գործունեությունը՝ Ընկերության կազմից դուրս	- ապահովում է կազմակերպության ակտիվների և պարտավորությունների վերահսկողությունը: -
Մասնագիտությունը	Հաշվապահ
Նախորդ 5 տարիների ընթացքում այլ կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնները	2004թ-ից մինչև 2007թ-ի հոկտեմբերի 31-ը «Բարի Հոգի» ՍՊԸ-ում՝ որպես գլխավոր հաշվապահ: 2007թ-ի նոյեմբերի 1-ից աշխատում է Ընկերությունում որպես գլխավոր հաշվապահ:
Նախորդ 5 տարիների ընթացքում խարդախության համար դատվածություն չունի	
Նախորդ 5 տարիների ընթացքում սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ առնչություն չի ունեցել	
Նախորդ 5 տարիների ընթացքում պետական մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից պատասխանատվության չի ենթարկվել և դատարանի կողմից որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից չի զրկվել	

5. Կառավարման մարմինների անդամների միջև ազգակցական կապը բացակայում է:
6. Ընկերության կառավարման մարմինների անդամների գործնական և անձնական շահերի բախում չկա:
7. Ընկերությունը խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ չունի կառավարման մարմնի անդամ նշանակելու մասին որևէ պայմանավորվածություն, բացառության:

Վարձատրությունները և պարգևավճարները

1. Ընկերության կառավարման մարմինների անդամները, բացառությամբ Գլխավոր տնօրենի և Գլխավոր հաշվապահի, Ընկերության կառավարման մարմիններում իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքով՝ առանց վարձատրության: Միաժամանակ, Ընկերության կառավարման մարմինների անդամներին 01.09.2010թ. դրությամբ չեն վճարվել պարգևավճարներ և նրանց օգտին չեն կատարվել փոխհատուցումներ:
2. 2010 թվականի ընթացքում Ընկերության Գլխավոր տնօրենը և Գլխավոր հաշվապահն Ընկերությունից ստացել են 4,080,000 ՀՀ դրամի չափով աշխատավարձ: Ընկերության կողմից Ընկերության կառավարման մարմինների անդամների օգտին չեն կատարվել կենսաթոշակային վճարումներ, սակայն Ընկերության Գլխավոր տնօրենին և Գլխավոր հաշվապահին տրվող աշխատավարձերի գծով Ընկերությունը կատարել է 612,000 ՀՀ դրամ գումարի սոցապ վճար:

Կառավարման մարմինների գործունեությունը

1. Լրավճարների կամ պարգևավճարների վճարման մասին պայմանագրեր Թողարկողի և կառավարման մարմինների միջև առկա չեն:
2. Ընկերությունը չունի ձևավորված աշխատավարձերի և աուդիտի կոմիտեներ, թերևս Ընկերության կանոնադրությամբ և «Խորհրդի մասին» կանոնակարգով նախատեսված են Խորհրդին կից նման կոմիտեների ձևավորման հանավորությունները:
3. Հաշվի առնելով, որ Ընկերությունը հիմնադրվել է ԼՂՀ-ում, իսկ ԼՂՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքները հիմնականում սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով և այլ օրենքներով, ուստի Ընկերության կառավարման համակարգը կառուցված է օրենսդրության պահանջների շրջանակում: Ավելին, Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կարգավորվում է Ընկերության կողմից

հաստատված առանձին կանոնակարգերով, որի մշակման հիմքում հաշվի են առնվել ոչ միայն ԼՂՀ-ում և ՀՀ-ում սահմանված կորպորատիվ կառավարման սկզբունքները, այլ նաև զարգացած արժեթղթերի շուկա ունեցող երկրներում ձևավորված կորպորատիվ կառավարման սկզբունքները և էներգետիկ ոլորտում գործող օտարերկրյա հայտնի ընկերությունների փորձը:

Աշխատակիցները

1. Աղյուսակ 26-ում ներկայացվում է տեղեկատվություն պատմական ֆինանսական ժամանակաշրջանում ընդգրկված յուրաքանչյուր ֆինանսական տարվա կտրվածքով Ընկերության աշխատակիցների միջին տարեկան թվաքանակի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացված է դրանց գործառության ղսասկարգումը և տարածքային բաշխվածությունը: Ներկայացված է նաև ժամկետային աշխատողների թվաքանակը և դրանց բաժինը ընդհանուրի մեջ:

Աղյուսակ 26. Ընկերության աշխատակիցները

Ընկերության աշխատակիցները			
Ցուցանիշներ	31.12.2008	31.12.2009	31.08.2010
Աշխատակիցների միջին թվաքանակը	79	71	95
Վարչական աշխատակիցներ	24	16	23
Արտադրական և սպասարկման ոլորտի աշխատակիցներ	55	55	72

Աղբյուրը՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

Ընկերությունը ժամկետային աշխատակիցներ չունի:

2. Ընկերության կառավարման մարմիններում ընդգրկված անձանցից միայն Գլխավոր տնօրեն Վահրամ Բեգլարյանն ունի Ընկերության 1,000 հատ բաժնետոմսեր, որոնց ընթացիկ շուկայական արժեքը կազմում է 1,120,000 ՀՀ դրամ (հաշվարկը կատարված է Ընկերության բաժնետոմսերով կատարված վերջին գործարքի՝ 1120 ՀՀ դրամ գնով):

3. Ներկայումս Ընկերությունը չունի ծրագրեր՝ կապված աշխատակիցներին Ընկերության կապիտալում մասնակցության հնարավորություն ընձեռելու հետ. Ընկերության աշխատակիցները ցանկության դեպքում կարող են ձեռք բերել Ընկերության բաժնետոմսերը ֆոնդային բորսայից կամ մասնակցել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը՝ ընդհանուր պայմաններով:

Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք

1. Ընկերության խոշոր բաժնետեր է հանդիսանում ԼՂՀ-ն ի դեմս՝ կառավարության, որին պատկանում են Ընկերության կողմից թողարկված 5,100,000 հատ սովորական բաժնետոմսեր: ԼՂՀ կառավարության բաժնեմասը Ընկերության կանոնադրական կապիտալում կազմում է 85.5%:

ԼՂՀ կառավարությանը պատկանող բաժնետոմսերի կառավարումը լիազորված է ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ Կառլեն Պետրոսյանին: ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ Կառլեն Պետրոսյանը 27.04.2010թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է Խորհրդի անդամ, որի մասին մասնամասն տեղեկություններ ներկայացված են Ազգազրի «Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները» բաժնի 4-րդ կետում:

2. Ընկերության Խոշոր բաժնետեր է հանդիսանում «Վ.Պ.Փ.Բ.» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցեն՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Սասունցի Դավիթ 2), որին պատկանում է Ընկերության կողմից թողարկված 360,000 հատ սովորական բաժնետոմսեր: «Վ.Պ.Փ.Բ.» ՓԲԸ-ի բաժնեմասը Ընկերության կանոնադրական կապիտալում կազմում է 6.03%:

Ընկերության խոշոր բաժնետեր է հանդիսանում նաև Վարդան Սիրմաքետը, քանի որ նրան է պատկանում «Վ.Պ.Փ.Բ.» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը:

Ինչպես Ընկերության կողմից տեղաբաշխված բոլոր բաժնետոմսերը, Ընկերության խոշոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերը տալիս են ձայնի միևնույն իրավունքներ:

3. Ընկերության կանոնադրական կապիտալում 85.5% մասնակցության հիմքով Ընկերությունը գտնվում է ԼՂՀ Կառավարության ուղղակի հսկողության ներքո:

Փոխկապված անձանց հետ գործարքները

1. 01.01.2010թ-ին Ընկերության և «ԱՐՅԱԽԷՆԵՐԳՈ» ԲԲԸ-ի միջև կնքվել է Էլեկտրաէներգիայի/հզորության/ առքուվաճառքի մասին պայմանագիր, որով Ընկերությունը վաճառում, իսկ «ԱՐՅԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ-ն գնում է Էլեկտրաէներգիա՝ նշված պայմանագրով սահմանված կարգով: Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ Էլեկտրաէներգիայի գնման նախնական չափաքանակը 2010թ-ի համար սահմանվել է 137 մլն ԿՎտ/ժամ, իսկ սակագիրը՝ 9 դրամ/ԿՎտ/ժ: Էլեկտրաէներգիայի գնման նախնական չափաքանակները /նախնական մեծությունը՝ 1,233,000,000 ՀՀ դրամ, ինչը կազմում է Ընկերության սեփական կապիտալի 18%-ը/ չեն հանդիսանում պայմանագրային մեծություն: 01.09.2010թ. դրությամբ Ընկերությունը «ԱՐՅԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ-ին փաստացի վաճառել է 98,530,250ԿՎտ/ժամ Էլեկտրաէներգիա՝ 886,806,900 ՀՀ դրամ վաճառքի գնով:

2. 01.09.2010թ. դրությամբ Ընկերությունը չունի փոխկապակցված անձանց տրված չմարված փոխառություններ և/կամ երաշխավորություններ:

Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

1. Ընկերության 2007-2009թթ.ֆինանսական հաշվետվությունները և նույն ժամանակահատվածի անկախ առուղիտի եզրակացությունները ներկայացված են հավելված 3-ում:

2. Ընկերության 2010 թվականի երկրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հավելված 4-ում:

3. Ընկերության տրամադրության տակ գտնվող տվյալների համաձայն Ազդագրում ներկայացված 2010թ երկրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունների համեմատությամբ 01.09.2010թ. դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ էական փոփոխություն չեն գրանցվել:

4. Ընկերության ստեղծման պահից Ընկերության նկատմամբ դատարանի, ինչպես նաև պետական մարմինների կողմից պատասխանատվության միջոցներ (վարչական, քաղաքացիաիրավական) չեն կիրառվել: Ընկերության դեմ սնանկության (անվճարունակության) կամ լուծարային վարույթի նախաձեռնություններ չեն կիրառվել:

5. Ընկերությունը աշխատում է ընդհանուր հարկային դաշտում. չի օգտվում ԼՂՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված որևէ հարկային արտոնությունից:

Լրացուցիչ տեղեկատվություն

Կանոնադրական կապիտալը

ա. Համաձայն Ընկերության 30.06.2010թ. հաշվապահական հաշվեկշռի՝ կանոնադրական կապիտալը կազմում է 5,962,074,000 (հինգ միլիարդ ինը հարյուր վաթսուներկու միլիոն յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ:

բ. Ընկերության հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 9,137,926 (ինը միլիոն մեկ հարյուր երեսուցյոթ հազար ինը հարյուր քսանվեց) հատ հասարակ անվանական բաժնետոմս,

գ. Ընկերության տեղաբաշխել է 5,962,074 հատ բաժնետոմսեր, որոնք ամբողջությամբ վճարված են: Ընկերությունը չունի ոչ լրիվ վճարված բաժնետոմսեր,

դ. մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ է,

ե. թողարկողը սեփականության իրավունքով չի տիրապետում իր կողմից թողարկված բաժնետոմսեր:

Կանոնադրությունը

Ա. Համաձայն Ընկերության կանոնադրության 3-րդ բաժնի պահանջների՝ Ընկերության գործունեության առարկան և նպատակը հետևյալն են.

- Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու միջոցով շահույթի ստացումը:

- Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.

ա) Էլեկտրական էներգիայի արտադրություն,

բ) Ընկերության հիմնական միջոցների շահագործման, ընթացիկ նորոգման և կարգաբերման աշխատանքների կատարում,

գ) Ընկերության տեխնիկական վերազինման, վերակառուցման, հիմնանորոգման աշխատանքների կատարում, նոր կառուցվող օբյեկտների պատվիրատուի գործառույթների իրականացում,

դ) Նոր էներգաօբյեկտների (հիդրոէլեկտրակայանների) շինարարության իրականացում:

- Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից նրանում նշված ժամկետում:

Բ. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի 66-93 հոդվածները և Ընկերության կանոնադրության 10-16 բաժինները կարգավորում են Ընկերության կառավարման մարմինների գործառույթները: Ընկերության կառավարման մարմինների գործառույթների մանրամասն վերլուծությունը ներկայացված է Ազգազրի «Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները» բաժնում:

Գ. Կանոնադրության 8-րդ բաժինը նվիրված է Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքներին և պարտականություններին, մասնավորապես՝ 8.1. կետով սահմանվում է, որ Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն Օրենքի և Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի.

ա) մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

բ) ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,

գ) մասնակցել Ընկերության կառավարմանը,

- դ) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
 - ե) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,
 - զ) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ գաղտնի փաստաթղթերի)՝ այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը (Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5 տոկոսը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը),
 - ը) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
 - թ) առաջարկություններով հանդես գալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,
 - ժ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
 - ժա) հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
 - ժբ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
 - ժգ) օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,
 - ժդ) օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
- Ընկերության կանոնադրության 8.2. կետով սահմանվում է, որ հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

Կանոնադրության 8.3. կետով սահմանվում է, որ Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումներն Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

Կանոնադրության 8.4. կետով սահմանվում է արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները մասնավորապես՝

- ա) մասնակցել Ընկերության կառավարմանը,
 - բ) Ընկերության ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
 - գ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իրենց հասանելիք մասը,
 - դ) հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,
 - ե) ձայնի իրավունքով մասնակցել ընդհանուր ժողովի աշխատանքներին,
 - զ) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
 - է) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը:
- Իրենց իրավունքներից արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն օգտվում են Օրենքով, Ընկերության կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված վերապահումներով:

Կանոնադրության 8.5. կետով սահմանվում է, որ Բաժնետերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ:

Ընկերության կանոնադրությամբ սահմանված են բաժնետոմսերի վերաբերյալ հետևյալ սահմանափակումները.

- Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ

բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի 25 տոկոսը:

Դ. Բաժնետոմսերից բխող իրավունքների ցանկացած փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, որի հրավիրման և մասնակցելու կարգը ներկայացված է Ե. կետում:

Ե. Բաժնետերերի ժողովի հրավիրման կարգը և դրա մասնակցելու կարգը սահմանվում է Ընկերության կանոնադրության և «Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին» կանոնակարգով:
Բաժնետերերի ժողովի գումարում

Բաժնետերերի ժողովը գումարվում է Խորհրդի կողմից: Մասնավորապես՝ Տարեկան ժողովի գումարման, ինչպես նաև, Ընկերության գլխավոր տնօրենի, վեստուոգոլ հանձնաժողովի (վերստուոգոլի), Ընկերության աուտիտորի Ընկերության քվեարկվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոս սեփականատեր բաժնետերերի կողմից Արտահերթ ժողովի գումարման պահանջի ներկայացման դեպքում Խորհուրդը մերժման հիմքերի բացակայության պարագայում պարտավոր է՝

- Օրենքով սահմանված ժամկետում Բաժնետերերի ժողովի գումարման մասին որոշում ընդունել,
- Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով ապահովել Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցումը բաժնետերերին,
- որոշել «Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին» կանոնակարգի 11 հոդվածով նախատեսված տեղեկությունները,
- կազմել բաժնետերերի ցուցակը,
- պատրաստել բաժնետերերին տրամադրման ենթական տեղեկությունները (նյութերը) և ապահովել տվյալ տեղեկությունների (նյութերի) ներկայացումը բաժնետերերին «Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին» կանոնակարգի 15 հոդվածով սահմանված կարգով:

Բաժնետերերի ժողովի նախապատրաստում

Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը որոշում է՝

- ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը,
- բաժնետերերի գրանցվելու ժամն ու վայրը,
- բաժնետերերի ցուցակը կազմելու տարին ամիսը և ամսաթիվը,
- ժողովի օրակարգը,
- ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,
- ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների (նյութերի) ցուցակը և դրանց տրամադրման կարգը,
- քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը,
- փոստային հասցեն, որտեղ բաժնետերերը կարող են ուղարկել լրացված քվեաթերթիկները:

Հեռակա կարգով քվեարկությամբ բաժնետերերի ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը որոշում է՝

- ժողովի անցկացման տարին, ամիսը և ամսաթիվը (քվեաթերթիկների ընդունման ավարտի տարին, ամիսը և ամսաթիվը),
- ժողովի անցկացման վայրը (փոստային հասցեն, որտեղ բաժնետերերը կարող է ուղարկել (ներկայացնել) լրացված քվեաթերթիկները),
- բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը,
- ժողովի օրակարգը,
- ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,
- ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների (նյութերի) ցուցակը և դրանց տրամադրման կարգը,
- քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը:

Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցում

Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողովի գումարման դեպքում Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցման մեջ պետք է նշվի.

- Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը,
- ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
- բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.
- ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին բաժնետերերի կողմից ծանոթանալու կարգը,
- ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի գրանցման սկզբի և ավարտի ժամն ու վայրը,
- ժողովի գումարման նախաձեռնողի մասին նշում,
- լրացված քվաթերթիկն ուղարկելու վայրի փոստային հասցեն,
- նշում ժողովին մասնակցելու համար անձը հաստատող փաստաթուղթ (բաժնետիրոջ ներկայացուցչի համար նաև այլ անհրաժեշտ փաստաթղթեր) ներկայացնելու անհրաժեշտության մասին,
- ժողովի անցկացման եղանակը,
- այլ տեղեկություններ:

Հեռակա կարգով քվերակությամբ բաժնետերերի ժողովի գումարման դեպքում Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցման մեջ պետք է նշվի՝

- Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը,
- ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը (քվաթերթիկների ընդունման ավարտի տարին, ամիսը, ամսաթիվը),
- բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.
- ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին բաժնետերերի կողմից ծանոթանալու կարգը,
- ժողովի գումարման նախաձեռնողի մասին նշում,
- ժողովի գումարման վայրը (լրացված քվաթերթիկն ուղարկելու (տրամադրելու) վայրի փոստային հասցեն),
- Բաժնետերերի ժողովի անցկացման եղանակը,
- այլ տեղեկություններ:

Ընկերության կանոնադրության 11.14. կետով սահմանվում է բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցման միջոցները, մասնավորապես՝ Ժողովի գումարման մասին ծանուցման ձևը սահմանվում է Ժողովի գումարման մասին որոշմամբ և կարող է իրականացվել պատվիրված նամակներ ուղարկելու, ծանուցումն անձամբ հանձնելու, էլեկտրոնային փոստով առաքելու կամ Ընկերության ինտերնետային էջում տեղադրելու միջոցով: Վերստուգող հանձնաժողովի անդամներին և Ընկերության աուդիտը իրականացնող անձին (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում), ինչպես նաև օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ժողովին հրավիրված այլ անձանց Ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակներ ուղարկելու կամ էլեկտրոնային փոստով առաքելու միջոցով: Ընկերությունը իրավունք ունի բաժնետերերին լրացուցիչ տեղեկացնել Ժողով գումարելու մասին ՋԼՄ-ների միջոցով (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ), այդ թվում՝ էլեկտրոնային և այլ թույլատրելի միջոցներով: սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ:

Բաժնետերերին ներկայացվող տեղեկությունները (նյութերը).

Ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին ներկայացվում են օրենով, Ընկերության կանոնադրությամբ, Ժողովի մասին կանոնակարգով և Խորհրդի որոշմամբ սահմանված տեղեկությունները (նյութերը):

Ժողովի նախապատրաստման ընթացքում, որի օրակարգում ընդգրկված են Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության վերաբերյալ հարցեր, Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին պետք է լրացուցիչ տեղեկություններ

տրամադրվի համապատասխան մարմնում առաջադրվող թեքնածուների գրավոր համաձայնության առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Ժողովի նախապատրաստման ժամանակ, որի օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնց վերաբերյալ քվեարկությունը կարող է հանգեցնել Ընկերության կողմից բաժնետոմսերի հետզնման պահանջի, Ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին պետք է լրացուցիչ ներկայացվեն (տրամադրվեն) հետևյալ տեղեկությունները (նյութերը).

- Ընկերության բաժնետոմսերի շուկայական արժեքի վերաբերյալ անկախ գնահատողի հաշվետվությունը,
- Ընկերության Խորհրդի այն նիստի արձանագրությունը (քաղվածք արձանագրությունից), որի ժամանակ բաժնետոմսերի հետ գնման գնի սահմանման մասին որոշում է ընդունվել,
- Օրենքով սահմանված տեղեկությունները:

Ժողովի նախապատրաստման ընթացքում, որի օրակարգում ընդգրկված են Ընկերության վերակազմակերպման վերաբերյալ հարցեր, Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին պետք է լրացուցիչ ներկայացվեն (տրամադրվեն) հետևյալ տեղեկությունները (նյութերը).

- Ընկերության լիազոր մարմնի կողմից հաստատված բաժանման, առանձնացման, վերակազմավորման մասին որոշմամբ կամ միաձուլման, միավորման մասին պայմանագրում ներկայացված Ընկերության վերակազմակերպման պայմանների և կարգի հիմնավորումը,
- Ժողովի գումարման ամսաթվին նախորդող երեք ավարտված ֆինանսական տարիների վերակազմակերպմանը մասնակցող բոլոր ընկերությունների տարեկան հաշվետվությունները և տարեկան ֆինանսական հաշվետվությունը (եթե կազմակերպությունը գործունեություն է ծավալում երեք տարուց պակաս ժամանակահատվածի ընթացքում, նրա ձևավորման պահից յուրաքանչյուր ավարտված ֆինանսական տարվա համար),
- վերակազմակերպմանը մասնակցող բոլոր ընկերությունների Ժողովի գումարման ամսաթվին նախորդող վերջին եռամսյակի եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

Ընկերության կորպորատիվ քարտուղարը պարտավոր է բաժնետերերին տրամադրել բաժնետերերին ներկայացման ենթակա տեղեկությունների (նյութերի) պատճենները համապատասխան պահանջը ստանալու պահից 5 օրվա ընթացքում:

Բաժնետերն իրավունք ունի տեղեկությունների (նյութերի) պատճենները ստանալ իր կողմից ներկայացված պահանջում նշված հասցեում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով), իսկ դրա բացակայության դեպքում՝ Ընկերության գործունեության վայրում առձեռն եղանակով:

Ժողովի նախապատրաստման ընթացքում տեղեկությունների (նյութերի) ներկայացման ձևը սահմանվում է Ժողովի գումարման մասին Խորհրդի որոշմամբ: Անկախ Խորհրդի որոշմամբ սահմանված՝ տեղեկությունների (նյութերի) ներկայացման ձևից Ընկերությունը պարտավոր է բաժնետերերին ներկայացվող տեղեկությունները (նյութերը) տեղադրել Ընկերության ինտերնետային կայքում:

Ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները.

Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր բաժնետերն (բաժնետերերը) իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջադրել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ:

Տարեկան Ժողովի օրակարգում հարցերի ընդգրկման, Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկություններն Ընկերություն պետք է ներկայացվեն ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում:

Եթե արտահերթ Ժողովի օրակարգում ընդգրկված է Խորհրդի անդամի ընտրության հարց, Խորհրդի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկությունը Ընկերություն պետք է ներկայացվեն արտահերթ Ժողովի գումարման օրվանից առնվազն 30 օր առաջ:

Ժողովի օրակարգում հարցի (հարցերի) ընդգրկման, Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկություններին ներկայացվող պահանջները սահմանվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգով:

Խորհուրդը պարտավոր է ուսումնասիրել Ընկերություն ներկայացված առաջարկությունները և որոշում ընդունել առաջարկությունները բավարարելու կամ մերժելու մասին՝ Ժողովի օրակարգում հարցի (հարցերի) ընդգրկման և Խորհրդի կամ վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու համար Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետի ավարտից 5 օրվա ընթացքում:

Բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից առաջարկված հարցերն ընդգրկվում են Ժողովի օրակարգ, ինչպես նաև առաջադրված անդամության թեկնածուներն ընդգրկվում են անդամության թեկնածուների ցուցակում, բացառությամբ կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

Ժողովի օրակարգում հարցի (հարցերի) կամ համապատասխան մարմնում ընտրվելու համար անդամության թեկնածուների ցուցակում առաջադրված անդամության թեկնածուների ընդգրկման առաջարկությունները մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում Խորհուրդը պարտավոր է մեծան որոշման ընդունման պահից 3 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել առաջարկություն ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին):

Բաժնետերերի ժողովին մասնակցող անձինք

Բաժնետերերի ժողովին կարող են ներկա գտնվել՝

- բաժնետերերի ցուցակում ընդգրկված բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները,
- Ընկերության բաժնետոմսերի ռեեստրավարի ներկայացուցիչները,
- Ընկերության աուդիտորի ներկայացուցիչները,
- Ընկերության կառավարման մարմինների անդամները,
- Ընկերության կառավարման մարմիններում ընտրվելու նպատակով քվաթերթիկներում ընդգրկված թեկնածուները,
- Խորհրդի կամ Բաժնետերերի ժողովի գումարման նախաձեռնող անձանց կողմից հրավիրված այլ անձինք:

Խորհրդի, Ընկերության գործադիր մամնի և վերստուգող հանձնաժողովի անդամները պարտավոր են ներկա գտնվել բաժնետերերի ընդհանուր ժողովին: Նրանք պարտավոր են Բաժնետերերի ժողովի մասնակիցների հարցերին տալ հիմնավորված պատասխաններ:

Բաժնետերը կարող է մասնակցել ժողովին հետևյալ եղանակներով՝

- անձամբ կամ իր կողմից ներկայացուցչի միջոցով մասնակցել ժողովում օրակարգի հարցերի քննարկմանը և դրանց քվեարկությանը (Համատեղ ներկայությամբ բաժնետերերի ժողովի գումարման դեպքում),
- հեռակա կարգով քվեարկել անձամբ կամ քվեարկելու իրավունքը լիազորել այլ անձի:

Համատեղ ներկայությամբ Բաժնետերերի ժողովի մասնակիցների գրանցումը

Հաշվիչ հանձնաժողովը ստուգում է Բաժնետերերի ժողովի մասնակցի անձն ու նրա լիազորությունը և գրանցում նրան:

Բաժնետերերի ժողովի մասնակիցների գրանցումը պետք է իրականացվի Բաժնետերերի ժողովի գումարման վայրում:

Գրանցման իրականացման ընթացքում հաշվիչ հանձնաժողովը պետք է վարի հետևյալ մատյանները՝

- մասնակիցների գրանցման մատյան,
- լիազորագրերի և այլ փաստաթղթերի հաշվառման մատյան:

Մասնակիցների գրանցումը սկսվում է Բաժնետերերի ժողովի գումարման օրը:

Բաժնետերերի ժողովի մասնակիցների գրանցումը պետք է իրականացվի մասնակցի նույնականացման միջոցով, այսինքն՝ համեմատվում են բաժնետերերի ցուցակում ընդգրկված տվյալները մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի տվյալներ հետ:

Բաժնետերերի ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետերը՝ անձը հաստատող փաստաթուղթ,
- ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետիրոջ ներկայացուցիչը՝ բաժնետիրոջ կողմից տրված լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը,
- իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջ անունից առանց լիազորագրի գործող ներկայացուցիչը՝ նրա լիազորությունը հաստատող փաստաթուղթը (այդ պաշտոնին նշանակելու կամ ընտրելու որոշման պատճենը) և անձը հաստատող փաստաթուղթը,
- իրավաբանական անձ հանդիսացող բաժնետիրոջ անունից լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցիչը՝ բաժնետիրոջ անունից տրված լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմին հանդիսացող բաժնետիրոջ անունից առանց լիազորագրի գործող ներկայացուցիչը՝ համապատասխան լիազորությունների առկայությունը հաստատող փաստաթուղթը (ծառայողական վկայական և այլ փաստաթղթեր) և անձը հաստատող փաստաթուղթը,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմին հանդիսացող բաժնետիրոջ լիազորագրի հիման գործող ներկայացուցիչը՝ բաժնետիրոջ անունից տրված լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը:

Բաժնետերերի ժողովին մասնակցող բաժնետիրոջ ներկայացուցչի՝ բաժնետիրոջ անունից գործելու լիազորագիրը և այլ փաստաթղթերը գրանցման ժամանակ հանձնվում են Ընկերությանը:

Բաժնետերերի ժողովի մասնակիցների գրանցումն ավարտվում է Բաժնետերերի ժողովի օրակարգի վերջին հարցի քննարկման ավարտի պահին:

Բաժնետերերի ժողովի բացման ժամանակ հաշվիչ հանձնաժողովը հայտարարում է Բաժնետերերի ժողովի բացման պահին գրանցված մասնակիցների թվի, ժողովի օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ նրանց պատկանող ընդհանուր ձայների թվի և ժողովի բացման պահին օրակարգի յուրաքանչյուր հարցի քվորում ապահովելու մասին տեղեկություններ:

Բաժնետերերի ժողովի մասնակիցների գրանցման արդյունքում հաշվիչ հանձնաժողովը կազմում է արձանագրություն: Արձանագրությանը կցվում են գրանցման ընթացակարգի վերաբերյալ ստացված բողոքներն ու հայտարարությունները:

Հեռակա կարգով քվեարկությամբ բաժնետերերի ժողովի անցկացումը

Հեռակա կարգով քվեարկությամբ բաժնետերերի ժողովի անցկացման դեպքում քվեաթերթիկները պետք է ուղարկվեն (տրամադրվեն) բաժնետերերի ցուցակում նշված անձանց օրենսդրությամբ և «Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին» կանոնակարգով սահմանված ժամկետում:

Լրացված քվեաթերթիկն ուղարկվում է Բաժնետերերի ժողովի գումարման մասին ծանուցման մեջ նշված հասցեով:

գ. օրենքի, ենթաօրենսդրական ակտերի § (կամ) կանոնադրության այն հոդվածները, որոնց հիման վրա պահանջվում է թողարկողի մոտ մասնակցություն ձեռք բերելիս բացահայտել դրա մասին տեղեկատվություն.

1.8. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ են հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ այլ կերպ Ընկերության որոշումները կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերության գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորությունների համար: Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են վերը նշված իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության վիճակում):

1.9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

2. ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՉՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

2.1. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

ա) Լրիվ՝

- հայերեն լեզվով՝ «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն,
- ռուսերեն լեզվով՝ Открытое Акционерное Общество «Арцах ГЭК»,
- անգլերեն լեզվով՝ «ARTSAKH HEK» Open Joint Stock Company:

բ) Կրճատ՝

- հայերեն լեզվով՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ,
- ռուսերեն լեզվով՝ ОАО «Арцах ГЭК»,
- անգլերեն լեզվով՝ «ARTSAKH HEK» OJSC:





2.2. Ընկերության գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Ա. Առաքելյան փողոց, թիվ 10:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

3.1. Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու միջոցով շահույթի ստացումը:

3.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.

- ա) էլեկտրական էներգիայի արտադրություն,
- բ) Ընկերության հիմնական միջոցների շահագործման, ընթացիկ նորոգման և կարգաբերման աշխատանքների կատարում,
- գ) Ընկերության տեխնիկական վերազինման, վերակառուցման, հիմնանորոգման աշխատանքների կատարում, նոր կառուցվող օբյեկտների պատվիրատուի գործառույթների իրականացում,
- դ) Նոր էներգաօբյեկտների (հիդրոէլեկտրակայանների) շինարարության իրականացում:

3.3. Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

3.4. Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից նրանում նշված ժամկետում:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Ընկերությունն իրավունք ունի իր կողմից թողարկվող բաժնետոմսերը տեղաբաշխել ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով և իրականացնել դրանց ազատ վաճառքը Օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

4.2. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր ու կախյալ) հիմնադիր (մասնակից), բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

4.3. Ընկերությունն իրավունք ունի.

- ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
- բ) օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,
- գ) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,
- դ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- ե) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- զ) ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ



- կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,
- է) ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) քաղաքացիներին,
 - ը) օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) անդամակցել իրավաբանական անձանց,
 - թ) ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,
 - ժ) ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,
 - ժա) օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

4.4. Ընկերությունը պարտավոր է.

- ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն,
- բ) ամեն տարի, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթների և վնասների հաշիվը,
- գ) աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- դ) պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- ե) օենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,
- զ) ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության պետական գրանցման վկայականի, կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Ընկերության փոխկապակցված անձանց, նշանակալից ու խոշոր բաժնետերերի ցուցակների, կնքած պայմանագրերի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումն իր գտնվելու վայրում,
- է) իր բաժնետերերին հնարավորություններ ստեղծել ծանոթանալու Ընկերության վերը թվարկված փաստաթղթերի հետ (բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք պարունակում են գաղտնի տեղեկություններ),



- ը) պետական գրանցումն իրականացնող մարմիններին ծանուցել մասնաձյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման մասին,
- թ) կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՋՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱՔԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ, ԴՈՒՍՏՐ ՈՒ ԿԱԽՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Ընկերությունն իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաձյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես և եռնային Դարաբաղի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձիք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության կողմից տրված լիազորագրի հիման վրա:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

6.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5,962,074.000 (հինգ միլիարդ ինը հարյուր վաթսուներկու միլիոն յոթանասունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը բաժանված է 5,962,074 (հինգ միլիոն ինը հարյուր վաթսուներկու միլիոն յոթանասունչորս հազար) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերի, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 5,962,074 (հինգ միլիոն ինը հարյուր վաթսուներկու միլիոն յոթանասունչորս հազար) բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են բաժնետերերին և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 9.137.926 (ինը միլիոն մեկ հարյուր երեսուկյոթ հազար ինը հարյուր քսանվեց) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1,000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

Հայտարարված սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի՝ դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված կարգով եւ ժամկետում:

6.3. Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և իրավաբանական անձանց պետական ռեգիստրում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

6.4. Ընկերությունն Օրենքով սահմանված կարգով կարող է կանոնադրական կապիտալի չափը ավելացնել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով (հայտարարված



բաժնետոմսերի քանակի սահմաններում), եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վաճարված են:

- 6.5. Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տրվող Ընկերության արժեթղթերի սեփականատերերը Բաժնետերերից առաջ ունեն իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Ընկերության նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում Բաժնետերերն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող Ընկերության արժեթղթերի սեփականատերերի նախապատվության իրավունքի (նոր բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է 15 օր: Բաժնետերերի կողմից նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է 30 օր:
- 6.6. Ընկերությունն Օրենքով սահմանված կարգով կանոնադրական կապիտալի չափը կարող է նվազեցնել բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ և բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում՝ Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերման և մարման միջոցով:

7. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹԴԵՐԸ

7.1. Ընկերությունը կարող է տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր, Օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:

7.2. Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի 25 տոկոսը:

Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

Ընկերության որոշակի տեսակի (միանման տարբերակիչ բնորոշ առանձնահատկություններ՝ անվանական արժեք, հավաստող իրավունքներ, արտոնություններ և սահմանափակումներ ունեցող) ամեն մի արտոնյալ բաժնետոմս ունի միևնույն անվանական արժեքը:

7.3. Ընկերությունն իրավունք ունի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում թողարկել հաստատագրված և (կամ) փոփոխական շահութաբաժնով, փոխարկելի և այլ տեսակի (անկախ Ընկերության տնտեսական գործունեության արդյունքից), ինչպես նաև աշխատակցի արտոնյալ բաժնետոմսեր:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում (բացի Ընկերության լուծարման կամ վերակազմակերպման հարցերի մասին քվեարկությունից):

Արտոնյալ բաժնետոմսերը կարող են փոխարինվել հասարակ (սովորական) բաժնետոմսերի: Ընդ որում փոխարինելու ժամանակ Ընկերությունը պետք է մարի բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը:

7.4. Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

7.5. Բաժնետերերի կողմից բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո Ընկերությունը պետք է ապահովի բաժնետոմսերի գրանցումը իր բաժնետերերի ռեեստրի (գրանցա-



մատյանի) անձնական հաշիվներում՝ բաժնետերերի ռեեստրի վարման Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կանոններին համապատասխան:

7.6. Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

7.7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից որոշված կարգով Ընկերությունը կարող է աշխատակիցներին տրամադրել ինչպես հասարակ (սովորական), այնպես էլ արտոնյալ (դրանց առկայության դեպքում) բաժնետոմսեր:

Աշխատակցի բաժնետոմսի սեփականատերերն օգտվում են նույն իրավունքներից, ինչպիսիք սահմանված են Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ՝ դրանց համապատասխանող հասարակ (սովորական) կամ տարբեր դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար:

Աշխատակցի բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է տարբերվի Ընկերության հասարակ (սովորական) և համապատասխան դասի արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքից:

7.8. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարման միջոց կարող է լինել գույքը, ներառյալ՝ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, մտավոր սեփականությունը:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով, եթե արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերման ժամանակ բաժնետոմսերի դիմաց վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ և ենթակա է գնահատման՝ անկախ գնահատողի կողմից:

Մինչև բաժնետոմսի արժեքի լրիվ վճարումը, բաժնետոմսի սեփականատերը, բացառությամբ Ընկերության հիմնադիր հանդիսացողից, զրկվում է ձայնի իրավունքից:

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերի գծով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման ձանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:

7.9. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

Եթե պահուստային հիմնադրամը 15 տոկոսից փոքր է, հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության





բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

7.10. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահութաբաժինների վճարման, աշխատակիցների բաժնետիրացման, սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

8. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն Օրենքի և Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի.

- ա) մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- բ) ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,
- գ) մասնակցել Ընկերության կառավարմանը,
- դ) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- ե) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենքով և սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,
- զ) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ գաղտնի փաստաթղթերի)՝ այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը (Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5 տոկոսը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը),
- ը) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- թ) առաջարկություններով հանդես գալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- ժ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
- ժա) հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- ժբ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,



ժգ) օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,

ժդ) օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

8.2. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

8.3. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումներն Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

8.4. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

ա) մասնակցել Ընկերության կառավարմանը,

բ) Ընկերության ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

գ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իրենց հասանելիք մասը,

դ) հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,

ե) ձայնի իրավունքով մասնակցել ընդհանուր ժողովի աշխատանքներին,

զ) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,

է) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը:

Սույն կետով սահմանված իրենց իրավունքներից արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն օգտվում են Օրենքով, սույն կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված վերապահումներով:

8.5. Բաժնետերերը պարտավոր են չիրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամսյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Հայտարարված շահութաբաժինները վճարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության կուտակված շահույթից: Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել այդ նպատակի համար հատուկ ստեղծված Ընկերության հիմնադրամների հաշվից:

Ընկերության տվյալ տարվա գործունեության արդյունքների հիման վրա հասարակ (սովորական) բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինն արտոնյալ բաժնետոմսերի համար սահմանված շահութաբաժինը գերանգացելու դեպքում, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստանալ հասարակ (սովորական) բաժնետոմսերին հասանելիք փաստացի շահութաբաժինը:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամսյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ:






- 9.2. Ընկերությունն իրավունք չունի Օրենքով սահմանված դեպքերում որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին:
- 9.3. Շահութաբաժինների վճարման կարգի, սկզբունքների և առանձնահատկությունների մասին պահանջները սահմանվում են Ընկերության շահութաբաժնային քաղաքականության մասին կանոնակարգով:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 10.1. Ընկերության կառավարման մարմիններն են.
 - ա) Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ «Ժողով»),
 - բ) Տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ «խորհուրդ»),
 - գ) Միանձնյա գործադիր մարմինը (այսուհետ՝ «Գլխավոր տնօրեն»):
- 10.2. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկող մարմին է հանդիսանում վերտուգող հանձնաժողովը:
- 10.3. Խորհուրդը և վերտուգող հանձնաժողովն ընտրվում են ժողովի կողմից:
- 10.4. Գլխավոր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից:

11. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

- 11.1. Ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
- 11.2. Ժողովները գումարվում են համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով, Ստեփանակերտ քաղաքում, իսկ Խորհրդի որոշմամբ կարող է սահմանվել ժողովի գումարման այլ վայր:
- 11.3. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան ժողով: Ընկերության տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից երկու ամիս հետո՝ չորս ամսվա ընթացքում:
- 11.4. Ժողովը նախագահում է Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ ժողովին ներկա բաժնետերերից ամենատարեցը, եթե ժողովի գումարման մասին որոշմամբ այլ անձ նշանակված չէ:
- 11.5. Ժողովն իրավունք ունի ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների առնվազն երեք քառորդով ընդունել որոշումներ հետևյալ հարցերի վերաբերյալ՝
 - ա) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատումը,
 - բ) Ընկերության վերակազմակերպումը,
 - գ) Ընկերության լուծարումը,
 - դ) Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
 - ե) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
 - զ) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը,
 - է) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը:






Սույն կետի «գ» և «զ» ենթակետերով սահմանված դեպքերում կողմ քվեարկված ձայների քանակը չպետք է պակաս լինի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից:

- 11.6. Ժողովն իրավունք ունի ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասությամբ ընդունել որոշումներ հետևյալ հարցերի վերաբերյալ՝
- ա) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 - բ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 - գ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը և հաշվիչ հանձնաժողովի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 - դ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
 - ե) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,
 - զ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
 - է) Ժողովի վարման կարգի հաստատումը,
 - ը) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան) և բաժանումը,
 - թ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը, որի ծավալը գերազանցում է Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 25 տոկոսը,
 - ժ) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
 - ժա) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում,
 - ժբ) գործարքների կնքման մասին, որում առկա է շահագրգռվածություն, որոշման ընդունումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում,
 - ժգ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ գանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,
 - ժդ) Ընկերության մարմինների գործունեությունը կարգավորող կանոնակարգերի հաստատումը, մասնավորապես՝
 - Ժողովի մասին կանոնակարգը,
 - Խորհրդի մասին կանոնակարգը,
 - Վերստուգող հանձնաժողովի մասին կանոնակարգը,
 - Հաշվիչ հանձնաժողովի մասին կանոնակարգը:
 - ժե) Խորհրդի անդամներին իրենց պարտականությունների կատարման հետ կապված պարգևավճարների և/կամ ծախսերի փոխհատուցման սահմանում և դրանց չափերի որոշում,

- ժգ) Ընկերության վերատուգող հանձնաժողովի անդամներին իրենց (իր) պարտականությունների կատարման հետ կապված պարզևավճարների և/կամ ծախսերի փոխհատուցման սահմանում և դրանց չափերի որոշում,
- ժէ) բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով նախաձեռնող անձի կամ մարմնի կողմից տվյալ ժողովի նախապատրաստման և անցկացման հետ կապված ծախսերի փոխհատուցման որոշում:
- 11.7. Ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված ցանկացած հարցի շուրջ:
- 11.8. Ժողովը որոշումներ է ընդունում միայն ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ: Ժողովն իրավունք չունի փոխել ժողովի օրակարգը:
- 11.9. Խորհրդի առաջարկությամբ ժողովը որոշումներ ընդունում է հետևյալ հարցերի վերաբերյալ՝
- ա) Ընկերության վերակազմակերպում,
 - բ) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացում բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով,
 - գ) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցում բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման ճանապարհով,
 - դ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան) և բաժանումը,
 - ե) Օրենքով նախատեսված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքներին հավանություն տալը,
 - զ) Օրենքով նախատեսված դեպքերում խոշոր գործարքների կնքումը,
 - է) Ընկերության մարմինների գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի հաստատումը,
 - ը) Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ հարցերի վերաբերյալ:
- 11.10. Եթե ժողովի օրակարգում ընդգրկված են Խորհրդի կամ վերստուգող հանձնաժողովի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և Խորհրդի կամ վերստուգող հանձնաժողովի ընտրությունների մասին հարցեր, ապա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին հարցի վերաբերյալ որոշում չընդունվելու դեպքում Խորհրդի կամ վերստուգող հանձնաժողովի ընտրությունների մասին հարցի վերաբերյալ քվեարկության արդյունքները չեն ամփոփվում:
- 11.11. Ժողովի կողմից ընդունված որոշումների և քվեարկության արդյունքների մասին տեղեկությունները հայտարարվում են ժողովի ընթացքում (որի ընթացքում իրականացվել է քվեարկությունը) կամ բացահայտվում են Ընկերության ինտերնետային կայքում ժողովում քվեարկության արդյունքների մասին արձանագրությունը կազմելու պահից 15 օրվա ընթացքում՝ քվեարկության արդյունքների մասին հաշվետվության տեսքով:
- 11.12. Ժողովի օրակարգում ընդգրկված հարցի մասին որոշումը չի համարվում ընդունված և այդ մասին տեղեկությունները չեն կարող հրապարակվել մինչև ժողովի օրակարգի բոլոր հարցերի քվեարկության արդյունքների ամփոփումը:
- 11.13. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով գանգատարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և Ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ ժողովի կողմից ընդունված որոշումը, եթե նա չի մասնակցել ժողովին³⁷ կամ այդ որոշմանը դեմ է քվեարկել և ընդունված որոշմամբ խախտվել են նրա օրինական շահերը և իրավունքները: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել ժողովի որոշումը, եթե որոշումը բողոքարկող բաժնետիրոջ (բաժնետերերի) քվեարկությանը



մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, կամ թույլ տված խախտումներն էական չեն և որոշումը վնաս չի պատճառել որոշումը բողոքարկող բաժնետիրոջը (բաժնետերերին):

11.14. Բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը.

- ա) ժողովի գումարման մասին ծանուցման ձևը սահմանվում է ժողովի գումարման մասին որոշմամբ և կարող է իրականացվել պատվիրված նամակներ ուղարկելու, ծանուցումն անձամբ հանձնելու, էլեկտրոնային փոստով առաքելու կամ Ընկերության ինտերնետային էջում տեղադրելու միջոցով: Վերստուգող հանձնաժողովի անդամներին և Ընկերության աուդիտն իրականացնող անձին (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում), ինչպես նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ժողովին իրավիքված այլ անձանց ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակներ ուղարկելու կամ էլեկտրոնային փոստով առաքելու միջոցով: Ընկերությունը իրավունք ունի բաժնետերերին լրացուցիչ տեղեկացնել ժողով գումարելու մասին ԶԼՄ-ների միջոցով (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ), այդ թվում՝ էլեկտրոնային և այլ թույլատրելի միջոցներով:
- բ) Ընկերությունը պարտավոր է Բաժնետերերին ժողովի գումարման մասին սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 30 օր առաջ:
Այն դեպքում, երբ արտահերթ ժողովի օրակարգը պարունակում է խորհրդի անդամների ընտրությունների վերաբերյալ հարց, արտահերթ ժողով գումարելու մասին ծանուցումը պետք է ուղարկվի (հրապարակվի) ժողովի գումարման օրվանից առնվազն 45 օր առաջ:
- գ) ժողովի գումարման մասին ծանուցման նկատմամբ այլ պահանջները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգով:

11.15. Բաժնետերերին ներկայացվող տեղեկությունները (նյութերը).

- ա) ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին ներկայացվում են Օրենքով, սույն կանոնադրությամբ, ժողովի մասին կանոնակարգով և խորհրդի որոշմամբ սահմանված տեղեկությունները (նյութերը):
- բ) Տարեկան հաշվետվությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգող հանձնաժողովի կողմից:
Մինչև սույն կետով նախատեսված փաստաթղթերի հրապարակումը Ընկերությունը պետք է տարեկան ֆինանսական հաշվետվությունները ստուգելու և հաստատելու նպատակով ներգրավի Ընկերությունից և նրա բաժնետերերից անկախ աուդիտոր:
Ընկերության տարեկան հաշվետվությունները ենթակա են խորհրդի նախնական հաստատմանը, ոչ ուշ քան տարեկան ժողովի գումարման օրվանից 30 օր առաջ:
- գ) ժողովի նախապատրաստման ընթացքում, որի օրակարգում ընդգրկված են խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության վերաբերյալ հարցեր, ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին պետք է լրացուցիչ տեղեկություններ տրամադրվի համապատասխան մարմնում առաջադրվող թեքնածուների գրավոր համաձայնության առկայության կամ բացակայության վերաբերյալ:
- դ) ժողովի նախապատրաստման ժամանակ, որի օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնց վերաբերյալ քվեարկությունը կարող է հանգեցնել Ընկերության կողմից



բաժնետոմսերի հետզնման պահանջի, ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին պետք է լրացուցիչ ներկայացվեն (տրամադրվեն) հետևյալ տեղեկությունները (նյութերը).

- Ընկերության բաժնետոմսերի շուկայական արժեքի վերաբերյալ անկախ գնահատողի հաշվետվությունը,
- Ընկերության Խորհրդի այն նիստի արձանագրությունը (քաղվածք արձանագրությունից), որի ժամանակ բաժնետոմսերի հետ գնման գնի սահմանման մասին որոշում է ընդունվել,
- Օրենքով սահմանված տեղեկությունները:

ե) ժողովի նախապատրաստման ընթացքում, որի օրակարգում ընգրկված են Ընկերության վերակազմակերպման վերաբերյալ հարցեր, ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին պետք է լրացուցիչ ներկայացվեն (տրամադրվեն) հետևյալ տեղեկությունները (նյութերը).

- Ընկերության լիազոր մարմնի կողմից հաստատված բաժանման, առանձնացման, վերակազմավորման մասին որոշմամբ կամ միաձուլման, միավորման մասին պայմանագրում ներկայացված Ընկերության վերակազմակերպման պայմանների և կարգի հիմնավորումը,
- ժողովի գումարման ամսաթվին նախորդող երեք ավարտված ֆինանսական տարիների վերակազմակերպմանը մասնակցող բոլոր ընկերությունների տարեկան հաշվետվությունները և տարեկան ֆինանսական հաշվետվությունը (եթե կազմակերպությունը գործունեություն է ծավալում երեք տարուց պակաս ժամանակահատվածի ընթացքում, նրա ձևավորման պահից յուրաքանչյուր ավարտված ֆինանսական տարվա համար),
- վերակազմակերպմանը մասնակցող բոլոր ընկերությունների ժողովի գումարման ամսաթվին նախորդող վերջին եռամսյակի եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

զ) ժողովի նախապատրաստման ընթացքում տեղեկությունների (նյութերի) ներկայացման ձևը սահմանվում է ժողովի գումարման մասին Խորհրդի որոշմամբ: Անկախ Խորհրդի որոշմամբ սահմանված՝ տեղեկությունների (նյութերի) ներկայացման ձևից Ընկերությունը պարտավոր է բաժնետերերին ներկայացվող տեղեկությունները (նյութերը) տեղադրել Ընկերության ինտերնետային կայքում:

11.16. ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները.

- ա) Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր բաժնետերերն (բաժնետերերը) իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջադրել Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ:
- բ) Տարեկան ժողովի օրակարգում հարցերի ընդգրկման, Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկություններն Ընկերություն պետք է ներկայացվեն ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում:

Եթե արտահերթ ժողովի օրակարգում ընդգրկված է Խորհրդի անդամի ընտրության հարց, Խորհրդի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկությունը Ընկերություն պետք է ներկայացվեն արտահերթ ժողովի գումարման օրվանից առնվազն 30 օր առաջ:

զ) ժողովի օրակարգում հարցի (հարցերի) ընդգրկման, Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առա-



ջարկություններին ներկայացվող պահանջները սահմանվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգով:

- դ) Խորհուրդը պարտավոր է ուսումնասիրել Ընկերություն ներկայացված առաջարկությունները և որոշում ընդունել առաջարկությունները բավարարելու կամ մերժելու մասին՝ ժողովի օրակարգում հարցի (հարցերի) ընդգրկման և Խորհրդի կամ վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու համար սույն կանոնադրության 11.16. կետի բ) ենթակետով սահմանված ժամկետի ավարտից 5 օրվա ընթացքում:
- ե) Բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից առաջարկված հարցերն ընդգրկվում են ժողովի օրակարգ, ինչպես նաև առաջադրված անդամության թեկնածուներն ընդգրկվում են անդամության թեկնածուների ցուցակում, բացառությամբ հետևյալ դեպքերի՝
- բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից չեն պահպանվել առաջարկությունների ներկայացման համար սույն կանոնադրության 11.6. կետի բ) ենթակետով սահմանված ժամկետները,
 - առաջարկությունները ստորագրած բաժնետերը (բաժնետերերը) չի (չեն) հանդիսանում Օրենքով սահմանված քանակի քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր,
 - ներկայացված առաջարկությունները չեն համապատասխանում Օրենքի, սույն կանոնադրության և Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգի պահանջներին,
 - ժողովի օրակարգում ընդգրկման համար առաջարկվող հարցը չի պատկանում ժողովի՝ Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իրավասությանը:
- զ) Ժողովի օրակարգում հարցի (հարցերի) կամ համապատասխան մարմնում ընտրվելու համար անդամության թեկնածուների ցուցակում առաջադրված անդամության թեկնածուների ընդգրկման առաջարկությունները մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում Խորհուրդը պարտավոր է նման որոշման ընդունման պահից 3 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել առաջարկություն ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին):
- է) Խորհուրդն իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգում ընդգրկման համար առաջարկված հարցերի և դրանց որոշումների ձևակերպումները:
- թ) Բացի ժողովի օրակարգում ընդգրկելու համար բաժնետերերի կողմից առաջարկվող հարցերից, ինչպես նաև նման առաջարկությունների բացակայության դեպքում, Խորհուրդն իրավունք ունի իր հայեցողությամբ հարցեր ընդգրկել ժողովի օրակարգում:
- ժ) Խորհուրդն իրավունք ունի Ընկերության համապատասխան մարմիններում ընտրվելու համար իր հայեցողությամբ թեկնածուներ առաջադրել, եթե բաժնետերերի կողմից ներկայացված առաջարկություններով անդամության թեկնածուների թիվն ավելի քիչ է, քան համապատասխան մարմնում անդամների սահմանված քանակը:

11.17. Արտահերթ ժողովը.

- ա) Արտահերթ ժողովը կարող է գումարվել Խորհրդի որոշման հիման վրա՝ սեփական նախաձեռնությամբ կամ Ընկերության գլխավոր տնօրենի, վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի (պահանջը ներկայացնելու դրությամբ) առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետերերի (բաժնետիրոջ) պահանջով:



բ) Արտահերթ ժողով գումարելու մասին պահանջն Ընկերություն ներկայացվում է գրավոր ձևով՝ նշելով այն ներկայացնող բաժնետերերի (բաժնետիրոջ) անուն ազգանունը (անվանունը), նրանց (նրան) պատկանող բաժնետոմսերի քանակը, տեսակը (դասը): Արտահերթ ժողով գումարելու մասին պահանջը պետք է ստորագրված լինի արտահերթ ժողով գումարելու մասին պահանջ ներկայացնող անձանց (անձի) կողմից:

գ) Արտահերթ ժողով գումարելու մասին պահանջ ներկայացնելու պահից 5 օրվա ընթացքում Խորհուրդը պարտավոր է ընդունել արտահերթ ժողովի գումարման կամ դրա մերժման որոշում:

Արտահերթ ժողովի գումարման կամ դրա մերժման մասին Խորհուրդը որոշումն ուղարկում է արտահերթ ժողովի գումարման պահանջը ներկայացնող անձին (մարմնին)՝ որոշման ընդունման պահից 3 օրվա ընթացքում:

Խորհուրդն արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին որոշում ընդունում է միայն Օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին Խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

դ) Արտահերթ ժողովը պետք է գումարվի արտահերթ ժողով գումարելու պահանջի ներկայացման պահից 40 օրվա ընթացքում:

Եթե ժողովի օրակարգը պարունակում է Խորհրդի անդամի ընտրության մասին հարց, ապա նման ժողովը պետք է գումարվի պահանջի ներկայացման պահից 70 օրվա ընթացքում:

Սույն կետի իմաստով արտահերթ ժողովի գումարման պահանջի ներկայացման ժամկետ է համարվում Ընկերության կողմից այն ստանալու օրը:

ե) Արտահերթ ժողովի գումարման պահանջի ներկայացման պահից Խորհրդի կողմից 10 օրվա ընթացքում արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չընդունվելու կամ ժողովի գումարումը մերժելու մասին որոշում ընդունվելու դեպքում արտահերթ ժողով կարող է գումարվել դրա գումարման պահանջ ներկայացնող անձի (մարմնի) կողմից՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգով սահմանված ընթացակարգով: Այդ դեպքում՝

- արտահերթ ժողով գումարող անձը (մարմինը) տիրապետում է արտահերթ ժողով գումարելու և անցկացնելու Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված բոլոր լիազորություններին,
- սույն կետի հիմքով գումարվող ժողովի նախապատրաստման և անցկացման հետ ծախսերը կարող են ժողովի որոշմամբ փոխհատուցվել Ընկերության կողմից:

զ) Եթե Խորհուրդը սեփական նախաձեռնությամբ որոշում է ընդունել արտահերթ ժողովի գումարման մասին, ապա տվյալ արտահերթ ժողովը պետք է գումարվի Խորհրդի որոշման ընդունման պահից 40 օրվա ընթացքում:

Եթե արտահերթ ժողովի օրակարգը պարունակում է Խորհրդի անդամի ընտրության մասին հարց, ապա նման ժողովը պետք է գումարվի Խորհրդի որոշման ընդունման պահից 70 օրվա ընթացքում:

Սույն կետով սահմանված պահանջները չեն տարածվում սույն կանոնադրությամբ 11.7. կետի դ) ենթակետով սահմանված դեպքերում գումարվող արտահերթ ժողովի վրա:

11.18. Ժողովի քվորումը.

ա) Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնե-





տոմսերի կեսից ավելին համատեղ տիրապետող բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները): Համատեղ ներկայությամբ ժողովում մասնակցող բաժնետերեր են համարվում այն բաժնետերերը, որոնք կամ որոնց ներկայացուցիչները գրանցվել են ժողովի մասնակիցների գրանցամատյանում և այն բաժնետերերը, որոնց քվեաթերթիկները ստացվել են մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հեռակա կարգով քվեարկությամբ ժողովին մասնակցող բաժնետերեր են համարվում այն բաժնետերերը, որոնց քվեաթերթիկները ստացվել են քվեաթերթիկների ընդունման ավարտի օրվանից ոչ ուշ:

բ) Համատեղ ներկայությամբ ժողովում մասնակիցների գրանցման կարգը սահմանվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգով:

գ) Եթե համատեղ ներկայությամբ ժողովի օրակարգը ներառում է այնպիսի հարցեր, որոնց վերաբերյալ քվեարկությունն իրականացվում է քվեարկողների տարբեր կազմով, ապա յուրաքանչյուր հարցի համար քվորումը որոշվում է առանձին:

Այն հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման քվորման բացակայությունը, որոնց քվեարկությունը կատարվում է քվեարկողների մի կազմի կողմից, չի խոչընդոտում քվեարկողների մեկ այլ կազմի կողմից այն հարցերի վերաբերյալ որոշումների ընդունմանը, որոնց ընդունման համար քվորումն ապահովված է:

Համատեղ ներկայությամբ ժողովը գումարվում է, եթե ապահովված է ժողովի օրակարգում ընդգրկված հարցերից առնվազն մեկի առնչությամբ քվորում:

դ) Հեռակա կարգով քվեարկությամբ ժողովի մասնակիցներ են համարվում այն բաժնետերերը, որոնց քվեաթերթիկները Ընկերություն են ներկայացվել մինչև քվեաթերթիկների ընդունման ժամկետի ավարտը: Հեռակա կարգով քվեարկությամբ ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ապահովված է ժողովի օրակարգում ընդգրկված հարցերից առնվազն մեկի առնչությամբ քվորում:

ե) Հեռակա կարգով քվեարկությամբ ժողովի քվորումը որոշվում է ըստ օրակարգի յուրաքանչյուր հարցի:

Հեռակա կարգով քվեարկությամբ ժողովն (ունի քվորում) իրավասու է օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունել, եթե ժողովի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կեսից ավելին:

Այն հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման քվորման բացակայությունը, որոնց քվեարկությունը կատարվում է քվեարկողների մի կազմի կողմից, չի խոչընդոտում քվեարկողների մեկ այլ կազմի կողմից այն հարցերի վերաբերյալ որոշումների ընդունմանը, որոնց ընդունման համար քվորումն ապահովված է:

11.19. Քվեաթերթիկները.

ա) ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեարկությունն իրականացվում է քվեաթերթիկների միջոցով:

Քվեաթերթիկը պետք տրամադրվի ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր բաժնետիրոջը (նրա ներկայացուցչին) ժողովի գումարման օրվանից առնվազն 30 օր առաջ, եթե Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգով այլ ժամկետ սահմանված չէ:

Քվեաթերթիկները տրամադրվում են առձեռն կամ պատվիրված նամակով ուղարկելու միջոցով, իսկ Խորհրդի որոշմամբ քվեաթերթիկները կարող են ուղարկվել էլեկտրոնային փոստի կամ Ընկերության ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով:



- բ) Քվեաթերթիկների ձևի և բովանդակության նկատմամբ պահանջները սահմանվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին կանոնակարգով:
- գ) Համատեղ ներկայությամբ ժողովի գումարման դեպքում ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում ընդգրկված բաժնետերերն իրավունք ունեն ժողովին մասնակցել անձամբ կամ ուղարկել լրացված քվեաթերթիկը: Ժողովին անձամբ մասնակցելու դեպքում ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում ընդգրկված բաժնետերերին (նրանց ներկայացուցչին) քվեաթերթիկը տրվում է ժողովին մասնակցելու համար գրանցման պահին առձեռն՝ նրա իսկ պահանջով: Ժողովի քվորման որոշման և քվեարկության արդյունքների ամփոփման համար հաշվի են առնվում այն ձայները, որոնք Ընկերության կողմից ստացվել են բաժնետերերի կողմից մինչև բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման օրը ուղարկված կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի ընթացքում հանձնված քվեաթերթիկների միջոցով:
- դ) Քվեաթերթիկներով քվեարկության ժամանակ ընդունվում են միայն այն ձայները (ըստ յուրաքանչյուր հարցի), որոնք լրացվել են քվեաթերթիկում նշված քվեարկության տարբերակներից միայն մեկով: Նշված պահանջի խախտմամբ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր: Քվեաթերթիկներն անվավեր են համարվում, եթե՝
- աուդիտորի հաստատման վերաբերյալ որոշման ընդունման ժամանակ քվեաթերթիկը պարունակում է մեկից ավելի թեկնածուների օգտին „կողմ,, ձայներ,
 - վերստուգող հանձնաժողովի ընտրության ժամանակ քվեաթերթիկը պարունակում է ավելի մեծ թվով թեքնածուների օգտին „կողմ,, ձայներ, քան նախատեսված էր թափուր տեղերի համար,
 - գումարային (կուտակային) քվեարկության կարգով Խորհրդի անդամների ընտրության ժամանակ քվեաթերթիկում թեքնածուների միջև բաշխվել են ավելի շատ թվով ձայներ, քան տիրապետում էր տվյալ բաժնետերը:
- ե) Եթե քվեաթերթիկի միջոցով քվեարկության են դրված մի քանի հարցեր, ապա հարցերից մեկի կամ մի քանիսի նկատմամբ քվեարկության պահանջների չպահպանումը չի հանգեցնում ամբողջ քվեաթերթիկի անվավեր ճանաչմանը:
- զ) Այն դեպքում երբ Ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից (քվեաթերթիկների ընդունման ավարտի օրվանից) ուշ է ստացել քվեաթերթիկները, ապա տվյալ քվեաթերթիկներն ուղարկող բաժնետերերը համարվում են ժողովին չմասնակցած և այդ բաժնետերերի ձայները քվեարկության ժամանակ հաշվի չեն առնվում:

11.20. Հաշվիչ հանձնաժողովը

- ա) Հաշիչ հանձնաժողովը ձևավորվում է ժողովի կողմից՝ Խորհրդի ներկայացմամբ: Հաշվիչ հանձնաժողովը բաղկացած է 3 հոգուց (նախագահ և 2 անդամներ): Ժողովը կարող է հաշվիչ հանձնաժողովի նախագահին և/կամ անդամին նշանակել մինչև 3 տարի ժամկետով:
- բ) Ժողովի որոշմամբ հաշվիչ հանձնաժողովի գործառույթները կարող են դրվել մասնագիտացված գրանցողի (Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստր վարող անձի կամ նման ծառայություններ մատուցող այլ անձի) վրա:
- գ) Հաշիչ հանձնաժողովը.
- ստուգում է ժողովին մասնակցող անձանց լիազորությունները և գրանցում նրանց,



- որոշում է ժողովի և օրակարգի յուրաքանչյուր հարցի քվորումը,
 - պարզաբանում է ժողովում բաժնետերերի կողմից ձայնի իրավունքի իրացման հետ կապված հարցերը,
 - պարզաբանում է քվեարկության դրված հարցերի քվեարկության իրականացման կարգը,
 - ապահովում է քվեարկության հաստատված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքները,
 - իրականացնում է ձայների հաշվարկը և ամփոփում քվեարկության արդյունքները,
 - կազմում և ստորագրում է քվեարկության արդյունքների արձանագրությունը,
 - քվեաթերթիկները փոխանցում է արխիվ՝ Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով,
 - իրականացնում է օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:
- դ) Հաշվիչ հանձնաժողովի գործունեության նկատմամբ այլ պահանջներ կարող են սահմանվել Ընկերության ներքին իրավական այլ ակտերով:

12. ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ


12.1. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ ի շահ բոլոր բաժնետերերի:

12.2. Ընկերության գործունեության ղեկավարումն իրականացնելիս Խորհուրդը.

- ա) որոշում է Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները և սահմանում է Ընկերության երկարաժամկետ ռազմավարությունը,
- բ) հաստատում է ամենամյա ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը (այդ թվում նաև՝ ֆինանսատնտեսական գործունեության պլանը),
- գ) հաստատում է Ընկերության հաստիքացուցակը և վարչակազմակերպական կառուցվածքը,
- դ) ընդունում է այլ կազմակերպություններում մասնակցություն ունեալու կամ այն դադարեցնելու մասին որոշումներ, եթե այդ որոշումներն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,
- ե) նախնական հաստատում է Ընկերության տարեկան հաշվետվությունները,
- զ) սահմանում է Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափը,
- է) ընդունում է որոշումներ Ընկերության պահուստային և այլ հիմնադրամի օգտագործման մասին,
- ը) ստեղծում է Ընկերության առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ, դադարեցնում է դրանց գործունեությունը, հաստատում է դրանց կանոնադրությունները,
- թ) ստեղծում է Խորհրդին կից հանձնաժողովներ և սահմանում է նրանց խնդիրները և գործառույթները,
- ժա) ընդունում է որոշում Ընկերության վերստուգող հանձնաժողովի կողմից Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում անցկացնելու մասին,
- ժբ) հավանության է արժանացնում Խորհրդի անդամներին վճարվող պարգևավճարների չափի սահմանման հիմնական չափանիշները,²⁴⁴
- ժբ) հաստատում է Ընկերության սոցիալական ծրագրերը,
- ժգ) որոշում է Ընկերության գույքի շուկայական արժեքը,

- ժդ) սահմանում է Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափը և վճարման կարգը,
- ժզ) սահմանում է Ընկերությունում պարտադիր պահպանվող փաստաթղթերի ցանկը,
- ժդ) սահմանում է Ընկերության կողմից հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միությունների մասնակցությունը:
- 12.3. Խորհուրդը ձևավորում է Ընկերության գործադիր մարմինը, այդ թվում՝ նշանակում է Ընկերության Գլխավոր տնօրենին և ընդունում է նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում:
- 12.4. Խորհուրդը լուծում է ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված հարցերը, այդ թվում՝
- ա) ընդունում է ժողովի գումարման մասին որոշում,
 - բ) հաստատում է ժողովի օրակարգը,
 - գ) հաստատում է ժողովին մանակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը,
 - դ) ընդունում է ժողովի նախապատրաստման և անցկացման հետ կապված այլ հարցերի վերաբերյալ որոշումներ:
- 12.5. Խորհուրդն օժտված է Ընկերության բաժնետոմսերի և այլ ներդրումային արժեթղթերի տեղաբաշխման և ձեռքբերման (հետ գնման) հետ կապված իրավասություններով, այդ թվում՝ որոշումներ է ընդունում հետևյալ հարցերի վերաբերյալ՝
- ա) Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացում, որի ծավալը չի գերազանցում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 25 տոկոսը,
 - բ) տեղաբաշխել պարտատոմսեր և այլ ներդրումային արժեթղթեր, այն ծավալով, որը չի սահմանափակվում գործող օրենսդրությամբ,
 - գ) հաստատում է արժեթղթերի թողարկման մասին որոշումը, արժեթղթերի ազդագիրը և կատարում է դրանցում փոփոխություններ և լրացումներ,
 - դ) Օրենքով սահմանված դեպքերում սահմանում է արժեթղթերի տեղաբաշխման և ձեռքբերման (հետ գնման) գները,
 - ե) ձեռք բերել Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը մինչև Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակի 10 տոկոսի չափով,
 - զ) Օրենքով սահմանված դեպքերում ձեռք բերել Ընկերության տեղաբաշխված պարտատոմսերը և այլ արժեթղթերը,
 - է) հաստատում է մարման նպատակով բաժնետոմսերի ձեռք բերման արդյունքների հաշվետվությունը և բաժնետոմսերի մարման արդյունքների հաշվետվությունը:
- 12.6. Խորհուրդը հավանություն է տալիս հետևյալ գործարքների կնքման վերաբերյալ.
- ա) Օրենքով սահմանված դեպքերում նախատեսված խոշոր գործարքների կնքման մասին ընդունում է որոշում,
 - բ) Օրենքով սահմանված դեպքերում որոշում է ընդունում կնքել գործարք, որում առկա է շահագրգռվածություն:
- 12.7. Խորհուրդը ընդունում է որոշումներ հետևյալ գործարքների (կամ մի քանի փոխկապակցված գործարքների) կնքման, փոփոխման և լուծման վերաբերյալ՝
- ա) Ընկերության ոչ ստանդարտ գործառնություններ (որոնք նախատեսված չեն ֆինանսատնտեսական պլանով) կամ այն գործարքները, որոնք կհանգեցնեն կամ կարող են հանգեցնել Ընկերության ֆինանսատնտեսական պլանի ճշգրտմանը,
 - բ) Ընկերության հաշվեկշռում հաշվառվող Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի տնօրինման հետ կապված գործարքները,

- գ) այլ կազմակերպությունների բաժնետոմսերով (բաժնեմասերով, փայերով) կատարվող գործարքները,
 - դ) ռազմավարական գործընկերոջ հետ համագործակցության, այդ թվում՝ ցանկացած նախագծում և գործարքում համատեղ մասնակցության վերաբերյալ պայմանագրի, հուշագրի կամ այլ համաձայնագրի կնքումը,
 - ե) տասը միլիոն ՀՀ դրամ և ավելի ծավալի Ընկերության անհատույց գործարքները (այդ թվում՝ բարեգործություն, նվիրատվություն) կամ Ընկերության ոչ առևտրային կազմակերպություններում անդամակցելու նպատակով անդամավճարները (և այլ ծախսերը):
- 12.8. Խորհուրդը հաստատում է Ընկերության հետևյալ ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ դրանցում ցանկացած փոփոխություն և լրացում՝
- ա) ներքին իրավական ակտեր, որոնք սահմանում են Ընկերության զարգացման ռազմավարությունը, խնդիրները և դրանց լուծման ուղիները և սկզբունքները, ինչպես նաև հիմնական ռիսկերը, այդ թվում՝ ռիսկերի կառավարման քաղաքականությունը, վարկային քաղաքականությունը և կորպորատիվ կառավարման քաղաքականությունը,
 - բ) Ընկերության ներքին փաստաթղթեր, որոնք կանոնակարգում են կարևոր նշանակություն ունեցող բիզնես և կառավարչական գործընթացները, ինչպես նաև Խորհրդի իրավասություններին պատկանող հարցերի վերաբերյալ այլ ներքին փաստաթղթեր,
 - գ) Գլխավոր տնօրենի մասին կանոնակարգը,
 - դ) Խորհրդին կից գործող հանձնաժողովների գործունեության մասին կանոնակարգերը,
 - ե) Կորպորատիվ քարտուղարի գործունեության կանոնակարգը,
 - զ) Ընկերության հիմնադրամների մասին կանոնակարգը,
 - է) տարեկան պարզևավճարների (բոնուսների) և օպցիոնների մասին կանոնակարգը,
 - ը) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողության մասին կանոնակարգը:
- 12.9. Խորհուրդը ժողովին տալիս է առաջարկություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝
- ա) Ընկերության ֆինանսական տարվա արդյունքներով շահույթի և վնասների բաշխման կարգի վերաբերյալ,
 - բ) Վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և դրա վճարման կարգի վերաբերյալ,
 - գ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամներին վճարվող պարգևավճարների և փոխհատուցումների չափերի վերաբերյալ:
- 12.10. Խորհուրդը նշանակում է Կորպորատիվ քարտուղարին և Խորհրդի քարտուղարին:
- 12.11. Խորհուրդն ընդունում է որոշումներ այլ հարցերի վերաբերյալ, որոնք համաձայն Օրենքի կամ սույն կանոնադրության պատկանում են Խորհրդի իրավասությանը:
- 12.12. Խորհրդին պատկանող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության Գլխավոր տնօրենի լուծմանը:
- 12.13. Խորհուրդն իրավունք ունի քննարկել Ընկերության գործունեությանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Օրենքով կամ սույն կանոնադրությամբ ժողովի իրավասությանը պատկանող հարցերի:
- 12.14. Խորհրդի ընտրությունները.
- ա) Խորհրդի անդամներն ընտրվում են ժողովի կողմից և նրանց լիազորությունների ժամկետը սահմանվում է մինչև հաջորդ տարեկան ժողովի գումարումը:



- բ) Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը: Խորհրդի անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք:
- գ) Խորհուրդը ընտրվում է կոնուլյատիվ (գումարային) քվեարկությամբ՝ բաղկացած 5 (հինգ) անդամից:
- դ) Այն դեպքում երբ, Խորհրդի անդամների թիվը նվազում է սույն կանոնադրությամբ սահմանված Խորհրդի նիստերի անցկացման քվորումը ապահովելու համար անհրաժեշտ քանակից, Խորհուրդը պարտավոր է որոշում ընդունել արտահերթ ժողով գումարելու մասին՝ Խորհրդի նոր կազմ ընտրելու համար: Խորհրդի գործող անդամներն իրավունք ունեն միայն ընդունել արտահերթ ժողով գումարելու մասին որոշում:

12.15. Խորհրդի նախագահը.

- ա) Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամներից Խորհրդի բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ՝ հաշվի չառնելով Խորհրդից դուրս եկած անդամների ձայները: Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերընտրել Խորհրդի նախագահ:
- բ) Խորհրդի նախագահը կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը, կազմակերպում է նիստերում արձանագրության վարումը, նախագահում է ժողովում և իրականացնում է Ընկերության ներքին իրավական ակտերով այլ լիազորություններ:
- գ) Խորհրդի նախագահի բացակայության դեպքում Խորհրդի նախագահի պարտականությունները կատարում է Խորհրդի որոշմամբ նշանակված Խորհրդի անդամների մեկը:

12.16. Խորհրդի նիստերը.

- ա) Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահն իր նախաձեռնությամբ՝ Խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գլխավոր տնօրենի պահանջով:
- բ) Խորհրդի նիստը քվորում ունի, եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին: Ընդ որում, Խորհրդի նիստին մասնակցած է համարվում այն անդամը (անդամները), որը (որոնք) Խորհրդի նիստին հաղորդակցվել է (են) հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամային ռեժիմում:
- գ) Խորհրդի որոշումները կարող են ընդունվել հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման, ինչպես նաև հեռակա կարգով քվեարկության միջոցով որոշումների ընդունման կարգը սահմանվում է Խորհրդի մասին կանոնակարգով: Հեռակա կարգով քվեարկության միջոցով Խորհրդի նիստերը համարվում են կայացած, եթե հեռակա կարգով քվեարկությանը մասնակցել են Խորհրդի անդամների կեսից ավելին, բացառությամբ այն հարցերի, որոնց վերաբերյալ որոշումների ընդունման համար Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված են այլ պահանջներ:
- դ) Խորհրդի նիստերում որոշումներն ընդունվում են Խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Օրենքով կամ սույն կանոնադրությամբ այլ պահանջներ սահմանված չեն:

Շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշումն ընդունվում է Խորհրդի ոչ շահագրգիռ անդամների ձայների մեծամասնությամբ: Այն դեպքում, երբ Խորհրդի բոլոր անդամները ձանաչվում են շահագրգիռ անձ, ապա գործարքի կնքման հավանության մասին հարցը պետք է ներկայացվի ժողովի քննարկմանը:



Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահին կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի Խորհրդի կողմից միաձայն: Այդ դեպքում Խորհրդի դուրս եկած անդամների ձայները հաշվի չեն առնվում:

ե) Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) արգելվում է:

Խորհրդի անդամների ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

12.17. Խորհրդին կից կարող են ստեղծվել հանձնաժողովներ, որոնց ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է Խորհրդի մասին կանոնակարգով և Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով:

13. ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ

13.1. Գլխավոր տնօրենն իրականացնում է միանձնյա գործադիր մարմնի լիազորությունները և գործում է սույն կանոնադրության և Խորհրդի կողմից հաստատված Գլխավոր տնօրենի մասին կանոնակարգի հիման վրա:

13.2. Գլխավոր տնօրենը հաշվետու է ժողովին և Խորհրդին:

13.3. Գլխավոր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից 3 (երեք) տարի ժամկետով:

ա) Գլխավոր տնօրենն իր պարտականությունները կատարում է մինչև նոր Գլխավոր տնօրեն կամ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով Գլխավոր տնօրենի պաշտոնակատար նշանակելը:

բ) Խորհրդի որոշմամբ կարող է վաղաժամկետ դադարեցվել Գլխավոր տնօրենի լիազորությունները:

13.4. Գլխավոր տնօրենը՝

ա) Ընկերության անունից գործում է առանց լիազորագրի,

բ) ներկայացնում է Ընկերության շահերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և արտասահմանում,

գ) Ընկերության անունից կնքում է գործարքներ՝ Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում,

դ) իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ և տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ե) Ընկերության շահերը ներկայացնելու համար տալիս է լիազորագրեր,

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ,

է) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

ը) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,

թ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարապահական պատասխանատվության միջոցներ:

13.5. Գլխավոր տնօրենը ապահովում է ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:

13.6. Գլխավոր տնօրենի իրավասություններին պատկանում են հետևյալ հարցերը՝

ա) ժողովի և Խորհրդի որոշումներին համապատասխան Ընկերության²⁴⁸ ընթացիկ գործունեության ղեկավարումը,

- բ) տարեկան հաշվետվությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների, այդ թվում՝ շահույթի (վնասի) բաշխման և շահութաբաժինների վճարման հաշվետվությունների կազմման դեկավարումը՝ Խորհրդին ներկայացնելու համար,
 - գ) գործարքների (կամ մի քանի փոխկապակցված գործարքների) կնքման, փոփոխման և լուծման վերաբերյալ որոշումների ընդունումը (այդ թվում՝ բնականոն գործունեության ընթացքում կատարվող գործարքների), բացառությամբ այն գործարքների, որոնք կնքելու որոշումն ընդունելն Օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված է ժողովին կամ Խորհրդին,
 - դ) Ընկերության առևտրային գաղտնիք կազմող կամ ծառայողական տեղեկությունների ցանկի սահմանումը,
 - ե) ներքին հսկողության գործընթացի կազմակերպումը և իրականացումը,
 - զ) Ընկերության անունից բոլոր փաստաթղթերի ստորագրումը, բացառությամբ այն փաստաթղթերի որոնց ստորագրման իրավասությունը սույն կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով վերապահված է Ընկերության պաշտոնատար այլ անձանց,
 - է) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության պլանների մշակումը՝ Խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար,
 - ը) Ընկերության ժողովի և Խորհրդի իրավասությանը չվերապահված Ընկերության ներքին փաստաթղթերի հաստատումը,
 - թ) Օրենքով և սույն կանոնադրությամբ Ընկերության ժողովի և Խորհրդի իրավասությանը չվերապահված այլ հարցերը:
- 13.7. Գլխավոր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները, աշխատավարձի չափը և վճարման ժամկետները սահմանվում են Ընկերության և Գլխավոր տնօրենի միջև կնքվող պայմանագրով, որն Ընկերության անունից ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի կողմից լիազորված անձը:
- 13.8. Գլխավոր տնօրենը պարտավոր է Խորհրդին տեղեկացնել ցանկացած իրադարձության մասին, որն առաջացրել է կամ կարող է առաջացնել.
- ա) Ընկերության կողմից հաստատված զարգացման ռազմավարության փոփոխություն,
 - բ) Ընկերության ֆինանսատնտեսական պլանի կամ ամենամյա ծախսերի նախահաշվի փոփոխություն,
 - գ) Ընկերության արտադրական ցուցանիշների էական փոփոխություն,
 - դ) կազմակերպչական էական փոփոխություններ,
 - ե) ժողովի կամ Խորհրդի որոշումներից էական շեղումներ:
- 13.9. Սույն կանոնադրության 13.8. կետով նախատեսված իրադարձությունների ի հայտ գալու դեպքում Գլխավոր տնօրենը պարտավոր է դիմել՝
- ա) Խորհրդի նախագահին Խորհրդի նիստ գումարելու պահանջով,
 - բ) ներկայացնել Խորհրդի նախագահին իրավիճակի մանրամասն նկարագիրը, Ընկերության կողմից ձեռնարկված միջոցառումները և Խորհրդի քննարկմանը ներկայացնել իր առաջարկները:
- 13.10. Գլխավոր տնօրենը պարտավոր է մասնակցել Խորհրդի նիստերին և Խորհրդի անդամների հարցումներին ներկայացնել Ընկերության գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ տեղեկություններ:



14. ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

14.1. Խորհրդի անդամները և Գլխավոր տնօրենն իրենց պարտականությունները կատարելիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Ընկերությանը:

14.2. Խորհրդի անդամները և Գլխավոր տնօրենը պատասխանատվություն են կրում Ընկերության առջև իրենց մեղքով կատարված գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար, եթե պատասխանատվության այլ հիմքեր և չափեր սահմանված չեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

Խորհրդի անդամները ազատվում են պատասխանատվությունից, եթե դեմ են քվեարկել կամ չեն մասնակցել այն որոշման քվեարկությանը, որի հետևանքով Ընկերությանը վնաս է պատճառվել:

Ընկերությունը կամ Ընկերության քվեարկող տեղաբաշխված բաժնետոմսերի առնվազն մեկ տոկոսի սեփականատեր բաժնետերերը (բաժնետերերը) իրավունք ունի (ունեն) դիմել դատարան՝ ընդդեմ Ընկերության Խորհրդի անդամի, Գլխավոր տնօրենի՝ Ընկերությանը պատճառած վնասների փոխահատուցման հայցով՝ Օրենքով նախատեսված դեպքերում:

14.3. Ընկերությունն իրավունք ունի սեփական միջոցների հաշվին իրականացնել Խորհրդի անդամների, Ընկերության Գլխավոր տնօրենի պատասխանատվության ապահովագրություն:

15. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

15.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացնում է Ընկերության վերստուգող հանձնաժողովը: Վերստուգող հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է Ընկերության Վերստուգող հանձնաժողովի մասին կանոնակարգով, որը հաստատվում է Ընկերության ժողովի կողմից:

15.2. Ընկերության վերստուգող հանձնաժողովը բաղկացած է 3 (երեք) անդամից, որոնք ընտրվում են Ընկերության ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

15.3. Այն դեպքում, երբ Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների թիվը նվազում է երեքից Խորհուրդը պարտավոր է գումարել արտահերթ ժողով՝ վերստուգող հանձնաժողովի ընտրության համար: Վերստուգող հանձնաժողովի մնացած անդամներն իրականացնում են իրենց գործառույթները մինչև Վերստուգող հանձնաժողովի նոր կազմի ընտրությունը:

15.4. Վերստուգող հանձնաժողովի ամբողջ կազմի կամ դրա առանձին անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ժողովի որոշմամբ:

15.5. Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել ինչպես Ընկերության բաժնետերերը, այնպես էլ բաժնետերերի կողմից առաջադրված ցանկացած գործունակ ֆիզիկական անձ: Ընկերության Վերստուգող հանձնաժողովի անդամը չի կարող միաժամանակ լինել Խորհրդի անդամ, ինչպես նաև Ընկերության կառավարման մարմիններում զբաղեցնել այլ պաշտոն:

15.6. Վերստուգող հանձնաժողովի անդամի թեկնածուները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

- ա) ունենան բարձրագույն կրթություն,
- բ) վերջին երեք տարիների ընթացքում Ընկերության կառավարման մարմիններում պաշտոններ զբաղեցրած չլինեն:



- 15.7. Ընկերության ժողովի որոշմամբ Վերստուգող հանձնաժողովի իրավասությունները կարող են դրվել վերստուգողի վրա:
- 15.8. Վերստուգող հանձնաժողովի իրավասությունների մեջ մտնում են.
- ա) Ընկերության ֆինանսական հաշվետվությունների, հաշվապահական փաստաթղթերի, գույքագրման ակտերի (եզրակացությունների) ստուգումը, ինչպես նաև վերը նշված փաստաթղթերի համեմատությունը հաշվապահական հաշվառման առաջնային տվյալների հետ,
 - բ) հաշվապահական, հարկային, կառավարչական և վիճակագրական հաշվառման վարման ճշգրտության և ամբողջականության վերլուծությունը,
 - գ) Խորհրդի կողմից հաստատված ֆինանսատնտեսական պլանների կատարման համապատասխանության ստուգումը,
 - դ) Ընկերության ժողովի կողմից հաստատման ենթակա հաշվետու ֆինանսական տարվա համար Ընկերության շահույթի բաշխման կարգի համապատասխանության ստուգումը,
 - ե) մատակարարներին, պետական բյուջե և արտաբյուջետային հիմնադրամների վճարումների, շահութաբաժինների, պարտատոմսերի տոկոսների և այլ պարտավորությունների մարման ուղղությամբ հաշվարկների և վճարումների ժամանակին կատարման և համապատասխանության ստուգումը,
 - զ) տարեկան հաշվետվություններում, տարեկան ֆինանսական հաշվետվություններում, հարկային, վիճակագրության և այլ պետական մարմիններին ներկայացվող փաստաթղթերում արտացոլված տեղեկությունների արժանահավատության հաստատումը,
 - է) Գլխավոր տնօրենի կողմից կքված պայմանագրերի համապատասխանության ստուգումը,
 - ը) Խորհրդի, Գլխավոր տնօրենի կողմից ընդունված որոշումների՝ սույն կանոնադրությանը և ժողովի որոշումներին համապատասխանության ստուգումը,
 - թ) ժողովի կողմից ընդունված որոշումների՝ Օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխանության վերլուծությունը:
- 15.9. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է Ընկերության տարեկան գործունեության արդյունքներով, ինչպես նաև Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախաձեռնությամբ, ժողովի և Խորհրդի որոշմամբ կամ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետերերի (բաժնետիրոջ) պահանջով:
- 15.10. Ընկերության վերստուգող հանձնաժողովի գրավոր պահանջով 5 օրվա ընթացքում Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:
- 15.11. Ընկերության վերստուգող հանձնաժողովն իրավունք ունի պահանջել Ընկերության արտահերթ ժողովի կամ Խորհրդի նիստի գումարում:
- 15.12. Վերստուգող հանձնաժողովի նիստերի քվորումն ապահովված է, եթե նրան մասնակցում են Վերստուգող հանձնաժողովի անդամներից կեսից ավելին:
- Վերստուգող հանձնաժողովի նիստերը գումարվում են Վերստուգող հանձնաժողովի անդամների համատեղ ներկայության եղանակով՝ նիստի օրնակարգում ընդգրկված հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ համապատասխան որոշումների կայացման համար:

11 02 2020 44



Քվեարկության ժամանակ յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) արգելվում է:

Վերստուգող հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, իսկ եզրակացությունները հաստատվում են նիստին մասնակցող Վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում Վերստուգող հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

15.13. Ընկերությունը ժողովի որոշմամբ կարող է Վերստուգող հանձնաժողովի անդամներին վճարել պարգևավճար կամ փոխհատուցել նրանց գործունեության հետ կապված ծախսերը: Պարգևավճարի կամ ծախսերի փոխհատուցման չափերը, դրանց վճարման կարգը սահմանվում է Ընկերության ժողովի կողմից՝ Խորհրդի եզրակացության հիման վրա:

16. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒԴԱՐԸ

16.1. Կորպորատիվ քարտուղարը նշանակվում է Խորհրդի կողմից:

16.2. Կորպորատիվ քարտուղարն ապահովում է ժողովի նախապատրաստումն ու անցկացումը, Խորհրդի, Խորհրդի հանձնաժողովների աշխատանքը, իրականացնում է Ընկերության վերաբերյալ տեղեկությունների պահպանումը և բացահայտումը, կազմակերպում է Ընկերության և Բաժնետերերի, կառավարման այլ մարմինների և Ընկերության պաշտոնատար անձանց միջև օպերատիվ համագործակցություն, ինչպես նաև իրականացնում է այլ գործառնություններ Կորպորատիվ քարտուղարի մասին կանոնակարգին համապատասխան:

17. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱՂՈՒՄԸ

17.1. Ընկերությունը պարտավոր է բաժնետերերին հնարավորություններ ընձեռել Օրենքով նախատեսված փաստաթղթերին ծանոթանալու համար, բացառությամբ գաղտնի տեղեկությունների:


17.2. Բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը հինգօրյա ժամկետում պարտավոր է նրան տրամադրել Օրենքով սահմանված փաստաթղթերի պատճենները, բացառությամբ գաղտնի տեղեկությունների, ինչպես նաև միանձնյա գործադիր մարմնի հրամանների և հրահանգների: Պատճեններ տրամադրելու համար Ընկերության կողմից գանձվող վճարի չափը սահմանում է Ընկերության կողմից, որը չի կարող գերազանցել դրանց պատրաստման և առաքման ծախսերը:

17.3. Ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալ վերջին տարեկան հաշվետվության և Վերստուգող հանձնաժողովի եզրակացության պատճենները:

18. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

18.1. Ընկերությունը ժողովի որոշմամբ կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:





Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

18.2. Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և առևտրային կոպերատիվի:

18.3. Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ արձանց փոխանցման:

Լուծարման հանձնաժողով կազմելու պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման բոլոր լիազորությունները: Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում՝ լուծարման հանձնաժողովի կազմը) ենթակա են գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում:

18.4. Ընկերությունը, բացառությամբ այլ իրավաբանական անձի միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

Ընկերությունն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս, վերակազմակերպված է համարվում միացող ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

18.5. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:



«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

թիվ 1-2010-10

ք. Ստեփանակերտ

20.08.2010թ.

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-Ի ԿՈՂՄԵՑ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՍՄԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասի «գ» ենտակետը և «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ կանոնադրության 12.5. կետի «ա» ենթակետը և «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհրդի 20.08.2010թ. նիստի թիվ 1-2010 արձանագրությունը, ինչպես նաև ելնելով «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ գործունեության զարգացման անհրաժեշտությունից՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Լրացուցիչ տեղաբաշխել 1.400.000.000 (մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 1.400.000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատ, 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսեր:
2. Հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման պայմանները՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
3. Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում ապահովել բաժնետոմսերի սեփականատերերի նախապատվության իրավունքի կիրառումը՝ Հավելվածով սահմանված պայմաններին համապատասխան:
4. Հանձնարարել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Գլխավոր տնօրենին ապահովել բաժնետոմսերի տեղաբաշխման նախապատրաստական աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի («ԱՐՄՍՎԻՍՔԱՆԿ» ՓԲԸ) հետ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով համապատասխան պայմանագրի կնքումը, բաժնետոմսերի ազդագրի մշակումը և ՀՀ կենտրոնական բանկում օրենքով սահմանված կարգով գրանցումը, տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեղաբաշխմանն առնչվող այլ գործողությունների իրականացումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի օգոստոսի 20-ից:

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝



«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհրդի
20.08.2010թ. թիվ 1-2010-10 որոշմամբ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

1 400 000 000 ՀՀ դրամ անվանական արժեքով 1 400 000 հատ ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման պայմաններ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ն (այսուհետև նաև՝ Ընկերություն) սույնով՝
 - 1.1.1. սահմանում է իր կողմից թողարկվող 1 400 000 000 ՀՀ դրամ անվանական արժեքով 1 400 000 հատ ոչ փաստաթղթային հասարակ բաժնետոմսերի (այսուհետև՝ Բաժնետոմսեր) տեղաբաշխման պայմանները՝ հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի, Ընկերության կանոնադրության պահանջները,
 - 1.1.2. կանոնակարգում է նշված բաժնետոմսերի տեղաբաշխման առնչությամբ առկա փոխհարաբերությունները:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀՄԱՆՆԵՐ

2.1. Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի տեղաբաշխման հիմնական պայմաններն են՝

2.1.1.	Բաժնետոմսերի դասը	Հասարակ անվանական բաժնետոմսեր
2.1.2.	Բաժնետոմսի ձևը	Ոչ փաստաթղթային
2.1.3.	Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի ընդհանուր ծավալը	1 400 000 000 ՀՀ դրամ
2.1.4.	Անվանական արժեքը	1 000 ՀՀ դրամ
2.1.5.	Քանակը	1 400 000 հատ
2.1.6.	Շրջանառության ձևը	ազատ շրջանառության իրավունքով
2.1.7.	Տեղաբաշխողի մասին	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տեղաբաշխման ուղղված հարաբերությունները կկարգավորվեն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի և Ընկերության միջև կնքվող պայմանագրով:
2.1.8.	Վճարման պայմանները (միջոցը և ժամկետները) և կարգը	Տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվում է միայն դրամական եղանակով: Բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ մինչև տեղաբաշխման ավարտի օրը: Վճարումներն ընդունվելու են անկանխիկ ձևով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված ----- բանկային հաշվին միանվագ կերպով փոխանցումների միջոցով: Ֆիզիկական անձինք Բաժնետոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարները Բանկ կարող են միանվագ կերպով մուտքագրել նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրողը բաժնետոմսերի ձեռք բերման հայտին ձեռք բանկ է ներկայացնում նաև անձնագրի պատճենը:

<p>2.1.9.</p>	<p>Բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները և պարտականությունները</p>	<p>Բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերին Օրենքի և Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի.</p> <p>որպես իրավունք</p> <ul style="list-style-type: none"> • մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, • ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերատուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր, • մասնակցել Ընկերության կառավարմանը, ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից, • առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ, • ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ գաղտնի փաստաթղթերի) • Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի, • առաջարկություններով հանդես գալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում, • Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով, • հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներից և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով, • Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը, • օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը • օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից <p>որպես պարտավորություն</p> <ul style="list-style-type: none"> • հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները: • Բաժնետերերը կարող են կրել կանոնադրությամբ նախատեսված և օրենքին ու այլ իրավական ակտերին չհակասող այլ պարտավորություններ: Ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը կարող են չկատարել կանոնադրությամբ սահմանված լրացուցիչ պարտականությունները, եթե նա դեմ է քվեարկել կամ չի մասնակցել տվյալ հարցերով քվեարկությանը:
---------------	--	--

2.1.10.	Բաժնետոմսերի տեղաբաշխման սահմանափակումները	Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերը նախատեսվում է տեղաբաշխել Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի կողմից նախապատվության իրավունքի կիրառմամբ: Բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքի կրառման արդյունքում չտեղաբաշխված բաժնետոմսերի նկատմամբ սահմանափակումներ չկան:
2.1.11.	Միջոցների օգտագործման նպատակը	Ընկերության կողմից կառուցվող նոր ՀԷԿ-երի կառուցման համար կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման, այդ թվում՝ տվյալ ՀԷԿ-երի կառուցման համար կապիտալ շինարարական աշխատանքների ֆինանսավորման համար Ընկերության կողմից օգտագործված փոխառու միջոցների վերաֆինանսավորման նպատակով:
2.1.12.	Բաժնետոմսերի հաշվառման համակարգը	Բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը կիրականացվի ՀԿԳ-ի միջոցով՝ իր կանոններով սահմանված կարգով: Սակայն բաժնետոմսերը կարող են հաշվառվել այլ պահառուի կողմից՝ բաժնետոմսերի սեփականատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

- 2.2. Ընկերությունը բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով նախատեսում է որպես տեղաբաշխող «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ կնքել բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման մասին պայմանագիր: Տեղաբաշխողի վարձատրության չափը կսահմանվի վերջինիս հետ կնքված պայմանագրում և կարող է կախված լինել բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքներից. նախնական համաձայնությամբ այն կկազմի տեղաբաշխման ծավալի 1,5%-ը:
- 2.3. Ընկերությունը բաժնետոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով պետք է կազմակերպի ՀԿԳ-ում բաժնետոմսերի թողարկման հաշվի բացման և այդ հաշվին բաժնետոմսերի փոխանցման աշխատանքները:

3. ԲԱԺՆԵՏՈՍՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընդհանուր դրույթներ

- 3.1. Բաժնետոմսերը տեղաբաշխվում են նախապատվության իրավունքի կիրառման միջոցով, իսկ բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքի կիրառումից հրաժարվելու դեպքում տվյալ բաժնետոմսերը տեղաբաշխվում են ազատ բաժանորդագրության եղանակով:
- 3.2. Բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսում է բաժնետոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 33-երորդ օրը և տևում է 15 աշխատանքային օր: Բաժնետոմսերի ազդագրի գրանցման պահից սկսած՝ Ընկերությունը և/կամ տեղաբաշխողը պարտավոր են բաժնետոմսերի տեղաբաշխման, այդ թվում՝ նախապատվության իրավունքի կիրառման ժամկետների մասին տեղեկատվությունը բացահայտել ամսաթվերի նշագրմամբ:
- 3.3. Տեղաբաշխողը պարտավորություն չի կրում ձեռք բերել տեղաբաշխման ժամկետի ավարտի դրությամբ չտեղաբաշխված արժեթղթերը:
- 3.4. Տեղաբաշխումն օրենքով սահմանված հիմքերով չեղյալ ճանաչվելու դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար վճարված գումարները ներդրողներին ենթակա են վերադարձման տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում (հայտում ներկայացված բանկային ռեկվիզիտներով անկանխիկ եղանակով):
- 3.5. Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում բաժնետոմսեր ձեռք բերող անձը բաժնետոմսերի ձեռք բերմամբ (պայմանագրի կնքմամբ կամ ձեռք բերման հայտի ներկայացմամբ) տալիս է սույն պայմաններն ընդունելու իր համաձայնությունը:
- 3.6. Տեղաբաշխման ընթացքում բաժնետոմսերի փաստացի օտարման կարգը սահմանվում է Ընկերության և Տեղաբաշխողի միջև կնքվող պայմանագրով:

Բաժնետոմսերի տեղաբաշխման գինը

- 3.7. Սույն պայմաններով տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեղաբաշխման գինը (այդ թվում՝ նախապատվության իրավունքի կիրառմամբ բաժնետոմսերի ձեռք բերման դեպքում), ²⁵⁷ հորիզոնող սահմանում է 1110 դրամ:
- 3.8. Տեղաբաշխման գնի մասին տեղեկություններ պետք է ներկայացվեն բաժնետոմսերի ազդագրում և բաժնետոմսերի ազդագրի գրանցումից հետո Ընկերության և/կամ տեղաբաշխողի կողմից հրապարակվող հաղորդագրություններում (բուկլետներում, գովազդային ակցիաներում և այլն),

ինչպես նաև ոչ ուշ, քան բաժնետոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթիվը գնի վերաբերյալ տեղեկություններ պետք է ընդգծված կերպով տեղադրված լինեն Ընկերության ինտերնետային կայքի տնային էջում:

Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի կիրառման պայմաններ

- 3.9. Բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքից կարող են օգտվել 20.08.2010թ. դրությամբ Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք:
- 3.10. Ընկերության կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունքի մասին ծանուցումը սույն պայմանների 3.9. կետում նշված անձանց գրավոր եղանակով կներկայացվի ՀՀ կենտրոնական բանկի կողմից բաժնետոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.11. Ծանուցումը պետք է տեղեկություններ պարունակի՝
- ա) բաժնետոմսերի քանակի մասին.
 - բ) բաժնետոմսերի տեղաբաշխման գնի (այդ թվում՝ բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի համար տեղաբաշխման գնի) մասին.
 - գ) Ընկերության բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքով ձեռքբերվող բաժնետոմսերի քանակի որոշման կարգի, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին:
- 3.12. Բաժնետերն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասանակի ծավալով կիրառել բաժնետոմսեր ձեռք բերելու իր նախապատվության իրավունքը Ընկերությանը գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝
- ա) բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը.
 - բ) ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը.
 - գ) բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:
- 3.13. Սույն պայմանների 3.12. կետով նախատեսված ծանուցումը պետք է Ընկերություն ներկայացվի սույն պայմանների 3.2. կետով սահմանված բաժնետոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվանից առնվազն մեկ օր առաջ: Ծանուցումը նարկայացված է համարվում, եթե այն ներկայացվել է տեղաբաշխողին:
- 3.14. Ընկերության կողմից կարող են սահմանվել սույն պայմանների 3.11. և 3.12. կետերով սահմանված ծանուցումների օրինակելի ձևեր, որոնք պետք է ընդգրկվեն բաժնետոմսերի ազդագրում:
- 3.15. Ընկերության կողմից կարող է չընդունվել սույն պայմանների 3.10. կետով սահմանված ծանուցումը և չբավարարվել նշված ծանուցմամբ գործարքը, եթե ծանուցումը.
- ներկայացված չէ սահմանված ձևին համապատասխան և լրացված է ոչ լիարժեք (այդ թվում՝ բացակայում է բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը),
 - թույլ չի տալիս նույնականացնել բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձին,
 - ներկայացվել է սույն պայմանների 3.13. կետով նախատեսված նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից հետո:
- 3.16. Ծանուցման չընդունման դեպքում բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձի կողմից կարող է ներկայացնել նոր ծանուցում՝ վերացնելով դրանում առկա թերությունները և/կամ բացթողումները (անճշտությունները), իսկ այն անհնար լինելու կամ չիրականացվելու դեպքում բաժնետոմսերի ձեռք բերման համար դրամական միջոցները նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են վերադարձման անկանխիկ եղանակով (հայտի մեջ նշված բանկային ռեկվիզիտներով):
- 3.17. Նախապատվության իրավունքը կիրառվում է համամասնորեն և հասանելիք բաժնետոմսերի քանակը որոշվում է յուրաքանչյուր բաժնետիրոջ պատկանող բաժնետոմսերի քանակից: Եթե նախապատվության իրավունքի կիրառման արդյունքում որևէ բաժնետիրոջ հասանելիք բաժնետոմսերի թիվը ստացվում է կոտորակային թիվ, ապա այն կլորացվում միավորի ճշտությամբ (մինչև 0.5-ը դեպի ներքև, իսկ 0.5 և ավելին դեպի վեր), իսկ եթե մեկից փոքր է ստացվում, ապա նրան տրամադրվում է մեկ բաժնետոմս ձեռք բերելու նախապատվության իրավունք: Ընկերության բաժնետերի կողմից նախապատվության իրավունքից հրաժարվելու մասին բավարար հիմնավորումներ ունենալու դեպքում Ընկերությունը կարող է բոլոր հասանելիք բաժնետոմսերի կոտորակային մասերը կլորացնել ի օգուտ բաժնետիրոջը (այսինքն ցանկացած կոտորակային մասի դիմաց կարող է տրվել մեկ բաժնետոմս):
- 3.18. Երբ ծանուցման մեջ նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է բաժնետոմսերը նախապատվության իրավունքով ձեռք բերող անձին նախապատվության իրավունքի կիրառման շրջանակում հասանելիք բաժնետոմսերի առավելագույն քանակից, ապա այն ենթակա է

բավարարման տվյալ բաժնետիրոջ հասանելիք առավելագույն քանակով, ապա այդ տարբերությունը կարող է բավարարել ազատ բաժանորդագրության ենթակա բաժնետոմսերի հաշվին:

- 3.19. Ընկերությունը պետք է իր ինտերնետային կայքում տեղեկատվություն բացահայտի նախապատվության իրավունքի իրականացման արդյունքների մասին նախապատվության իրավունքի կիրառման ժամկետի ավարտից հետո 3 օրվա ընթացքում:

Բաժնետոմսերի բաժանորդագրության պայմաններ

- 3.20. Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ընթացքում բաժնետոմսերի փաստացի օտարման (բաժնետոմսերի փոխանցման) իրականացման հիմք են հանդիսանում բաժնետոմսեր ձեռք բերող անձի կողմից տեղաբաշխողին ներկայացված բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը և հայտում նախատեսված քանակի բաժնետոմսերի ձեռք բերման համար համապատասխան վճարումը հավաստող փաստաթուղթը:
- 3.21. Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության, բաժանորդագրության հայտերի ձևը, դրանց ընդունումն և բավարարման կարգը սահմանվում է տեղաբաշխողի կողմից:

4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 4.1. Ընկերությունը պարտավոր է ինտերնետային կայքում (www.artsakhpp.com) բաժնետոմսերի հրապարակային առաջարկի, տեղաբաշխման գնի, ժամկետների և կարգի, այդ թվում՝ նախապատվության իրավունքի կիրառման կարգի, նախապատվության իրավունքի կիրառման արդյունքների և բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների մասին, ինչպես նաև սույն պայմաններով սահմանված պահանջվող այլ տեղեկատվություններ բացահայտել:
- 4.2. Ընկերությունը պարտավոր է բաժնետոմսերի ազդագրի գրանցումից հետո եռօրյա ժամկետում իր ինտերնետային կայքում հրապարակել բաժնետոմսերի ազդագիրը և կից փաստաթղթերը՝ ապահովելով արտաքին օգտագործողներին այն բեռնավորելու հնարավորություն:
- 4.3. Ընկերությունը իրավունք ունի սույն պայմանների 4.1. և 4.2. կետերով նախատեսված, ինչպես նաև տեղաբաշխման ընթացքում տեղաբաշխված բաժնետոմսերի քանակի մասին տեղեկությունները բացահայտել այլ զանգվածային լրատվության միջոցներով, բուկլետների, ուղեցույցների, վերլուծական նյութերի պատրաստման և գովազդային հոլովակների միջոցով կամ մասնավոր տրվող հայտարարությունների միջոցով:

5. ԲԱԺՆԵՏՈՍՄԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 5.1. Սույն պայմաններով տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի շրջանառությունը պետք կազմակերպվի Ընկերության նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի հետ միասնական ընդհանուր եղանակով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:
- 5.2. Երկրորդային շուկայում բաժնետոմսերի շրջանառությունը (գործարքների կատարումը) կազմակերպվում է ինչպես «ՆԱՍԴԱԶ ՕԲՄԷ-ԶՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայում՝ վերջինիս կանոններով սահմանված կարգով, այնպես էլ արտաբորսայում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.3. Ընկերությունը բաժնետոմսերի իրացվելիության (գնանշումների կատարման) ապահովման նպատակով կարող է օգտվել շուկա ստեղծողի (մարքեթ մեյքեր) ծառայություններից:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 6.1. Սույն պայմաններով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ, Ընկերության այլ որոշումներով կամ նրա կողմից կնքված պայմանագրերով (որոնց վերաբերյալ տեղեկությունները կներկայացվեն բաժնետոմսերի ազդագրում այնպես, որ ցանկացած ներդրող հնարավորություն կունենա ծանոթանալ և դրանք հաշվի առնել իր ներդրումային որոշման հիմքում):
- 6.2. Սույն պայմանների ընդունման պահից հետո տեղի ունեցող էական հանգամանքներ կամ չքաստեր ի հայտ գալու դեպքում կարող են սույն պայմանների դրույթները կիրառվել մասնակի կամ կիրառվել որոշակի փոփոխություններով, որի մասին բաժնետոմսերի ազդագրում կներառվի այդ էական փաստի կամ հանգամանքի, ինչպես նաև դրույթների կիրառման առանձնահատկությունների մասին մասնաճանաչման տեղեկություններ, եթե այդ դրույթի փոփոխությունը կամ մասնակի կիրառումը չի հանգեցնում օրենքի և այլ իրավական ակտերի, ինչպես նաև Ընկերության կանոնադրության պահանջների խախտմանը:

6.3. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն սույն պայմանները հանդիսանում են Ընկերության ներքին իրավական ակտ:

ՎՃԱՐՄԱՆ ԲԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 10/003 [222344453]

PAYMENT ORDER

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

ՊԿ\ID 91

Ամսաթիվ\Date 01/10/10 11:50

Պեքետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
2500010015780100	900005016119	AMD 50,000.00
[331100]		

Վճարող\Remitter
 «Արցախ ԲԷԿ» ՓԲԸ
 Վճարողի բանկ\Remitter's Bank
 «Արմսվիսբանկ» ՓԲԸ
 Վճարողի ԲԳԲԲ\Remitter's Tax Code 0090025315

Շահառու\Beneficiary
 ԶԶ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓԱՆԾԱՊԵՏԱՐԱՆ
 Շահառուի բանկ\Beneficiary's Bank
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓԱՆԾԱՊԵՏԱՐԱՆ

Գումարը բառերով\Amount in Words

Յիսուս հազար դրամ

Նպատակ\Details

ՊԵՏՈՒՐԷ ազդագրի գրանցման համար

Վճարողի ստորագ.
Remitter's Sign.

Կատարող I ի L ի թ
Maker

